

16654

ԺԱՆ ԴԵ ՄՈՐԳԱՆ

ՓՈՐՁ ԱԶԳՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ա. ՄԱՍ

ԱԶԳՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԸ

Բ. ՄԱՍ

ՀԱՅԵՐԸ

(ՄԷԿ ՀԱՏՈՒԹՅԱՆ ՄԷՋ)

Թ. Ա. Բ. Գ. Մ. Ա. Ն. Ե. Յ.

Յ. ՊԱՐՍԱՄԵԱՆ

Թ. Ի. Տ. Լ. Ի. Ս.

Տպ. „ՍԼՕՎՕ“ Գիտնագիշխական № 1
1917

323.1

Մ-92

0-15

9

9

323.1

Մ-92

26 SEP 2006

15 JAN 2010

ԺԱՆ ԴԸ ՄՈՐԳԱՆ

սե

Կաթիլիկոսի

ՓՈՐՁ ԱԶԳՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ



Ա. ՄԱՍ

ԱԶԳՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԸ

Բ. ՄԱՍ

ՀԱՅԵՐԸ

(ՄԷԿ ՀԱՏՈՐԻ ՄԷՋ)

1005
212637



Թ. Ա. Գ. Մ. Ա. Ն. Ե. Յ.

3. ՊԱՐՍԱՄԵԱՆ

12419

ԹԻՖԼԻՍ

Տպ. „ՍԼՕՎՈ“ Գիմնազիսեկայա № 1

1917

76659

104.07.2013

Թ Ա Ր Գ Մ Ա Ն Զ Ի Ց

Հայկական հարցի շուրջ եւրոպայում վերջերս լոյս տեսած երկերից թարգմանելով Ֆրանսիացի նշանավոր հախոյճ, պատմաբան ու գրագէտ Ժան դը Մորգանի ներկայ գիրքը, մենք նկատի ենք ունեցել գլխավորաբար տալ այն պատկերը, որով ներկայանում է այդ հարցն եւրոպական քաղաքական մտածողութեան առջև՝ մեր ցեղի և երկրի ընկերային, տնտեսական ու քաղաքական տեսլանների հիման վրայ։

Նրա առաւելութիւնն է կազմում այն հանգամանքը, որ սա լուի հայկական ողբերգութեան մի նկարագրութիւնը չէ, կամ մարդասէր հոգիների կարեկցութիւնից բղխած մի գեղօն՝ մեր կործանւած հայրենիքի, յօշոտւած ազգի նշխարների և բեկորների պահպանման ու վերականգնման պրոպագանդին նւիրւած, — ո՛չ, սա մի լուրջ ուսումնասիրութիւն է՝ գիտական հոգի վրայ։

Գրքի Ա. մասը խօսում է ազգութիւնների հարցի մասին՝ ընդհանրապէս, ուր հեղինակն իր տեսակէտներն է պարզում ազգութիւնների ծագման, ազգութեան ներկայ ըմբռնողութեան և նրա ինքնորոշման համար պահանջուող իրաւական-քաղաքական տեսլանների մասին։

Բ. մասը յատկապէս նւիրւած է հայերին, ուր Ժան դը Մորգանը հիմնւելով Ա. մասի գիտական վերլուծութեան նախադրեալների վրայ, մեր պատմական, ինչպէս և տնտեսական ու քաղաքական նորագոյն կեանքի ամփոփ, բայց ամբողջական մէջբերումով հասնում է իր առաջադրած եզրակացութեան — հայերի ինքնորոշման և «Նոր-Հայաստանի» տերրիտորիալ վերականգնման անհրաժեշտութեանը։

Բայց թող հեղինակն չնքն խօսի իր գրքի մասին. «Ես ցոյց եմ տւել, ասում է նա, թէ որոնք են հայերի ակնկալութիւնները, թէ նրանց տենչերն ինչպէս կարող են իրագործւել և որոնք են նրանց տեսլանները՝ ազգային իրաւունքների վերահաստատման խնդրում։ Ես



29263

մատնանշել եմ Հայաստանի քաղաքակրթիչ դերը՝ աւելի քան երկու հազար տարուց ի վեր. խօսել եմ եւրոպական ժողովուրդների հետ նրա ունեցած բնական կապերի, արեւելեան բարբարոսութեան հակապատկերը կազմող նրա ազնիւ հակումների մասին. ես գովել եմ հայերի աւանդապատճ ոգին, ժամանակին մի մեծ ու հզօր ազգի պատկանելու հպարտութիւնը: Յոյց եմ աւել, որ հայ ժողովրդի յոյսերը կարող են բաւարարել: Ես պարզել եմ նոյնպէս, որ մեծ պետութիւններն ինչպիսի առաւելութիւններ ձեռք կը բերեն՝ այդ արդարացի ակտը կատարելով:»

Ժան դը Մորգանն այդ կերպով թարգմանը հանդիսանալով դաշնակիցների հայասէր շրջանների արդէն բաւական որոշ ձեւակերպւած հասարակական կարծիքին, միաժամանակ ջերմ հաւատացող է հայերի վերածնութեանը: Նա այդ հաւատքը հետեւալ կերպով է արտայայտում վերջերս Պարիզում լոյս տեսած «Վերածնունդ» ամսագրի յուլիսի համարում.

«Քսան անգամ ալլափոխւեց երկրի երեսը, բայց հայ ազգը, փինիկ թռչունի նման, ամեն անգամ էլ վերածնւեց իր աճիւնից:»

Պէտք է նկատենք, որ բնագիրը հրատարակել է ռուսական յեղափոխութեան նախօրեակին, առանց նկատի առնելու ներկայ միջազգային քաղաքականութեան այդ խոշոր գործօնի, ինչպէս և պատերազմի յետակայ ընթացքի առաջացնելից հաւանականութիւնները: Բայց նա զծել է այն ուղին, որով ընթանում է հայ դատին համակիր եւրոպական քաղաքական մտածողութիւնը՝ յենւելով մեր երկրի այժմեան իրական պայմանների վրայ:

Յուսանք, որ այս աշխատութիւնը լուրջ ուշադրութեան նիւթ դառնալով կը նպաստէ մեր հարցի շուրջը հայ հասարակական կարծիքի գիտակցական մշակման *):

Օգոստոս, 1917

Յ. Պ.

*) Պարտք ենք համարում մեր ջերմ շնորհակալութիւնը յայտնել պ. Արշակ Զօպանեանին, որ «Հայաստանի» դիմումին վրայ, հեղինակի բարեհաճ թոյլտուութիւնը ստացաւ այս գրքի թարգմանութեան համար:

ՓՈՐՁ ԱԶԳՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ



ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ԱԶԳՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԸ

Բոլոր խնդիրներից, որոնցով իրաւացիօրէն զբաղւում են իմաստասէրները, ամենակարեւորն է անշուշտ ազգութիւնների հարցը՝ այսինքն՝ մարդկային էակների համաչափ խմբաւորման խնդիրը, համաձայն իրենց աւանդութիւնների, ձգտումների, կեանքի իդէալի:

Ընկերային հարցը, որ, մի դարուց աւելի է, այնքան դժարութիւններ է յարուցանում, որ միշտ վերիվայրումներ է առաջացրել պետութիւնների կեանքում, սերտ կապակցութիւն ունի մարդկային գանազան խմբակցութիւնների միջև գոյութեան իրաւունքի բաժանման հետ: Այս հարցն ապահովաբար արդարասէր մարդկանց մէջ իսկ չի գտնիլ բոլոր այն բաւա-

բարութիւնները, որոնք սպասուում են ապագայից, բայց բարեութիւնների լուրջ պատճառներ կը վերացէին, եթէ քաղաքական խմբաւորութիւններն արդարադատութեամբ հաստատէին, և եթէ այդ նոր միջավայրերից իւրաքանչիւրի մէջ ուրիշ բան չմնար, բացի անհատի ճակատագրի մասին հոգ տանելուց. այդ դէպքում՝ դրամագլխի և աշխատանքի, արտադրողի և սպասողի միջև գոյութիւն ունեցող յարաբերութիւնները զարմանալիօրէն կը դիւրացէին՝ հասարակական շահերի ամրապնդումով: Դրանով արդէն մի մեծ քայլ առնւած կը լինէր:

Անտարակոյս խաբուսիկ կը լինի որոշել անհատի գիրքը՝ նախքան ընտանիքի, համայնքի, ազգի գիրքը հաստատելը: Միաւորից մեկնելով չէ, որ կապահովի նրա յարաբերական գիրքը, այլ ընդհանուրից սկսած դէպի մասնաւոր՝ հաշի առնելով միջանկեալ բոլոր հաւաքական շահերը, առանց զանց առնելու մարդկային ամեն մի ընտանիքի համար անհրաժեշտ սա պայմանը, թէ անհատի շահը պէտք է միշտ զիջի զանգրւածի (մասնայի) շահին: Ուստի ամենից առաջ պէտք է զբաղել հաւաքականութեամբ:

Պետութիւնը պէտք է բաղկանայ այնպիսի ժողովուրդներից, որոնք ամենքն էլ միեւնոյն ընդհանուր շահերն ունենան. այլապէս նա կազմալուծման վտանգին կենթարկւի: Անցեալում այդ շահերն իշխողինն էին—Հաբսբուրգեան կայսրութիւնը դրա ժամանակակից ամենաուշագրաւ օրինակն է հանդիսանում— իշխողը ժողովուրդներին ստիպում էր իրեն հնազանդել: Այսօր այլևս այդպէս չէ պետութիւնների մեծագոյն մասում, ուր ազգային շահն է թելադրում վե-

հապետին, թէ ինչ ընթացքի պիտի հետևի նա: Ազգը կարող է միատարր լինել իր բաղկացուցիչ ժողովուրդների տեսակէտից, ինչպէս Հոլլանդիան, Դանիան, Նորւեգիան, Իտալիան, Յունաստանը, Սպանիան, և այլն. և կամ՝ կազմւած կը լինի տարբեր տարրերից, որոնք միացած են պատմական աւանդութիւններով կամ ընդհանուր շահերով, ինչպէս Շւէյցարիա, Բելգիա, Անգլիա, Ֆրանսիա, Ռուսաստան, և այլն: Այս խմբաւորութիւնները շատ յաճախ կազմւել են օտարի յաւակնութիւնների դէմ պաշտպանւելու նպատակով և հետզհետէ առաջացրել են ընդհանուր շահերի միութիւնը. «շահերի միութիւն» ենք ասում, որովհետև բացարձակ միութիւնն այս աշխարհի բան չէ և անօգուտ կը լինէր նրան որոնել:

Բայց ովքե՞ր են այդ տարբեր ժողովուրդները, պետութիւնների այդ բաղկացուցիչ տարրերը, որոնք կազմւում են ազգը, խմբաւորւած շահով և կամ այն պատճառով, որ ժամանակին ինքնակամօրէն միացած են: Ինչպէ՞ս են նրանք կազմւել, խմբւել, ուսկի՞ց են գալիս: Ահա հարցեր, որոնք անհունօրէն բարդ են ամեն մի ժողովրդի համար և յաճախ պատւած անթափանցելի գաղտնիքով:

Շատ ցաւալի է, որ ազգութիւն յորջորջումը, որ մեր օրերում շատ է գործածւում և յաճախ անիրաւացիօրէն, մնում է անորոշ և ներկայացնում է միայն անձգրիտ ըմբռնութենք, որով հիմքերը, որոնց վրայ նա կանգնած է, ինքնին հաստատ չեն, որովհետև շատ են այն գործօնները, որոնց վրայ հաստատւում է նրա կայունութիւնը:

Մեզ յայտնի չէ, թէ մարդն ինչքան հին է երկրի վրայ, իբր կենդանաբանական էակ՝ նրա ծագումը զանազան կրօններում բացատրում է արարչագործութեամբ. նա խորհրդաւոր է մնում նոյնպէս բնական աստիճանական զարգացման տեսակէտով. նոյնքան սահմանափակ ծանօթութիւն ունինք և ժողովուրդների ծագման մասին: Նրանցից շատերի զարգացման միայն վերջին շրջաններին տեղեակ ենք, և հենց որ փորձենք թափանցել նրանց մանկութեան գաղտնիքների խորքը, քանի հեռու գնանք՝ մեր աչքերն այնքան աւելի կը բաղխին թանձր մշուշների, և շուտով գիշերային խաւարը կը տիրէ այնտեղ՝ իր մթութեանը մէջ շփոթելով մարդկային բոլոր ցեղերը: Թւում է, թէ մոռացութեան գերբնական ոյժը մեզ արգելում է հասնել մինչև նրանց ծագումը:

Մեր ճանաչողութեան մատչելի այդ սահմանը նոյնը չէ բոլոր ժողովուրդների համար. այդ սահմանը գծւած է ընդհանուր ժամանակագրութեան մէջ ցանցուած կէտերով՝ նշանակելով այն ժամանակաշրջանը, ուր իւրաքանչիւր ժողովրդի համար սկսում է տառերի գործածութիւնը, այն դարաշրջանը, երբ ամեն մի ազգի մէջ մարդը գտել է իր և իր ժամանակակիցների գործերի յիշատակը յաջորդներին փոխանցելու միջոցը: Դրանից դէնք սկսում են գաղտնիքները նախապատմական շրջանի՝ իր անյայտ տեղութեամբ և անորոշ անհունութեամբ:

Ըստ երևոյթին, քաղաքակրթութեան հայրերն են քաղաքացիներն ու եգիպտացիները, որովհետեւ սը-

րանք են, որ, համաձայն մեր ունեցած ծանօթութիւնների, առաջինը գործածել են տառեր: Մարդ արարածը չէ կարողացել բարձրանալ մշակոյթի համեմատաբար ցած աստիճանից՝ առանց իր մտածումը մարմնացնելու միջոցն ունենալու: Դրնու վիտութիւնը հետզհետէ տարածւեց ամբողջ աշխարհի վրայ՝ իր հետ տանելով և իր պտուղները: Փիւնիկէն, Յունաստանը, Իտալիան, Հնդկաստանը հետզհետէ երևան հանեցին իրենց հանճարը և այսօր միայն քաղաքակրթապէս ցած ու ապագայ չունեցող ցեղերն են, որ տակաւին հնարաւորութիւն չունին կազմել իրենց տարեգրութիւնները:

Բայց ինչ է մի ժողովրդի պատմութեան տեղութիւնը՝ նրա իսկական կեանքի տեղութեան քաղաքատմաբ: Սա մի այնպիսի գաղտնիք է, որ շուտով, կամ գուցէ և երբէք չի լուսաբանուի: Մարդկային բոլոր խմբաւորութիւններն որոշում են կամ որոշելու վերայ են, երբ վայելում են գրելու բարիքները: Ո՞վ կարող է մեզ մի բան ասել այդ ժամանակից առաջ նրանց գոյութեան մասին: Ո՞վ երբ և է կը կարողանայ մեզ խօսել նրանց նախապատմական տեղափոխութիւնների մասին, այն ազգերի մասին, որոնց նրանք տապալած, ձուլած, աւերած կը լինեն՝ իրենց այժմեան բնակավայրում հաստատուելու համար:

Արաքներին շատ քիչ ենք ճանաչում հիշրէթից առաջ. միայն մահմեդական աշխարհակալութիւններից յետոյ, երբ նրանց անապատաւնակ ցեղերը հաստատուեցին քաղաքներում, նրանք սկսեցին իրենց գրականութիւնը: Թափառաշրջիկ եղած ժամանակը նրանք կարիք չէին դրում գրելու: Մինչև հիմա էլ չգիտենք

նրանց կեանքի բոլոր շրջանները՝ նախքան այդ դա-
րագլուխը, որ շատ մօտ է մեզ։ Նոյնքան քիչ ծանո-
թութիւն ունինք թիւրքերի, սկիւթացիների մասին,
որոնց դերը շատ մեծ է կղել հին դարերում։

Պատմական ժամանակներում շատ ժողովուրդներ
են անհետացել՝ առանց իմացելու, թէ ի՞նչ եղան-
քով են յաջորդները հաղեանների, փոխգիացիների,
սւրարտացիների, հորուսկեանների և ուրիշ շատերի,
որոնց ցուցակն անգիր կը լինէր, եթէ փորձէինք
կազմել։ Նրանք ձուլւեցին իրենց հարեանների կամ
իշխողների զանգածում, ինչպէս այսօր Նոր-Աշխարհի
բնիկները ջնջւում են հիւսիսային ամերիկացիների և
սպանիացիների ծաւալումով։

Ամենալաւ կերպով ճանաչած ժողովուրդների
ծննդեան, զարգացման և մահան մասին,—այն կարճ
ժամանակաշրջանում, որից մեզ մնացել են նրանց
տարեգրութիւնները, այսինքն՝ ամենաշատը 5 կամ 6
հազար տարի,—պատմութեան ուղիորդացած քիչ բանը
մեր երեւակայութեանը թոյլ է տալիս յետ գնալ դա-
րերի հոսանքով և ընդնշմարել նրանց անդադրում
շարժումները, յարատե կռիւները, որոնց վերջին ար-
ձագանքներն են միայն հասնում մեզ, և այդ ծանո-
թութիւնները մտածել են տալիս, որ այն ժամանակ-
ներում, որոնց մասին բացարձակապէս ոչինչ չգիտենք,
անհունօրէն բարդ խառնուրդներ են տեղի ունեցել։

Ազգ, ժողովուրդ, ցեղ — սրանք արտայայտութիւն-
ներ են, որ ամեն օր գործածում ենք, և սակայն դը-
րանք մեր մտքում պատկերանում են միայն շատ
տարտամ նշանակութեամբ։ Բայց ի՞նչ բառերով կա-
րելի էր նրանց փոխարինել։

Հնրի աչքում՝ ժողովուրդը, ազգն անձնաւոր-
ւում էին շատ յաճախ մի խումբ մարդկանցով, որոնք
ենթարկւած են միեւնոյն կառավարութեան, միեւնոյն
տիրոջ։ Իսկ ցեղը հասկացւում էր որպէս միեւնոյն լե-
զուն խօսող մարդկանց ամբողջութիւնը։ Բայց այդ
յորջորջումները միայն յարաբերական նշանակութիւն
ունէին, որովհետեւ, ինչպէս մեր օրերումն էլ, ազգերն
աշտանակում էին ցեղերի վրայ։ Փարսեանի բոլոր հը-
պատակները, բոլոր եգիպտացիները Նեղոսի գետա-
հովտի գաւակները չէին։ Սենեքերիմի և Սարգանա-
պալի բոլոր զինուորները Նինւեում և Կամբիւսի բոլոր
զինուորներն Իրանում չէին ծնւած։ Հերոդոտը նկա-
րագրելով Քսերքսէսի բանակը՝ տալիս է նրան մա-
րերի անունը, որոնց նա շփոթում է պարսիկների
հետ, և մեզ մատնանշում է Առաջաւոր Սսիայի բոլոր
ժողովուրդներին՝ սեմիտականներին, իրանականնե-
րին, հելլէններին, սկիւթացիներին խառնւած միեւնոյն
յորջորջման մէջ։ Եղթւած, հպատակեցւած ժողովուրդ-
ները կորցնում էին իրենց ազգային ամբողջութիւնը,
թէև երկար դարերով դեռ պահւում էին իրենց լեզուն
ու տենչերը։

Այսօր Հաբսբուրգեան բանակում կան բուն ա-
ւստրիացիներ, հունգարացիներ, չեխեր, մորաւներ,
լեհեր, բոսնիացիներ, իտալացիներ, իսկ ուսսական զօ-
րագունդերը պատկանում են հարիւրաւոր տարբեր
ժողովուրդներին՝ «ոռու» ընդհանուր անուն տակ։

Դա պետութեան հին ըմբռնութիւն է, որ իր ար-
ժէքաւորման գաղաթնակէտին հասաւ հռովմէական
կայսրութեան օրով — մի ինքնասէր քաղաքական կազ-
մակերպութիւն, որ դէմ էր ամեն ազգայնական դա-

դափարի, արհամարհոտ դէպի թոյլը, տիրական, համարեա ստրկացնող՝ զէնքով կամ դիւանագիտական ճարպիկութեամբ տիրապետած ժողովուրդների հանդէպ:

Բայց ինչպէս սահմանել ազգութիւնը, որպէսզի կարելի լինի նրան տալ իր բոլոր իրաւունքները: Մարդաբանական տեսակէտով նա գոյութիւն չունի, որովհետեւ այդ գիտութիւնը, որի վրայ այնքան մեծ յոյսեր էին դրւած, դեռ եւ չէ կարողացած դասաւորել մարդկութիւնը, թէկուզ տարտամօրէն որոշած կատեգորիաների վերածել նրան: Նա ասում է, թէ մենք (ֆրանսիացիները) ազգակից ենք սիմիէսկներին (simiesque), բայց մեզ չի օգնում կանոնաւորելու մեր գոյութիւնը՝ իրարից զատելով այն ժողովուրդներին, որոնք չպէտք է միացած լինեն: Ուստի մարդաբանութիւնը շատ միջակ կարեւորութիւն ունեցող մի արդիւնք է տւել:

Եթէ արտայայտւելու ձևում հետեւինք ընդհանուր սովորութեան, եթէ մեր գործածած բառերին տանք միայն իրենց ընթացիկ արժէքը, առանց գիտական քիչ թէ շատ արգարացի ճշգրտումների մէջ մտնելու, կարող ենք ասել, որ այն անկանոնութեան, որի մէջ ապրում է մարդկութիւնը, պատճառն է ցեղերի իրարու հետ չափազանց խառնւած լինելը. որ ազգը, ինչպէս որ ըմբռնում ենք նրան քաղաքական տեսակէտով, կազմւած է բազմաթիւ տարբեր խաւերից, և որ այդ հիւսւածքի միջև, շրջապատի և բնավայրի ազդեցութեամբ, շատ դէպքերում անհետացած են այն ձեւերը, որոնց վրայ մարդաբանութիւնը յոյս ունէր յեն.

ւել, և որոնք բոլոր պարագաներումն էլ խաբուսիկ են:

Կենդանիների, ինչպէս և բոյսերի մէջ շրջապատն ու միջավայրը շատ մեծ, երբեմն էլ զերակշիռ դեր են կատարում ձևերի դարգացման խնդրում: Բոլոր բնապաշտները համաձայն են այս կէտում: Մարդու մասին էլ համանման դիտողութիւններ կարելի է անել. բայց քանի որ մենք շատ քիչ փաստական տւեալներ ունենք մարդկութեան նախատիպի վերաբերեալ, որովհետեւ կենդանաբանական այս դասակարգում իրարից շատ հեռու նախադրեալներ միայն ունենք, շատ դժւար է եզրակացութիւններ հանել հին ժամանակների մասին, և այժմեան մարդու նկատմամբ մեր դիտողութիւնները կարող են լինել միայն շատ կարճատեւ մի ժամանակաշրջանի վրայ. բայց և այնպէս շրջապատի ազդեցութիւնը խիստ յստակօրէն է երևան գալիս շատ դէպքերում: Ես կը յիշեմ, ի միջի այլոց, օսեթին ժողովուրդը, որ բնակւում է կովկասեան մեծ լեռնաշղթայի կենտրոնում և խօսում է իրանական մի բարբառ: Նրա ֆիզիքական տիպը փոխւած է՝ հազարաւոր տարիներ ապրելով՝ քարթւեկական ցեղի մարդկանց միջև, և թէ ամուսնութիւններով, թէ շրջապատի ազդեցութեամբ ստացել է կովկասեանների մարդաբանական բնոյթագծերը:

Ինչպէս կարծում են կանխակալ գաղափարներով համակւած մի քանի հեղինակներ, չէ կարելի ընդունել, որ ձևափոխութիւնը կատարւած լինի լեզւի, այլ ոչ թէ ֆիզիքական տիպի մէջ, որովհետեւ օսեթիները հեռացած լինելով ամբողջ իրանական ժողովրդից, ոչ մի պատճառ չունէին լքելու բարբառը, քանի որ ապրում էին քարթւեկական լեզւի միջավայրում:

Այդքան երկար ժամանակամիջոցում լեզւի այդպիսի մնայունութեան պատահում ենք ամենից աւելի լիւնագաւառներում, ուր խառնուրդներն աւելի դժար են կատարւում, քան դաշտավայրերում: Դրա աչքառու օրինակն են հանդիսանում ի միջի այլոց Բասկեան երկիրները: Գալով այն ժողովուրդներին, որոնց հայրենիքն աւելի դիւրամատչելի է մեր դիտողութեան, պատմութիւնը սովորեցնում է, թէ բոլոր նրանք, որոնց այսօր նկատում ենք քաղաքական, նոյնիսկ ազգային միութիւն կազմած վիճակում, բաղկացած են բազմաթիւ տարրեր, յաճախ խիստ այլասեռ տարրերից:

Օրինակ, իտալացին իր երակների մէջ ունի հռովմէական կայսրութեան մէջ բնակւող բոլոր ցեղերի արիւնը, մասնաւորապէս այն ժողովուրդների, որոնք նպաստեցին Իտալիայի կազմութեան և կամ տիրեցին նրան: Յոյները (դորիացիներ, յոնիացիներ, կրետացիներ, և այլն) ետրուսկեանների, եւնոտրեանների, գալլերի, փիւնիկեցիների, պելասգոսների և ուրիշ շատ հին ժողովուրդների հետ կազմեցին մի հիմք, որի վրայ եկան պատւաստւել գերմանները (գոթները, վանդալները), Ֆրանսիացիները, նորմանները, սլաւոնացիները, չերոգորիացիները, արաբները և այլն, առանց հաշւելու դարաւոր ստրկութեան, գաւառներից եկած լեզուների առաջացրած զանգւածները, առանց խօսելու նաև նախադատական ժամանակի մարդկանց մասին: Բոլոր այդ տարրերը բաղադրւեցին, ձուլւեցին զանազան համեմատութիւններով՝ շատ բազադրութիւններին տալով առանձին շրջանի բնոյթ, որ առաջանում էր այս կամ այն բնիկ տարրի գերա-

կշռութիւնից. դրանց ամբողջութիւնը կազմում է այսօրւայ իտալացուն:

Ֆրանսիացին, որին հանդիպում ենք Պարիզի փողոցներում, նոյնպէս խառնուրդ է բազմաթիւ ժողովուրդների, մասնաւորաբար կելտերի, լիգուրեանների, իրերացիների, իտալացիների, սլաւոնացիների, բասկերի, բրետոնների, անգլիացիների, լատինների, գերմանների, սկանտինաւեանների (northmans), զանազան գաւառներում մէկ կամ մի քանի տարրերի գերակշռութեամբ միւսների վրայ:

Հիւսիսային Գերմանիայում կան սկանտինաւեաններ, սլաւոններ, հրէաներ. Անգլիայում՝ բրետոններ, անգլներ, սաքսոններ, Ֆրանսիացիներ, իրլանդիացիներ, սկոտիացիներ, նորմաններ, առանց հաշւելու հռովմէական տիրապետութիւնից առաջ այնտեղ ապրող ժողովուրդների և անգլիական հսկայական զաղութներում ամեն օր տեղի ունեցող խառնուրդները:

Միենոյն արդիւնքը կը տար ոչ միայն եւրոպական, այլ և աշխարհի բոլոր մասերի տարրեր ցեղերի քննութիւնը. այսուամենայնիւ՝ այն դիտողութիւնների համաձայն, որոնց վրայ կարող ենք յենել, նորակազմ պետութիւնների մէջ է, որ նկատում ենք ամենամեծ խառնուրդը, օրինակ՝ Թիւրքիան *) և Հիւ-

*) Անկարելի է ճշգրիտ վիճակագրութիւն կազմել օսմանեան լծի տակ գտնւող ժողովուրդների բնոյթի մասին, որովհետեւ թուրքերը անբաւարար և անբաւական նպատակներով յաճախ չափազանց խառնուրդ ցեղակազմութիւն ունեն: Սակայն ինչ-ինչ շրջանների համար կարելի է մօտաւոր թելադրել ներկայ գրքի պէս մի բնութագրութեան մէջ, ոչ թէ

սխալյին Ամերիկայի Միացեալ-Նահանգները: Առաջինը հիմնած է աշխարհակալութեամբ և քոնի ոյժով ձու-
ղելով յաղթած ժողովուրդներին, որոնք արդէն այն-
քան մահացու հարւածներ էին ստացած ասորական
գերակայութիւնից, պարսիկների և յոյների տիրապե-
տութիւններից բիւզանդական բեժիմից և արաբական
իշխանութիւնից. երկրորդը հիմնած է զաղթականու-
թեամբ, նախկին ժողովուրդն անհետացնելով և նրան
փոխարինելով զաղթականներով, ինչ ծագումից էլ որ
լինէին:

Առաջին դէպքում թուրքերէնը դարձաւ ընդհա-
նուր գործածական լեզուն, որովհետեւ իշխողների լե-
զուն էր: Երկրորդ դէպքում անգլիիներէնն իշխեց՝ իբր

հանտատելու համար, թէ այս կամ այն դաւաճը պէտք է պատ-
կանի այս կամ այն ազգութեան, ալլ պարզապէս ցոյց տալու հա-
մար, թէ Առաջաւոր Ասիայի մի քանի մասերում ինչքան մեծ է
ցեղերի խառնուրդը.

Շրջան Ա. Հայաստանում, 100 հոգուց

Հայեր	46,70 %
Քիւրտեր	35,40 »
Թիւրքեր	10,20 »
Յոյներ	3,30 »
Ձանաղան	4,40 »

Մահմեդականներ	45,60 »
Քրիստոնեաներ	50,00 »

Մի ուրիշ տեղ, Շրջան Բ. դարձեալ Հայաստանում.

Հայեր	18,20 %
Քիւրտեր	70,30 »
Թիւրքեր	3,10 »
Ձանաղան	8,40 »

Մահմեդականներ	73,40 »
Քրիստոնեաներ	18,20 »

այդ եւրոպական գաղթավայրի սկզբնական միջուկի
խօսած բարբառը: Վաշինգտոնն ամերիկացի դաւնա-
լուց առաջ անգլիացի սպայ էր:

Հետաքրքրական է միջանկեալ յիշել և Կովկասը,
այդ բնական պատնէշը, որ բազմահազար տարիների
ընթացքում պատուար է ծառայել նստակեաց Ասիային՝
թափառաշրջիկ Եւրոպայի դէմ: Կարող էր թաւալ, թէ
այդ լեռնաշղթայից անցնել փորձող բոլոր ժողովուրդ-
ներն իրենց հետքերը թողած կը լինեն քարթւելական
հին ժողովուրդների միջև. որովհետեւ այդ լեռներում
խօսում են հարիւր քսան տարբեր լեզուներ, որոնց
կէսը Դաղստանում, Դերբենտի նշանաւոր կիրճի մօտ
— միակ ձեղքը, որտեղից կարող են կատարուել ներ-
խուժումները: Այդտեղ ամեն մի ձոր պարունակում է
առնւազն մի ցեղ, բոլորովին տարբեր իր հարեաննե-
րից թէ բարբերով և թէ բարբառով, և անշուշտ նաեւ
ծագումով: Մի քանի տարիների, մի քանի դարերի
ընթացքում գուցէ կորչի այդ բարբառների մեծագոյն
մասը՝ տեղի տալով ռուսներէնին: Մեծ զարմանք կը

իսկապէս տեսնուի էք, առաջին շրջանում քրիստոնեաները
մեծամասնութիւն են կազմում, իսկ երկրորդում՝ մահմեդական-
ները:

Շրջան Գ. Հիւսիս-արեւմտեան Հայաստանում.

	Դիւզերում	Քաղաքներում	Ընդհ. միջին
Հայեր	48,10 %	32,15 %	40,12 %
Թիւրքեր	26,20 »	41,50 »	33,85 »
Լազեր	5,30 »	0,25 »	2,77 »
Հրէաներ	—	4,10 »	4,10 »
Յոյներ	20,30 »	14,20 »	18,35 »
Ձանաղան	0,10 »	5,80 »	2,95 »
Մահմեդականներ	31,50 »	41,75 »	36,62 »
Քրիստոնեաներ	68,40 »	48,35 »	53,37 »

պատճառէր այսօր իսկ այն մարդաբանը, որ փարատէր այս քառսի մշուշը՝ զանց առնելով լեզւարանութեան օժանդակութիւնը:

Եթէ մարդաբանութիւնը վրիպել է ժողովուրդները դասակարգելու հարցում, դրա պատճառն այն է, որ ի դուր յենում է միայն ֆիզիքական տեւալների վրայ, քանի որ ֆիզիքականի բնոյթագծերը, որոնք այսօր անճանաչելի են, զուցէ միշտ էլ անճանաչելի են եղել: Դիտողութեան գիտութիւնը կարող է գնահատելի արդիւնքներ տալ միայն այն ժամանակ, երբ յենել ստոյգ յատկութիւնների վրայ, որոնց կարելի լինի վերլուծել կատարեալ վստահութեամբ և մեկնաբանել անվիճելի կերպով: Արդ, մարդաբանութիւնն

այդպէս չէ: Այս գիտութիւնն իբր սկզբունք ընդունում է, որ ձեւերի տարբերութիւններն առաջանում են ժառանգականութիւնից (ատաւիգմից), մինչ նրանք գուցէ հետեւանքն են միջավայրի ազդեցութիւնների կամ մի բոլորովին այլ բանի, որ անըմբռնելի է մեզ համար: Գիտութիւնն իր բոլոր ճիւղերի մէջ մի դարուց ի վեր անում է այնպիսի գիւտեր, որոնք տալովում են մեր հայրերի կարծիքները. ինչհիւ ուրեմն ենթադրել, որ նոյնը չէ կարող պատահել կենդանաբանական ձևփոխման կանոնների հետ, երբ բնութիւնը կառավարող օրէնքները մեծ մասամբ դեռ անծանօթ են մնում մեզ:

Մարդաբանութիւնը շատ այլամերժ է. նա արհամարանքով հրաժարւեց օժանդակութիւնից այն գիտութիւնների, որոնց աշակցութիւնն օգտակար կը լինէր նրա համար, ի միջի այլոց լեզւի ուսումնասիրութեան, որ է և կը մնայ միշտ լաւագոյն ուղեցոյցը մարդկային սեռի դասաւորման համար:

Լեզւաբանութիւնը վերլուծելով զանազան բարբառները՝ խորապէս կը թափանցէ իր ուսումնասիրութեան ենթակայ ժողովուրդների հոգու, այն աւանդական հատկանքների մէջ, որոնք մնում են մարդկանց կողմից իրարու և կամ բնութեան կողմից մարդկանց հասցւած յեղաշրջումների մեծ մասի միջով անցնելով:

Իւրաքանչիւր ժողովրդի լեզուն յարմարւում է նոյն ժողովրդին, որովհետեւ թարգմանն է հանդիսանում նրա մտածելակերպի, զգացումների, որովհետեւ բարբառը կաղապարւած է ազգային նկարագրի վրայ, ձեւափոխւած է նրա հետ միասին, ամեն բոլոր հստակից է եղած հասարակական հոգու մէջ տեղի ունե-

Բյուր, Շրջան Գ., նոյն տեղում.

	Գիւղերում	Քաղաքներում	Ընդհ. միջին
Հայեր	11,60 %	32,30 %	21,85 %
Թիւրքեր	58,10 »	28,50 »	43,30 »
Հրէաներ	—	8,10 »	8,10 »
Յոյներ	20,40 »	19,60 »	20,00 »
Լազեր	9,90 »	—	9,90 »
Ձանազան	—	11,50 »	11,50 »
Մանկականներ	68,00 »	28,50 »	53,20 »
Քրիստոնեաներ	32,00 »	51,90 »	41,80 »

Այս թւանշաններն իմ ճանապարհորդութեան նօթերի համառոտագրութիւններն են և չեն կարող նկատուել իբր բացարձակապէս ճիշտ: Նրանք մօտաւոր թւեր էին իմ կազմած ժամանակ, և այսօր անտարակոյս անճիշտ են: Բայց դրանք ցոյց են տալիս, որ Ա. և Գ. շրջանները հայկական են, Բ. շրջանը քրդական և Դ. շրջանը թիւրքական: Նրանք ցոյց են տալիս նաև, որ Գ. շրջանի գիւղերում և քաղաքներում հայ տարւն է գերակշռում, իսկ Դ. շրջանում հայ ժողովուրդը գաղութների ձեռք է հաստատւած քաղաքներում, մինչ դաշտը թիւրքական է: Ծ. Հ.

ցած փոփոխութիւններին, ծառայած է այդ ժողովրդին:

Բոլոր լեզուները, ինչպէս մեր, նոյնպէս բարբա-
րոս ժողովուրդներինը, ենթարկւում են շարունակա-
կան կերպարանափոխութիւնների, որովհետեւ իրար յա-
ջորդող սերունդներն իրարից տարբերւում են իրենց
կարիքներով, իրենց արտաքին յարաբերութիւններով,
կեանքի նկատմամբ իրենց ըմբռնումով: Այսօր ոչ մի
Ֆրանսիացի չի մտածել վերաբնակչու զը ժանւիլի
կամ Ռաբլէի խօսած Ֆրանսերէնը, և 16-րդ ու 17-րդ
դարերու գեղեցիկ լեզուն ներկայումս միայն գրական-
նաղէտներն են հասկանում իր բոլոր նրբութիւններով:

Ինչպէս որ լեզուն չէ կարող յետագարձ ընթացք
ստանալ դէպի անցած դարերը, նոյնպէս նա միայն
հարեանցիօրէն է փոխանցւում մի ցեղից միւսը, և
փոխադրւելով այլու՝ նա ոչ երբէք իր հետ չէ տա-
նում իր բոլոր պտուղները: Օտար երկրում ծնւած
մարդու համար նոր երկրի լեզուն մնում է միշտ մի
օտար բարբառ:

Օրինակ, Ֆրանսահայտակ գերմանացի, խօսում
է Ֆրանսերէն, բայց խորհում է իր տեսողական մտայ-
նութեամբ, և ակամայ՝ իր երեխաներին դաստիարա-
կում է իր իսկ ունեցած գգացումներով: Շատ սե-
րունդներ են հարկաւոր ջնջելու համար հարազատ
մշակոյթը, որպէսզի հոգին հնարաւորութիւն ստա-
նայ իւրացնելու մի այլ ցեղի բարոյական ու իմացա-
կան բոլոր նրբերանգները, որպէս զի մտայնութիւնն
ամէն տեսակէտով նոյնանայ նոր հայրենիքի հին բը-
նակչի մտայնութեան հետ:

Բանն այն է, որ այդ իւրացումը կախում ունի
մի շարք ժառանգական պատճառներից՝ բնախօսական,

բարոյական ու իմացական: Բոլոր էթնոսները, չունեն
ուղեգրային միևնոյն գործունէութիւնը՝ ֆիզիքական
միևնոյն կազմը. ամեն ցեղ ունի իր ֆիզիքական
ներն ու թերութիւնները, որոնք առաջ կանգնա-
նափով բնական են: Այս ճշմարտութիւնը, որ բնա-
պաշտներն ընդունում են կենդանիների հետ-
ատում են անասնաբոյժերը, թէ արիւնախառնու-
մից շատ ժամանակ անցած դեռ երևում են բնիկ ա-
րեան յատկութիւնները, մինչ արտաքին բնորոշ գծերը
համարեա ամբողջովին ջնջւած են լինում: Նոյնն է և
մարդկանց համար. բայց այս դէպքում բնական ար-
գելքներին դալիս են միանալու և ուրիշ խոչընդոտ-
ների ձուլման առաջ—ընտանեկան աւանդութիւնները,
որոնք յաճախ հակառակն են լինում նոր միջավայրի
աւանդութիւնների, վերջապէս՝ և կրօնական համո-
զումները, որոնք շատ անգամ թշնամական են լինում
այն ժողովրդի կրօնական համոզումներին, որի մօտ
հաստատուել է նորեկը:

Այս տարբեր բնոյթագծերը, որոնք աւելի միա-
յուն են, քան լեզուն ու շեշտը, երբեմն ամբողջ սե-
րունդների ընթացքում յարատուում են և այնպէս են
անում, որ գաղթողի սերունդը դեռ երկար ժամանակ
օտար է մնում այն ժողովրդին, որի ազգութիւնն ունի
նա այժմ ամենքի աչքին:

Լեզւաբանութեան անհերքելի առաւելութիւնների
վրայ յենւելով է, որ պատմագիտներն ու աշխարհա-
գիտները նրանով են առաջնորդւում մարդկային խըմ-
բերը դասաւորելու համար: Անտարակոյս, այդ ուղե-
ցոյցը թերի է, որովհետեւ նա զանց է առնում սեփա-
կան լեզուն կորցրած բաղմաթիւ ժողովուրդների պո-

յութիւնը. բայց նա ամենաօգտակար ծանօթութիւններն է տալիս՝ ժողովուրդներէ հոգեկան տարբերութիւնների և ազգակցութիւնների մասին:

Հին պրոսօփացիները սլաւոններ էին, և ոչ թէ գերմաններ. նրանց լեզուն մի քանի դար առաջ կուրաւ, և նրանք իւրացրին գերմաներէնը: Պատճառն այն է, որ ենթարկելով տկտոններին, խառնելով նրանց հետ, նրանք հետզհետէ լքեցին իրենց նախնիքների սովորոյթները՝ երևութապէս ձուլւելու համար գերման ցեղի հետ: Բայց ձուլումը սերտ չէր. նրանք պահեցին 5 կամ 6 հարիւր տարի առաջւայ սլաւոն հակումները՝ առանց նրանց բարեւաւելու իրենց իսկական ցեղակիցների հետ շփումով, առանց հետեւելու Ռուսաստանի, Լեհաստանի և Բոհեմիայի իրենց եղբայրների յառաջադիմութեանը պահելով այն ժամանակւայ կոպտութիւնը, երբ նրանք հրաժարւեցին իրենց ազգութիւնից: Նրանք հետզհետէ մեծ ազդեցութիւն ձեռք բերին ամբողջ Գերմանիայում, իրենց բարբառոսական վաղեմի բնազդները զարգացրին իշխողների մօտ—մի միջավայրում, որ շատ նպաստաւոր էր կոպտութեան համար: Միթէ Գերմանիան իր ոճիւրներով մարդկութեան արհամարհանքը կը հրաւիրէր, եթէ օտարականներ չառաջնորդէին նրան զէպի վայրագութեան իդէալը: Պէտք է կարծել, որ ոչ, եթէ հաշի առնենք բազմաթիւ գերմանացիների գրական ու փիլիսոփայական ճիգերը: Այդ կոպիտ ցեղը թերեւ բարեփոխէր, եթէ օտարները չմիջամտէին նրա գործերին, նրա հոգու մշակմանը:

Այլուր, Արեւելքում, մահմեդականների աշխարակալութեամբ, Առաջաւոր Ասիայի համարեա բոլոր

ժողովուրդները կորցրին իրենց յատուկ լեզուն և որդեգրեցին արաբերէնը կամ թուրքերէնը: Ղփտերէնը, փարաւոնեան լեզւի վերջին մնացորդը, կորաւ Նապոլէոնի Նեղոսի գետահովտում կատարած վերջին արշաւանքից մի քանի տարի յետոյ. փիւնիկերէնը, ասորերէնը անհետացան. մնում են միայն քաղգէական լեզւի բեկորները:

Դրանից աւելի առաջ, սոգդերի, խորագմների, բակտրիացիների լեզուն խառնեց աֆղան և հնդիկ բարբառների հետ: Լիգիական, փոխգիական, կապադովկեան, կիպրոսեան, կրէտական լեզուներն անհետացան՝ յունարէնին տեղի տալով և ապա յունարէնն ինքը շատ շրջաններում վառեց թուրքերէնով:

Դիւրին էր յիշել բազմաթիւ ժողովուրդներ, որոնք քաղաքական տեսակէտով ձուլւած լինելով կորցրել են իրենց ինքնութիւնը՝ ձուլւելու համար իրենց երկիրը գրաւողների մէջ, և այդ խառնուրդներն անտարակոյս մեծապէս փոփոխել են ձուլող և ձուլող ցեղերի սկզբնական նկարագիրը, ձևափոխել են լեզուն՝ ձուլումից առաջացած նոր ժողովրդի գրոշմը տալով նրան: Բայց լեզւաբանութիւնը դանց է առնում այդ բոլոր նախընթացները, միացնում է իրենց ծագումով ամենաանջատ տարրերը: Դա մեծ թերութիւն է հարցի գիտական կողմի տեսակէտով. գործնականում դա միակ թերութիւնը չէ, և ուզելու փորձ անելը կը նշանակէր անօգուտ կերպով աւելացնել՝ արդէն համարեա անյաղթելի դժւարութիւնները:

Ուստի լեզւաբանութիւնից ցրիշ բան չպէտք է պահանջել, եթէ ոչ մարդկանց խմբաւորել իրենց արդի լեզւի համաձայն, այսինքն՝ շատ գէպքերում նրանց

ընդհանուր հակումների համաձայն: Անհնար է նրա-
նից սպասել ազգութիւնների առեղծաժի կատարեալ
լուծումը. որովհետեւ նա մի կողմից միացնում է եր-
բեմն ախպիսի խմբեր, որոնց թշնամի են դարձնում
հանգամանքները կամ ըջապատը, և միւս կողմից՝ ո-
րովհետեւ նա յաճախ բաժանում է ընդհանուր շահեր
ունեցող խմբաւորումները:

Իբր օրինակ վերցնենք Հիւսիսային Ամերիկայի
Միացեալ-Նահանգներն ու Մեծն-Բրիտանիան՝ Իրկուքն
էլ ա՛ գլխախօս, Սպանիան և հարաւային ու կենտրո
նական Ամերիկայի իր հին գաղութները, Գերմանիան
և գերմանական Շւէյցարիան՝ երկիրներ, որոնց միա-
ցումն անիմաստ էր լինէր տնտեսական ու բարոյա-
կան տեսակէտով:

* * *

Բայց մի դժւարին հարց է ծագում—Խնչ աստի-
ճանի ազգակցութեան վրայ պէտք է կանգ առնել ո-
րոշելու համար ազգութիւնը, ի միջի այլոց, սլաւոն-
ներին եթէ վերցնենք, վելիկոորուսներն ու մալորուս-
ները, լեհերը, սլովենները, մորաւիացիները, չեխերը,
ռուսները, խորատները, սերբերը, բուլղարները,
չերնոգորիացիները ամենքն էլ խօսում են սլաւեան
բարբառ, բայց իրարից տարբեր: Այս ժողովուրդները
պէտք է նկատուին ազգային մի ամբողջութիւն, թէ՛
պէտք է քաղաքական միութիւն տալ իւրաքանչիւր
բարբառին: Անհերքելի է, որ վերջին լուծումն ամե-
նից արդարացին կը լինէր: Բայց այնքան պատճառ-
ներ հակառակ են նրան, որ ընդունել անհնար է:
Միւս կողմից՝ անարդար կը լինէր բոլոր այդ մարդ-
կանց դասաւորել թւով ամենամեծի՝ ռուսների հեղի-

նակութեան տակ այնպէս, ինչպէս անյարմար կը լի-
նէր միակ ազգ կազմել Ֆրանսիացիներից, իտալացի-
ներից, սպանիացիներից ու պորտուգալներից:

Ա. Մէյլէն (A. Meillet) Սորբոնի սլաւոն ուսում-
նասիրութիւնների ինստիտուտում կարդացած մի բա-
նախօսութեան մէջ շատ պարզ կերպով է ներկայա-
ցնում սլաւոն ցեղի դիրքը:

«Սլաւեան միութիւնը, ասում է նա, կարելի է
սահմանել միայն լեզուով:

«Ցեղի միութիւն չկայ սլաւոնների մօտ—սեր-
բերը, ռուսները, լեհերը, չեխերը չեն պատկանում ազ-
գագրական միեւնոյն տիպին: Միեւնոյն աղբի, օր., ռուս-
ների մէջ շատ քան է պակասում ցեղային միութիւն
կազմելու համար. «սլաւների» յաջորդներից շատերը
գերմանացած են և գերմաներէն են խօսում. շատ օ-
տարականներ սլաւոն են դարձել. ֆիննեան ժողո-
վուրդներից սերած ռուսների թիւը շատ մեծ է:

«Չկայ կրօնական միութիւն—Սլաւոնների միջև
շատերը պատկանում են արևելեան եկեղեցուն, ուրիշ-
ներ՝ արևմտեանին: Սերբ-խորատ ազգը պարունակում
է միաժամանակ արեւելեան քրիստոնեաներ, հռովմէա-
կան կաթոլիկներ ու մահմեդականներ:

«Չկայ մշակոյթի միութիւն—միջին դարերից
իվեր ճշ մի ընդհանուր կապ չկայ, օրինակի համար,
Ռուսաստանի և Բոհեմիայի քաղաքակրթութիւնների
դարգացման միջև:

«Չկայ պատմութեան միութիւն—Գրդ դարուց
սկսած, նոյն իսկ աւելի առաջ, զանազան սլաւոն ազ-
գերն իրարից անկախ պատմութիւն են ունեցել: Հա-
րաւի սլաւոնները մաշիարներով ու ռումաններով բա-

ժանւած լինելով հիւսիսի և հիւսիս-արևելքի սլաւոն-
ներից, ունեն ուսաների և լեհերի պատմութիւնից բո-
լորովին անշատ պատմութիւն:

«Սլաւ» անունով են որակւում բոլոր այն ժողո-
վուրդները, որոնց լեզուն ձև փոխութիւնն է միևնոյն
բարբառի, որ չէ պահպանւած, բայց ստիպւած են են-
թադրել այդպէս և համաձայնել են անւանել «ընդհա-
նուր-սլաւեան»:

«Սլաւոն բարբառները բաւական պարզ բնոյթա-
գծւած երեք լեզւախմբեր են պարունակում—ուսա-
կան խումբն իր որոշ բարբառ՝ երով՝ վելիկորուսեան,
բելորուսեան և մալորուսեան. արևմտեան խումբը, որի
գլխաւոր ներկայացուցիչներն են չեխերէնն ու լեհե-
րէնը, և որին պատկանում են այժմ անհետացած սլա-
ւոն բարբառները, որոնք խօսւում էին մինչև էլքայի
աջ ափը (դրանց մնացորդները կան Լուսացիայի սո-
րարերէնում), և հարաւային խումբը՝ սլովեն, սերբո-
խորատ և բուլղար լեզուները»:

Այս տեղեկագրութեան համաձայն, մարդ կը
փորձէի առաջարկել այնքան սլաւոն պետութիւններ
կազմել, ինչքան որ մասնաւոր բարբառ՝ եր և մշակոյթ-
ներ կան. բայց այդ իշխանութիւնները կենսունակ
չէին լինիլ:

Բայց արդէն Կենտրոնական Եւրոպայի սլաւոն-
ներն իրենք գտան այդ հետաքրքրական հարցի լու-
ծումը՝ պահանջելով կազմել երկու պետութիւն. մէկը
հիւսիսում՝ բաղկացած Բոհեմիայից, Մորաւիայից և
սլովեն երկիրներից, միւսը հարաւում՝ մի մեծ Սեր-
բիա, որ իր մէջ կառնէ Բալկանների և Աւստրո-Հուն-
գարիայի բոլոր հարաւ-սլաւոն ժողովուրդները: Այս

երկու բաժանումները, որոնք համապատասխանում են
այդ ցեղի տենչանքներին, կատարեալ բաւարարու-
թիւն կը տան եւրոպական մեծ պետութիւններին, եթէ
հաշտութեան վեհաժողովը վաւերացնէ նրանց: Իսկ գի-
տական վիճաբանութեան տակ չի մտնիլ:

Լատին խմբակցութիւնը տեւել է հաւասարակշիռ
բաժանման օրինակը. բայց Իտալիան պէտք է ստա-
նայ մի քանի հողամասեր, որոնք դեռ պատկանում են
Աւստրո-Հունգարիային. Ֆրանսիան տեսնում է, որ իր
լեզուն է խօսւում Բելգիայում և Շվեյցարիայի մի
մասում. Ռումանիայի մօտ կէսը գտնւում է Հունգա-
րիայի ձեռքում: Սկանդինաւեան երկիրներն աւելի
լաւ են բաժանւած, թէև Դանիան Հունի այն ամենը,
ինչ որ նրան պէտք է տրւի, և որ Շվեդիան մասամբ
բնակւած է Ֆինլանդիացիներով:

Եթէ գործադրւէին լեզւաբանութիւնից տեսա-
կանօրէն հանւած եզրակացութիւնները, Ռուսաստանում
և Աւստրո-Հունգարիայում ամենակատարեալ յեղաշըր-
ջումը տեղի կունենար: Հարստութեան կայսրութիւնից
կը մնային միայն Վիեննայի շրջակայքն ու Տիրոլը:
Գալով Ռուսաստանին, նա պիտի հրաժարւէր Ֆինլան-
դիայից, Լիտւայից, Բալթիան նահանգներից, կովկաս-
ցիներից, հայերից, կիւրդիներից, թուրքմէններից,
կալմուկներից, թաթարներից և Սիբիրի բոլոր ժողո-
վուրդներից: Ֆրանսիան իսկ պէտք է հեռանար Ֆը-
լանդերիայից, Բրլտանից, Բասկեան երկրից, թերեւ
և ոկեան լեզւի երկրներից՝ պահելով միայն օյլ լեզ-
ւին պատկանող երկիրները: Մի խօսքով՝ լեզւաբանու-
թիւնը, եթէ ճշգրտօրէն հետեինք նրա խորհուրդնե-
րին, հազար տարիներով յետ կը տանէր աշխարհը և

ծնունդ կը տար անվերջ բարդութիւնների դրդապատ-
հառներին:

Եթէ ենթադրենք նոյն իսկ, որ լեզւաբանական
ազգութիւնների սկզբունքն ընդունելի, դա շատ յաճախ
անգործադրելի կը լինէր գործնականօրէն: Ո՛ւր են
գտնում ճշտագոյն սահմանները Դանիայի և Գերմա-
նիայի, Հոլանդիայի և արեւմտքի ու հարաւի իր հա-
րեանների, Իտալիայի և Ֆրանսիայի, Սպանիայի և
Ֆրանսիայի, Լեհաստանի և Ռուսաստանի, Կարնիոլի
և Դալմատիայի իտալացիների ու սլաւոնների միջև:
Պէտք է որ խիստ որոշած սահմաններ լինէին դանա-
զան լեզուների միջև. արդ, այդ սահմանները կան
միայն երկու երկիրների համար—Անգլիայի և Շապո-
նիայի, որովհետեւ այդ երկու երկիրներն էլ ամեն
կողմից ծովով են շրջապատւած: Բայց այս երկու եր-
կիրներն էլ պարունակում են տարբեր լեզուներ ու-
նեցող ժողովուրդներ: Իսկ ուրիշ երկիրներում, հարե-
ւան բարբառներն այն աստիճան թափանցում են ի-
րար, որ անկարելի է ասել, թէ ուր է սկսւում մէկը,
և ուր է վերջանում միւսը:

Երբեմն էլ, նոյն իսկ շատ յաճախ, ժողովուրդ-
ներն իրար մէջ են հիւսւած աւելի կամ պակաս տա-
րածութեամբ մի հողամասի վրայ, լեզւաբանական
օջախների միջև, միեւնոյն քաղաքներում ու գիւղերում
ապրող երկու ազգութիւնների մէջ: Այս դէպքն առ-
հասարակ տեղի է ունենում շատ դարգացած քաղա-
քակրթութիւն ունեցող երկիրներում և կամ այնտեղ,
ուր երկու ցեղեր միեւնոյն կրօնն ունին. որովհետեւ
մեծ մասամբ այն պարագաներում, երբ այլադան կը-
րօնների և լեզւի տէր մարդիկ շփման մէջ են, միջա-

վայրերը բաժանւում են և դրացիներ մնալով հան-
դերձ՝ կազմում են տարբեր ազգային կենտրոններ:
Այս վերջին պարագան գոյութիւն ունի Մակեդոնիա-
յում՝ յոյների, սերբերի, բուլղարների և թիւրքերի
միջև, Հայաստանում և Փոքր-Վովկասում, ուր հայերը,
քիւրդերը, լազերն ու թաթարներն ապրում են զատ
զատ գիւղերում, բայց կողք կողքի:

Այս բարդութիւններին պէտք է աւելացնել նաև
օտարականների գաղութներն այն երկիրներում, ուր
նրանք ապրում են—սաքսոններ՝ ռումանական երկիր
Տրանսիլւանիայում, գերմաններ՝ Կովկասում և Ռու-
սաստանի շատ կէտերում, ռուսներ՝ Սիբիրեան մեծ
գետերի ափերին, գերմանական, ֆրանսիական, սպա-
նիական, իտալական խմբակցութիւններ Նոր-Աշխար-
հում, յոյներ՝ Եգիպտոսում, հայեր՝ թիւրքական ամ-
բողջ կայսրութեան և Պարսկա տանի մէջ: Այդ գա-
ղութներն երբեմն խոշոր նշանակութիւն ունեն տնտե-
սական տեսակէտով. և սակայն չեն կարող հաշւի առ-
նել միացւելու համար քաղաքականապէս իրենց
պատկանած արմատին:

Այս խմբակցութիւնների մէջն է, որ առանձնա-
պէս նկատելի է աւանդութիւնների պահպանումը:
Բաւ է յիշել բօէրներին, Կանաւայի ֆրանսիացիներ-
ին. անտարակոյս այդ մարդիկ հազար բան են փոխ
առել իրենց հարեանների կեանքից, անշուշտ նաև
նրանց ֆիզիքական կազմը յարմարել է իրենց ապ-
րած միջավայրին, բայց պահպանել են իրենց լեզուն,
կրօնը, ընտանեկան սովորոյթները, նախնիքների մը-
տածելակերպը:

Ուստի, լեզւաբանութեան վրայ հիմնւած ազգու-

Թիւնը տակաւին մի սին խօսք է, ինչ իմաստով էլ վերցնենք, ամենալայն թէ ամենանեղ: Լեզուները կարող են և պէտք է լինեն առաջնորդներ՝ ամեն մի ազգութեան իր անհատական կեանքը վերադարձնելու համար, ընդհանուր ապահովութեան թելադրած սահմաններում. բայց, բացարձակ մտքով վերցրած, պետութիւնների կազմութիւնը չէ կարող հիմնել ժողովուրդների բարբառների վրայ:

* * *

Պարսկաստանում. Մինէի Քիւրտիստանում եւ ժամանակին պատահել եմ լեռների մէջ կորած հայ գիւղերի, ուր խօսւում էր 4—5 դարու հնութիւն ունեցող մի լեզու: Մինէյում ապրում է մի հրէական գաղութ, որի բարբառը դեռ ևս ունի քաղդէական և ասորական ծագում ունեցող բազմաթիւ բառեր՝ երկուքուկէս հազարամեակից աւելի հնութեամբ:

Յիրուցան վիճակում հաստատւած բոլոր այս համայնքները, որոնք մեծ մասամբ խորթ են այն ժողովուրդների բարբերին ու շահերին, որոնց միջև ապրում են նրանք, տուժում են այդ հարկանութիւնից կամ տուժել են տալիս իրենց ներկայութեամբ՝ և սակայն նրանցից ոչ ոք չէր ցանկանալ հեռանալ իր բնակավայրից: Մի քանի ցեղեր, որոնց մէջ անհատն իր անձնական շահը բարձր է դասում հայրենասիրութիւնից և սիրայօժար գաղթում, հիմնում են աւելի կամ պակաս տեղական գաղութներ: Բայց այդ ցեղերը փաստակար օրինակ են իրենց ընդունող ժողովուրդների համար, որովհետեւ նրանք իրենց մէջ կրում են ազգերի էներգիայի ամենամեծ ջլատողը— Ubi bene *):

*) «Ուր հաց, անդ կաց»:

Անշուշտ առանձին խմբակների բախտը չէ կարելի նկատի առնել ինքնավարութեան տեսակէտով. դա կարող է բարեկաւել մասնաւոր կարգադրութիւններով ամեն մի ուրոյն դէպքում՝ շահագրգռւածների նիւթական ու բարոյական շահերը պաշտպանելու նպատակով, առանց փնտհելու այն ժողովուրդներին, որոնց միջև նրանք խառնւած են:

Յրեւոյթիւնը շատ յաճախ կնճռոտութիւն է առաջացնում՝ ազգութիւնների աշխարհագրական բաժանման տեսակէտով. որովհետեւ իւրաքանչիւրն անսալով բոլորովին մարդկային եզոզ այն զգացումին, թէ իր շահերը պէտք է աւելի առաջնակարգ համարւեն, քան իր հարկանինը, իր՝ երբեմն շատ սակաւութիւ պաղութների համար պահանջում է այն հուլամասերը, որոնց մէջ նա ապրում է իբր փոքրամասնութիւն. և այս պատճառը գալիս է միանում պատմական բնոյթ կրող շարժառիթներին, և յաճախ առաջանում են այնպիսի միտումներ, եթէ ոչ իրաւունքներ, որոնք արգելք են հանդիսանում օրինական բաւարարումների գործնական իրականացման:

Ասիական մի յոյն շատ լրջօրէն ասում էր ինձ մի օր, թէ յոյներն իրաւունք ունին պահանջելու վերականգնել Ալեքսանդր Մեծի երկիրները, Ելլադային վերադարձնել Սիկիլիայի, Մեծ-Յունաստանի, Կիրենայիկի ու Եւքսինեան Պոնտոսի նախկին յունական գաղութները՝ Փոքր-Ասիայի, Վոսիփորի և Թրակիայի գաղութների հետ միասին: Ծիծաղելիութեան հասցրած այդ պահանջները ցոյց են տալիս, թէ ինչքան դժուար է լիովին բաւարարել ամենքին:

Եթէ հաշւի առնւէին այդպիսի չափազանցւած տնտեսականներ, Եւրոպայում ու Ասիայում կը ստեղծւէին բազմաթիւ փոքր պետութիւններ, որոնց երկրամասերն իրար վրայ կը յարձակւէին՝ մեծապէս ֆլասակար լինելով ընդհանուր խաղաղութեան:

Ուստի, թւում է, թէ մեծ քաղաքների գաղութները չպէտք է հաշւի առնեն ազգութիւն ստեղծելու հարցում, եթէ նրանց մօտ չկան գոնէ նոյնչափ բազմաթիւ դաշտաբնակ գաղութներ և յամենայն դէպս, եթէ նկատի առնւած տարրն իրօք գերակշիռ չէ այդ շրջանում: Պէտք է ասել նաև, որ մի երկրում ապրող զանազան ազգութիւնների բնակիչների գնահատութեան ամենաարժէքաւոր հիմքերից մէկն է քառակուսի կիլոմետրի վրայ նրանց համեմատական թիւն ու սրա յարաբերութիւնն ընդհանուր քանակի հետ:

Ամենախիտ կեանքն ունեցող երկիրն է Բելգիան, ուր քառակուսի կիլոմետրի վրայ ապրում են 240 հոգի. բայց այդպիսի գերբնակչութիւն հնարաւոր է միայն այն պետութեան մէջ, ուր արդիւնաբերութիւնը հասած է իր զարգացման գագաթնակէտին: Ընդհանրապէս, քառակուսի կիլոմետրի վրայ 100 բնակիչ ունեցող երկիրն արդէն խիստ մարդաշատ է: Մեծ զարգացման ընդունակ շրջանների համար այդ թիւն անտարակոյս չափազանց մեծ է. 50 կամ 25 բնակիչ մի քառակուսի կիլոմետրի վրայ՝ աւելի արմատական յարաբերական թւեր են, որով 20000 կամ 40000 քառակուսի կիլոմետր տարածութիւն է ենթադրւում մի միլիոն բնակչութեան համար՝ անկախ նրա բաղկացուցիչ ցեղերից: Աւելի սեղմ համեմատութիւն վերցնելը կը նշանակէր երկար տարիներով սպասման

դատապարտել երկիրը: Արտա-եւրոպական գաղութներն աչքառու օրինակներ են տալիս զարգացման ընդունակ հողերի. բայց նրանք պահեստներ են կազմում ապագայի համար, ուր մի օր կը գայ ծաւալւելու եւրոպական գերարտադրւած բնակչութիւնը՝ ազգային խմբակցութիւնների ձևով:

Ուստի վերականգնող ազգին պէտք է տալ միայն այն երկրամասերը, ուր նա մեծամասնութիւն է կազմում, և առանձնապէս նկատի առնել դաշտային ազգաբնակչութիւնը: Այլ կերպ վարւելը կը նշանակէր աղաղակող անարդարութիւնների գործել, երկրի ապագան ենթարկել խռովութիւնների ու ապստամբութիւնների: Բոլոր քիչ ու շատ մեծ ժողովուրդներն իրենց կեանքի ընթացքում նւաճումներ են արել, ամենքն էլ ունեցել են իրենց սեփական ցեղին օտար տարրերով բնակւած հողաբաժիններ: Ամենքն էլ այսօր ջերմօրէն կը պահանջէին ժամանակին իրենց նախնիքների գերաւած հողերը: Նման յաւակնութիւններին բաւարարութիւն տալ արդարութեան հսկառակ կը լինէր: Միթէ չտեսանք, որ Գերմանիան պահանջեց Լոտարինպիան, Ֆրանշ-Կոնտէն, Բուրգունիան, Ֆլանդրիան, Արդենը:

Աչքէ անցնելով ձնշւած ժողովուրդների ներկայացուցիչ կոմիտեների բազմաթիւ հրատարակութիւնները, յաճախ շատ օրինաւոր պահանջների կողքին գտնում ենք նաև նւազ արդարացի պահանջներ և շատ դէպքերում այդ ազգային տնտեսականներն երբէք հաշի չեն առնում իրենց հարևանների համար անհրաժեշտ տնտեսական ու ռազմագիտական պայմանները: Ոգևորւելով իրենց հայրինիքը վերականգնւած տեսնելու

յոյսով, նրանք մոռանում են ամենաժանր կշիռ ունեցող արտաքին հարցերը: Եթէ այդպիսի սկզբունքներ ընդունէին, Ֆրանսիան ինչո՞ւ չպէտք է պահանջէր Բելգիան ու Ֆրանսերէն խօսող շէյցարական կանտոնները:

* *

Մի աւելի ծանրակշիռ հարց է ծագում արտա-
 եւրոպական գաղութներէ շուրջը: Անշուշտ չեն պա-
 կասելու մարդասէր մտածողներ, որո՞ք կատարելա-
 պէս արդարացիօրէն պիտի պահանջեն, որ ազատագրու-
 ւեն եւրոպացիներէ լծի տակ «հեծող» ժողովուրդները: Աւելորդ է պնդել այդպիսի մի անմտութեան վրայ, որի միակ արդիւնքը կը լինէր սպառնալ ապահովու-
 թեանն այն ազգերի, որոնք հազարաւոր տարիներից
 ի վեր կուռւմ են մարդկային բարօրութեան զարգաց-
 ման համար: Պարտականութիւն է բարեկաւել Ֆրան-
 սիական գաղութներում ապրող բնիկների վիճակը,
 նրանց տալ բոլոր այն ազատութիւնները, որոնք չեն
 կարող վտանգ առաջացնել. բայց հանդուրժել, որ նը-
 րանք մի օր կարողանան Ֆրանսիայի դէմ ոտքի կանգ-
 նել—դա անմտութիւն կը լինէր: Զգիտե՛ք միթէ, որ
 այդպիսի մարդկանց մօտ մոլեռանգութիւնը կարող է
 սարսափներ ծնել: Դժբախտաբար, Թիւրքիան այդ
 մասին տխուր օրինակներ տւեց մեզ, առանց հաշի
 առնելու և այն, որ եւրոպական մի քանի ժողովուրդ-
 ներ անարգ աղերախտութիւն ցոյց տւին իրենց ա-
 զատարարների հանդէպ: Իսկ ի՞նչ կանէին բարբարոս
 ժողովուրդները, եթէ թուլանար նրանց վրայ հսկո-
 ղութիւնը:

* *

Առհասարակ, չէ կարելի հարց բարձրացնել մարդ-
 կանց դասաւորելու իրենց կրօնական դաւանանքի հա-
 մաձայն. որովհետեւ, շատ յաճախ, անհատական հա-
 մոգումները կախում չունին նիւթական շահերից, և
 թէ միեւնոյն դաւանանքին պատահում ենք տարբեր
 հակում, լեզու և ծագում ունեցող խմբակցութիւնների
 մօտ: Դրանք զանազան երկրների ներքին բնոյթին
 վերաբերող հարցեր են. կառավարութիւն անւան ար-
 ժանի ամեն մի իշխանութիւն պարտական է երաշ-
 խաւորել խղճի ազատութիւնը: Կարող են հաւատաւել,
 որ ինչ էլ լինի մի ժողովուրդի կամ մի անհատի փի-
 լիսովայական վարդապետութիւնը, ինչքան քաղաքա-
 կիրթ լինի նա, ինչքան զարգացած լինի բարոյական
 տեսակէտով, նոյնքան շատ կը լինի նրանում կրօնական
 համբերողութիւնը: Դեռ ևս շատ նախնական վիճա-
 կում գտնուող մի քանի երկիրներում, կրօնական խըն-
 դիրն իշխում է բոլոր միջոցների վրայ, նոյնիսկ ջըն-
 ջում է ազգութիւնները և գերակշռող դեր է կատա-
 րում ժողովուրդների հոգու մէջ:

Օրինակ, Արևելքում՝ մահմեդականների մօտ,
 դա դեռ ևս նախնական բնոյթ ունի: Մահմեդականի
 աչքին ազգութիւններ չկան, այլ կան երկու դասի
 մարդիկ—նրանք, որ հաւատում են Ալլահին և յար-
 գում մարգարէին, և նրանք, որ չեն ընդունում ո՛չ
 Մոհամմէտին և ո՛չ էլ նրա ասածուն: Արևելքցիներ-
 բէք չի ասիլ. «Այդ մարդը թիւրք է, կամ պարսիկ,
 քիւրդ կամ արաբ»: Եթէ առանձնապէս չեն հարցնում

այդ մասին, նա կասէ. «Մանկական է», և կամ «մանկական չէ»: Առաջինը ճշմարիտ հաւատի ընտրեալը, նրա պաշտպանն է—մի մարդ, որ պէտք է իշխէ. երկրորդն ուրիշ բան չէ, եթէ ոչ մի գլուխ այն անարգ հօտից, որին Ալլահը դատապարտել է հնազանդել իր հաւատացեալներին:

Կրօնի այդ ըմբռնումն ունին բոլոր մանկական ժողովուրդները: Ինչքան կարողանանք յետ գնալ պատմութեան հոսանքով, իւրաքանչիւր ժողովրդի ազգային աստուածը նկատուում է իշխելու մի գործիք: Ասորեստանցիների մօտ, գերագոյն աստուած Ասսուրն իր իշխանութիւնը հարկադրում էր անլուր վայրագութիւններով. իսկ երրայեցիների միակ աստուած Եհովան տիեզերական աստուած չէր, այլ հրէաների ազգային դրօշը: Այդ ասանդութիւններն են, որ շարունակեցին սեմիտական արաքների մօտ: Ալլահը մի վրիժառու, տիրապետող աստուած է, արհամարտողէպի նրանց, որոնք չեն խոնարհւիլ իրեն: Այս աստուած պաշտամունքն է տարածւած բոլոր այդ պարզամիտ ժողովուրդների մէջ, որովհետեւ այդ կրօնը հանդուրժում է շատ մոլութիւնների, որովհետեւ նա բաւարարութիւն է տալիս մարդկային կիրքերի մեծագոյն մասին՝ շատ քիչ պարտականութիւններ միայն դնելով: Ինչ է պատճառը մի շարք ազգութիւնների անհետանալուն. նա յաճախ ստորաքարշ մարդիկ է պատրաստել այնպիսիներից, որոնք կարող էին աչք ունենալ ամենաբարձր դիրքերի: Այդ այլամեթութեան ոգին սեմիտական կրօնների գլխաւոր գծերից մէկն է:

Մանկականների միջև բաղմաթիւ աղանդներ

կան. ամենազլխաւորներն են սիւննիներն ու շիւները, առանց հաշիւու նազ անուն հանած բաղմաթիւ դաւանանքները: Այդ աղանդներից մէկին պատկանող մարդիկ ատում են միւս աղանդներին հետեողներին, քայց իրար միջև չկայ այն արհամարհանքը, որ վերադառնաւ է ճշմարիտ հաւատացեալ չեղողներին: Գալով անհաւատներին՝ նրանք ամէնքը միեւնոյն չափով չեն արհամարհում: Հրէան ամենից շատ է ատում, որովհետեւ ոչ միայն Մոհամեդին չէ հաւատում, այլ և չէ ընդունում Իսային (Յիսուսին), որ աստուած է քրիստոնեաների համար, իսկ մանկականների համար՝ մարգարէ: Ինչ վերաբերում է հեթանոսներին (բուդդայական, բրահման, եգիպտի), դրանք ընկերային սանդուղի վերջին աստիճանների վրայ են կանգնած:

Ասիական այդ անհամբերողութիւնը, միացած իշխելու սանձարձակ ցանկութեանը, Ասորեստանի և Արաբիայի սեմիտականներին, յետոյ և թիւրքերին հարկու դարձրեց քաղաքակրթութեան համար: Այսօր, երբ վտանգն անցած է, պէտք է զգոյշ լինել, որ նա չվերածուի՝ այդ մոլեռանդներին մի որևէ բաժին տալով համաշխարհային գործերի ղեկավարութեան մէջ:

Ծայրագոյն Արեւելքը մեզ ցոյց է տալիս այնպիսի դաւանանքներ (բուդդայականներ, բրահմաններ, և այլն), որոնց մէջ մեր պատահած փիլիսոփայական սկզբունքները չկան ուրիշ դաւանանքներում: Այդ կրօններն առաջադիմութեան դէմ չեն:

Մենք այստեղ հարց չենք յարուցելու զանազան քրիստոնեաների գործած սխալների և թերութիւնների մասին՝ այն ժամանակներում, երբ աշխարհը զեռ քիչ

էր դարգացած: Մենք կը խոստովանենք, որ քրիստոնէութիւնն ինքն էլ ծնել է բազմաթիւ աղանդներ, և թէ այս աղանդների իրար հանդէպ ունեցած դիրքն ոչինչով օրինակելի չէ մահմեդականների համար՝ նըրանց անհանդուրժողութեան խնդրում: Անհերքելի է, որ ամեն մէկը կարծում է, թէ ինքն է ուղիղ ճանապարհով գնում. բայց ցաւալի է, որ քրիստոնեաների միջև իրական թշնամութիւն կայ: Ի՛նչ էլ որ լինի, նոյն իսկ քրիստոնեաների միջև դրութիւնն այնպէս է, որ յաճախ ընդհանուր խաղաղութեան համար խիստ վտանգաւոր կը լինէր շատ մանրակրկիտ կերպով հաշի առնել կրօնական կամ փիլիսոփայական զգացումները: Սակայն անհրաժեշտ է յարգել խղճի ամենայայն ազատութիւնը:

Բայց տեղիք կայ վանազանութիւն դնելու կրօնների միջև—նրանք, որ բարոյական են և նրանք, որ չեն, և արգելել այս վերջիններին, որ իրենց սկզբունքներով իսկ վտանգի դրդապատճառ չդառնան ընդհանուր ազանովութեան համար:

Վսեմ զգացումներով համակւած, ուրիշ հաւատքը յարգելու սովոր ժողովուրդների մօտ ազգային ոգին կարտաքսէ կրօնական զգացումների բոլոր տարբերութիւնները: Դրա ուշագրաւ օրինակն են տալիս հարաւային սլաւոնները:

Ընդհանուր առմամբ, սերբերի մեծամասնութիւնը յունադաւան է, խրօստոներն ու սլովէնները կաթոլիկ են: Բացի այդ, նրանք Հունգարիայում ունեն բողոքական ազգակիցներ և Բոսնիայում ու երկրի արեւելքում բազմաթիւ մահմեդականներ: Դաւանանքների այդ տարբերութիւնը չէ խանգարում, որ հարաւային

սլաւոնները պահանջեն իրենց ազգի քաղաքական միութիւնը՝ յենւելով այն բանի վրայ, որ այդ դանապան դաւանանքներն այնքան են խառնւած իրար, որ կարելի չէ նրանց յատկացնել համապատասխան ուրոյն հողամաս: Նոյնն է և կաթոլիկ, օրթոդոքս, լուսաւորչական և բողոքականութեան բազմաթիւ յարանաւորութիւններին պատկանող հայերի մօտ. թէև շատ կրօնասէր են նրանք, բայց իրար հետ չեն շփոթում անհատական հաւատալիքներն ու հայրենիքի պաշտամունքը, և ամենքն էլ համախմբւած են միևնոյն ազգակալութեան շուրջը:

*
* *

Բայց պէտք չէ կարծել, որ ամեն ազգութիւն ընդունակ է պետութիւն դառնալու, և որ ամեն պետութիւն պէտք է պարունակէ միայն մի ազգութիւն. հարցն այդքան հեշտ չէ: Պետութիւնը կարող է ապրիլ և ծաղկիլ միայն այն ժամանակ, երբ իր բռնած հողամասը պարունակում է իր ժողովրդի բարգաւաճման անհրաժեշտ պայմանները: Այդ պայմանները բազմազան են, և երբ նրանցից ամենակարեւորները չեն լրացւում, պետութիւնն ու ժողովուրդը գտնւում են աննպաստ, և հաճախ ժողովուրդների բաղդատմամբ ցած դրութեան մէջ:

Պետութեան անհրաժեշտ կարիքներն են կազմում բնական նախնական նիւթերը, երկրագործական աղբիւրները, փոխադրութեան միջոցները թէ՛ մաքսային և թէ՛ ռազմագիտական սահմաններում, որպէս զի հնարաւոր դառնայ երկրի հարստութեան և ապա-

հովութեան իրական պաշտպանութիւնը. որովհետեւ պետութիւնը, ինչքան հնարաւոր է, պէտք է ապրի ինք իրանով, առանց օտարի աջակցութեան: Բացի այդ, նա ընդունակ պէտք է լինի յարգել տալ իր անկախութիւնը:

Հանքային հարստութիւնների մէջ աւելի կամ պակաս անհրաժեշտ են վառելիքը, երկաթը, պղինձը, որոնք առաջնակարգ կարիք են կազմում. դրանց չունենալ՝ նշանակում է ստիպողաբար կախում ունենալ օտարից:

Յունաստանը, Իտալիան, Եգիպտոսը, Բուլղարիան, Սերբիան, Դանիան, Շւեյցիան, Նորւեգիան, Հոլանդիան և Հարաւային-Ամերիկայի շատ պետութիւններ վառելիք չունեն:

Ստորին Նահանգները, Դանիան, Յունաստանը, Եգիպտոսը երկաթահանք չունեն:

Հոլանդիայում, Դանիայում, Յունաստանում, Եգիպտոսում պղինձը պակասում է:

Անգլիան, Ֆրանսիան, Սպանիան, Կենտրոնական պետութիւնները, Ռուսաստանն և այլն ունեն հանքային բոլոր աղբիւրները. իսկ աւելի փոքր պետութիւններ, ինչպէս Ռումանիան, ունեն հանքային իւրեքի խոշոր աղբիւրներ:

Քարիւղը, որ ներկայումս առաջնակարգ դեր է խաղում թէ խաղաղ ժամանակի արդիւնաբերութեան և թէ պատերազմական կարիքների մէջ, գտնւում է միայն շատ քիչ երկրներում: Նրան հանդիպում ենք Գալիցիայում, Ռումանիայում, Կովկասում (Նովորոսիյսկ, Բագու), Պարսկաստանում (Արարատան), Զաւայում, Քիրմանում, Եպոնիայում, Հիւսիսային-Ամե-

րիկայի Միացեալ-Նահանգներում, Մեկսիկայում, Բայց մեծ մասամբ, պետութիւնները զուրկ են նրանից: Ուստի ներմուծումներով պէտք է հայթայթեն ալդ, և 1914 թւականի մեծ աղէտը ցոյց տուց, թէ Եւրոպայի բոլոր պետութիւններում ինչպէս զգալի էր նրա կարիքը:

Ապա գալիս են երկրորդական նշանակութիւն ունեցող հանքային նիւթերը—օսկի, արծաթ, նիկել, ալիւմինիում, հազւագիւտ մետաղներ, կիր, գած, որոնցից կարելի է ի հարկին հրաժարուիլ. վերջապէս և աղը՝ որ անսահման քանակութեամբ գտնւում է ծովեզերեայ վայրերում. և որի հանքերը շատ և առատ են համարեա բոլոր երկրներում:

Երկրագործական պահանջները նոյնքան կարևոր են: Պէտք է, որ մի ազգ իր երկրամասի վրայ ունենայ իր ժողովուրդը կերակրելու բաւական չափով հացահատիկներ: Արդ, եւրոպական պետութիւնները մեծ մասամբ շատ հեռու են այդ օրէնքին բաւարարելուց՝ իրենց զերբնակչութեան պատճառով: Մինչ Ռուսաստանը, Ռումանիան, Հունգարիան, Եգիպտոսը, Ալժերիան, Անգլիական Հնդկաստանն ու Հիւսիսային Ամերիկան ահազին քանակութեամբ ցորեն են արտահանում, Յունաստանը, Իտալիան, Ֆրանսիան, Անգլիան, Բելգիան, Հոլանդիան և Դերմանիան չեն արտադրում իրենց սպառման համար անհրաժեշտ քանակութիւնը. նոյնն է և հիւսելի բոյսերի նկատմամբ:

Անասնաբուծութիւնը բաւարարում է մի քանի երկրներում (Ֆրանսիա, Հոլանդիա, Սկանդինաւեան երկրներ, Դերմանիա, Ռուսաստան, ևլն.), մինչ ուրիշ երկրներում (Իտալիա Բելգիա, Մեծն Բրիտանիա) նա բաւական չէ կարիքներին:

Շէէյցարիան գտնուում է բոլորովին մասնաւոր պայմաններում. նրան կարելի է նկատել իբր արհեստական մի պետութիւն: Այստեղ խօսում են 3 լեզուներ—գերմաներէն, ֆրանսերէն ու իտալերէն, բայց կանտոնների բաժանումը մեղմացնում է այդ խառնուրդի հետեւանքները: Նրա առևտրական յարաբերութիւններն իր հարևանների հետ շատ խոշոր են, որովհետև զրկւած լինելով ծովից, նա ստիպւած է արտասահմանի վրայով բերել իր չունեցած բազմաթիւ ապրանքները:

Սպանիան ու Իտալիան եւրոպայի միակ երկրներն են, որոնց սահմաններն իսկապէս իրական են, թէև Իտալիան տեսնում է, թէ Շէէյցարիան թափանցում է Տէսսինը, մինչև Միլանի դռները. իսկ եւրոպայի բոլոր միւս երկրները կեղծ սահմաններ ունեն: Դրանում նկատուում է թուլութեան մեծ պատճառներից մէկը, որի առաջն առնուում է ամէն երկրում մեծապէս սպառազինւելով. և երբ մի ժողովուրդ զինւում է, բոլոր միւսներն էլ պէտք է հետևեն նրա օրինակին, որպէսզի ստորագրապ դիրք չունենան: Այսպէս է, որ Ֆրանսիացիները, ռուսներն ու բելգիացիները ստիպւած էին խոշոր բանակներ պահել, որովհետև դէպի Գերմանիա նրանց սահմանները բաց էին:

Ի՛նչ էլ լինի պետութեան մեծութիւնը, սահմանների որոշումն իր հետեւանքներով շատ ծանրակշիռ հարց է՝ թէ՛ ժողովուրդների զինւորական հզօրութեան և թէ՛ առևտրական ու արդիւնաբերական բարգաւաճման տեսակէտով. ազգային տենչերը շատ դէպքերում ամփոփում են այդ հիմնական շահերը: Տրիէստն ու Ֆիումէն Աւստրո-Հունգարիայի ձեռքում դարձան ա-

ռաջնակարգ վայրեր, և Իտալիայի համար շատ լուրջ սպառնալիքներ: Անտէրպենը, թէև պատկանում է երկրորդական մի պետութեան, անլուր զարգացում ունեցաւ և Գերմանիայի ախորժակը սեւեռւած է անոր վրայ՝ նրան դարձնելու համար ծովային իշխանութեան և առևտրի կենտրոն—սպառնալիք Անգլիային, Ֆրանսիային, Հոլանդիային, ամբողջ աշխարհին: Կարևոր է, որ այդ կէտերը չընկնեն ազգերի ազատութեան թշնամիների ձեռքը, որ նրանք վերադարձեն այնպիսի պետութիւններին, որոնք իրենց համաշխարհային դիրքով կարող են երաշխաւորել մարդկութեան, թէ ի չարը չեն գործածելու իրենց ստացւածքը:

Հարաւային-սլաւոնները պահանջում են այն, ինչ նկատում են իրենց ազգային երկրամասը—Սերբիան և Չերնոգորիան, Բոսնիա-Հերցեգովինան, Սլուաւիան և Սլաւոնիան, Դրաւայի գաւառը, հարաւային Հունգարիան և երբեքական Նախկին Վոյվոդինան (Բանատ), հարաւային Կարինթիան, Ստիրիան. բայց արդէն շատ ընդարձակ այս կայսրութեան միացնում են նաև Իստրիան, Տրիեստը, Ֆիումէն (Ռիեկա) և ամբողջ Դալմատիան, առանց հաշի առնելու ներկայումս Իտալիայի արած դոճողութիւնները, այն հազարաւոր մարդկանց, որոնց նա կորցնում է պատերազմի դաշտում՝ ստեղծելու համար իր ազգային միութիւնն և վերականգնելու իր հիմնական սահմանները: Հարաւային սլաւոնները դաբերով ճնշւած, մարտիրոսագրւած են, նրանք քաջութեամբ պաշտպանեցին իրենց հայրենիքը, նրանք արժանի են, որ իրենց ազգութիւնն ազատագրւի. բայց դրանք բաւարար պատճառներ չեն ընդունել տալու իրենց բոլոր պա-

հանջները՝ նախքան բաւարարելը հրամայական կարիքներն այն ժողովուրդներին, որոնք իրենց արիւնն են թափում սլաւոնների անկախութեան համար, ինչքան էլ արժանաւոր լինեն սերբերի արիւնակիցները։ Ամենից առաջ հարկաւոր է պետական նկատառումը այս կէտերից մի քանիսի համար, որոնք իրենց կարեւորութեամբ ու աւանդական բնոյթով Իտալիային են հասնում։ Նրանց կցել մեծ Սերբիային՝ կը նշանակէր նոր պետութեան և իտալական թերակղզու միջև առաջացնել մի տհաճութիւն, որ վաղ թէ ուշ կը յանգէր կնճռոտութեան։ Պէտք է ասել նաև, որ Իստրիան ու Դալմատիայի հիւսիսային մասը չափազանց իտալականացած են, և սլաւոն տարրն այնտեղ միայն երկրորդական դեր է խաղում անտեսական տեսակետով*)։ Իտալիան անըմբռնելի անհեռատեսութիւն կունենայ, եթէ չպահանջէ, իբր հիւսիսային սահման, Կարնիոլայի և Կարինթիայի շրջանները, Յուլեան Ալպերը, այսինքն Դանուբի աւազանի և Ադրիատիկ ծովի աւազանի ջրերի բաժանման գիծը, և եթէ ղէպի Տրենտինա նա լրջօրէն ուղի չկոխէ աւստրիական Տիրոլի գերմանական հողերի վրայ, որպէսզի այնտեղ էլ ռազմագիտական մի սահման հաստատէ։

Ազգային պահանջների մինչև ամենափոքր մասն-

*) Հարաւ-սլաւոն կոմիտէների վերջին հրատարակութիւնները մեծ ցանկութիւն են արտայայտում բաւարարելու Իտալիայի տենչանքներին՝ հրաժարելով Տրիեստից ու Իստրիայից, բայց պահելով իրենց յաւակնութիւնը Ֆիւմէի, Դալմատիայի ծովափի և կղիկների վրայ (Cf. l'exposé que donne de la question R.—W. Seton—Watson dans German, Slav and Magyar. London, 1916.

բաժանները բաւարարելը կը նշանակէր ընդդէմ գնալ այն նպատակին, որ առաջադրելու է ազգութիւնները վերականգնելու հարցում։ Ղա կը լինէր ստեղծել շատ վտանգաւոր ազգային բաղխումներ, ամբողջ աշխարհի համար պատրաստել մի նոր հրդեհ։ Սաղաղութիւնը կարող է ապահովել միայն մեծ ժողովուրդների գերակայութեամբ, նրանց, որոնք իրենց բանակներն ոտքի հանեցին ճնշած ազգութիւնների պաշտպանման համար։ Պէտք է, որ այդ ազգութիւններն ապահովւած տեսնեն իրենց ապագան, որպէսզի կարողանան Եւրոպային հարկադրել արդարութիւնը, խաղաղութիւնն ու յարգանքը ղէպի մարդկային այն տարբեր խմբակցութիւնները, որոնք անսահման զոհողութիւններով պիտի դուրս գան ներկայ պատերազմից։

ԶԷ որ ժամանակակից պատմութիւնը ցոյց է տալիս մեծ պետութիւններին, թէ որոնք են իրենց պարտականութիւններն ու իրաւունքները։

Յունաստանը, որ ժամանակին վերականգնեց ի յիշատակ Պէրիկլէսի դարու բարիքների, իր դիրքով միթէ չհարկադրեց իր ազատարարներին, որ խստութեամբ պատեն նրա վարմունքը։ Նա միթէ ցոյց չտուեց, որ եթէ մեծ ու հզօր լինէր, լուրջ վտանգ կը սպառնար իր հովանաւորողներին։ Ռուսաստանի արիւնով ծնած Բուլղարիան, հազիւ օրօրօցից դուրս եկած, իր զէնքը չդարձրեց իր մօրը դէմ, իր բարերարի՝ որդու զաջնակիցների դէմ։ Դեռատի ժողովուրդների միջև կան շատերը, որոնք առանց աւանդական ուղեգծի, առանց արտաքին քաղաքականութեա՞ծ ծրագրի, չեն տալիս անհրաժեշտ երաշխաւորութիւնները, թէ Եւրոպան կարող է նրանց տալ մի դեր խաղալու դիրք՝ ա-

առանց իր հսկողութեան տակ առնելու նրանց. բայց համաշխարհային քաղաքականութեան այդ պահանջներն անպայման հակառակ չեն ժողովուրդների ազատութեան, այլ ընդհակառակը:

* * *

Կենտրոնական պետութիւնների պարտութիւնը մեծ փոփոխութիւններ կը մտցնէ համաշխարհային քարտէսի մէջ: Եւ դաշնակիցները շատ անհեռաւոր կը լինէին, եթէ չաշխատէին Գերմանիան վերածելու մի այնպիսի վիճակի, որ նա նոր ոճիրներ չպատրաստէ ապագայի համար: Ո՛չ մի կասկած չկայ, որ Թիւրքիան ու Աւստրո-Հունգարական կայսրութիւնը կանհետանան. դա անհրաժեշտ է: Գալով Հիւսիսային Գերմանիային, այն օրը, երբ դաշնակից զօրամասերը գերաւեն նրան, դիւրին է կարգադրել նրա վիճակը՝ անանցանելի պատուարներ կանգնելով գերմանական միութեան և նրա միլիտարիզմի առաջ, օրինակ՝ վերականգնելով 18րդ դարու փոքրիկ պետութիւնները, ինչ որ չէ հակասում աղգայնական սկզբունքներին, որոնք, ըստ երեւոյթին, այժմ մեծ կարեւորութիւն են ստացել: Չպէտք է աչքաթող անել, որ քառասուն և աւելի տարիներից ի վեր Գերմանիան պաղարիւնութեամբ պատրաստեց իր յանցագործութիւնը, և եթէ նա այդ եղանակը չկատարեց այնպէս, ինչպէս նախատեսած էր, պատճառն այն է, որ պարտեց Մառնի վրայ՝ կասեցնելով իր կայծակնաթուիչ արշաւանքի մէջ:

Գերմանիան մի ոճրագործ է, որի գլխաւոր ոյժը

կայանում է դաշնակցութեան մէջ. այդ քաղաքական ամբողջութեան հետ պէտք է վարւել իբր յանցաւորի հետ, որովհետև նա մեղանչել է մարդկային բարոյ օրէնքների դէմ: Դաշնակիցների ինքնասիրութիւնը ներանց արգիլեց հետեի գերմանացիների բարբարոս օրինակին, սակայն, մնալով հանդերձ մարդկայնական սահմաններում, սոսկալի պատժի պէտք է ենթարկել նրանց:

Եթէ Գերմանիան բարբարոսացաւ նաղ, յանցաւոր չեն Աւստրիան, Բուլղարիան ու Թիւրքիան. նրանք էլ պէտք է պատժւին նոյնքան խիստ, ինչպէս նրանց աւարդ զինակիցը:

Ինչ վերաբերում է Թիւրքիային, մի մասնաւոր թերութեան համար չէ, որ նա արժանի է պատժի, այլ զարաւոր բարբարոսութեան, վայրագութիւնների, ուխտադրութիւնների համար է, որ պէտք է պատժւի նա:

Մոհամետ 2-րդի կողմից Պոլսի առումով չէ, որ սկսւում է Օսմանցիների հզօրութիւնը, ինչպէս կարծում են շատերը. այդ բարբարոսներն արդէն երկար ժամանակից ի վեր աւելում էին Ասիան, երբ եկան մահացու հարւածը տալու Բիւզանդական կայսրութեան: Կը բաւէ յրշել սելջուկեան սուլթաններին անունները՝ վերակոչելու համար այն արհաւիրքները, որոնց թատերաբեմը գործան Բագդիսների ասիական գաւառները՝ վերջին կեսրից դեռ շատ առաջ:

Յաղթելով հին աշխարհը, տիրապետելով Աֆրիկան Թիւրքերն ուղում էին Եւրոպան ևս ստրկացնել իրենց մարդարէի օրէնքներին: Յոյների վերջին ապստանարան Տրապիզոնն ընկաւ. ապա հերթը հասաւ

բուլղարներին, սերբերին, ռուսներին, հունգար-
ներին, լեհերին, որոնք ենթարկւեցին այս անկուշտ
հորդայի հարածներին: Թիւրքական բանակը պաշա-
րեց նոյնիսկ Վիէննան արեւմտեան կեսարների ժա-
ռանգորդների այդ մայրաքաղաքը:

Այդ ժամանակ անծայրածիր էր Օսմանեան կայս-
րութիւնը. նա պարունակում էր Աֆրիկայի ամբողջ
հիւսիսային մասը, Եգիպտոսը, ամբողջ Առաջաւոր Ա-
սիան և տարածւում էր մինչև Կովկաս և հարաւային
Ռուսաստան: Քաղաքակիրթ Եւրոպան ամբողջ չորս ու
կէս դար վառնեց հետզհետէ տկարացնելու սատանայի
այս գործողիցների ստեղծած ընդարձակ կայսրութիւ-
նը. և այսօր, արեւելքի յունական կայսրութեան կոր-
ծանու միջ 462 տարի անց, առիթ է հերկայանում
հաշիւները մաքրել այս ինքնակոչների հետ, որոնք
իրենց նենգամիտ դիւանագիտութեամբ չգաղաբեցին
աշխարհը պղտորելուց:

Ուստի արդարութեան մի նոր դարագլուխ է
բացւելու այն ահռելի տանջանքից յետոյ, որ սուգի
մէջ է խորասուզել Եւրոպան ու Առաջաւոր Ասիան:
Յանցաւոր պետութիւնները պիտի ջնջւեն աշխարհա-
գրական քարտէզից և պիտի տեսնենք դարերից ի վեր
ամենավայրագ ճնշման տակ հեծող ժողովուրդների
վերածնունդը:

Ամենքի շրթունքի վրայ են անուններն այն ազ-
գութիւնների, որոնք պէտք է վերածնեն այդ փո-
թորկի միջից: Ոճիր կը լինէր այդ ժողովուրդներին
չտալ ազատութեան հեշտանքները, մերժել յաղթական
դաշնակիցներից նրանց սպասած գերագոյն վայելքը:

*
*
*

Այն միաբանութիւնը, որով բոլոր հպատակ ժո-
ղովուրդները պահանջում են իրենց անկախութիւնը,
և ճնշածների այդ ընդհանուր բաղձանքը ցոյց են
տալիս, թէ ինչքան ցնորամիտ են միջադպրանական
բոլոր թէորիաները, թէ ինչպէս ամեն մի ժողովուրդ
հրամայական կարիք է զգում մաքուր պահելու իր ա-
ւանդութիւնները, իր սովորոյթները, իր մտածելա-
կերպը: Ընտանիքում անհատի համար հարստութիւն-
ների ամենաթանկարժէքը միթէ ներքին կեանքի ա-
զատութիւնը չէ: Իսկ համայնքի համար, ընդլայնելով
այդ շրջանակը, չէ որ ամենաթանկագին բանն է պահ-
պանել ազգային ոգին, որ իշխում է բոլոր ցանկու-
թիւնների, բոլոր մտահոգութիւնների վրայ: Ազգային
տենչերի յարգանքի վրայ է, որ պիտի հանգչի ապագայ
մարդկութեան խաբիսը, որովհետև բոլոր ժողովուրդ-
ները, բոլոր բնական էակներն այդ են պահանջում
իրբ ամենամեծ բարիք:

Հպատակ ժողովուրդների մէջ ազգային ոգու
պահպանման գլխաւոր պատճառներից մէկն է, անվի-
ճելիօրէն, նրանց այլամերժ լինելը: Ապրելով իրենց
ոգուց ու շահերից տարբեր ոգի և շահեր ունեցող
մարդկանց հետ յարատե շփման մէջ, նրանք զգուշա-
նում են իրենց միջավայրում պահել իրենց ցեղից
տարբեր տարրեր՝ ողջմտօրէն համարելով, որ մի ազգի
ամենաթանգ բարիքն է նրա անձնական մշակոյթը,
ինչ որ կազմւած է ժամանակի ընթացքում անհրա-
ժեշտութիւնների համաձայն վիփոխող աւանդու-
թիւններից ու հակումներից, բայց որ միշտ հարա-

գատ է մնում ինքն իրան: Իրերի ոյժով պահպանող այս ազգային զգացումն է, որ Բոհեմիային, Յունաստանին, Հայաստանին և ուրիշ շատ երկրներին հնաբառություններն է տվել դիմանալու մինչև այժմ, դարերի և հազար դարությունների միջից, լինելով հայրենիքներն այնպիսի ազգերի, որոնք չեն ուզեցել անհետանալ, և որոնք միշտ հառաք են ունեցել իրենց ճակատագրի վրայ:

Որևէ ժողովուրդի մեծությունը կազմող յատկությունները ստեղծված են նրա նախնիքների կողմից, ապրույների ոգին այլ բան չէ, եթէ ոչ մեռածների ոգու շարունակությունը: Սա մի ճշմարտություն է, որ ազգերը կառավարելու կոչված մարդիկ չպետք է երբեք մոռանան:

Ամեն ժողովուրդ պարտական է նախանձախնդիր հոգատարություն հսկել իր ազգություն պահպանմանը: Բաւական է նայել մարդկության տարեգրություններին՝ տեսնելու համար, թէ ինչպէս ցեղերի խառնուրդը մնասակար է եղած այն պետություններին, որոնք թոյլ են տվել, որ մեռելիկոսները *) զրաւեն իրանց: Քանի քանի պետություններ են կործանւած այն պատճառով, որ հանդուրժել են օտարականներին իրենց կալածների մէջ: Հոռովմը, որ այնքան քաջարի, այնքան իմաստուն էր իր հանրապետութեան երկար տարիների ընթացքում, սկսեց նսեմանալ այն օրը, երբ, ամբողջ աշխարհը հպատակեցնելուց յետոյ, իր պարսպաներից ներս ընդունեց օտարականներին:

*) Մեռելիկոս էին կոչւում Աթէնքում այն օտարականները, որոնց իրաւունք էր տրւած սեփական բնակարաններ ունենալ այդ քաղաքում:

Ամեն ազգութիւն ունի իր բարեմասնութիւններն ու թերութիւնները. իւրաքանչիւրը յարմարել է իր բնական հողին, և այն արմատախիլ եղածները, որոնք իրենց հայրերի ծննդավայրից դուրսն են փնտռում կեանքը, մեծ մասամբ մրուրը, թափթփուքն են կազմում այն ժողովուրդի, որից նրանք հեռանում են: Երբեմն քաղաքական կամ կրօնական պատճառներն են ստիպում մարդկանց հեռանալ իրենց հայրենիքից, դա բացառություն է. բայց մեծ մասամբ ովքեր որ միայն նիւթական շահից դրդւած են առաջնորդւում «ուր հաց—անդ կաց» սկզբունքով, ցած զգացումների տէր մարդիկ են:

Օտարականը, որ գալիս է հաստատուելու մի նոր հայրենիքում, ամեն բանի մասին դատում է իր շրջապատի մարդկանց ոգուց ու գիտակցութիւնից տարբեր կերպով, իր գործերով, խօսքերով տարածում է մեծ մասամբ այնպիսի սկզբունքներ, որոնք հակառակ են այդ ուրիշ ցեղի սկզբունքներին. և այդ ազդեցությունները մնասակար են լինում, երբ շատ են: Այս մասին համոզւելու համար կը բաւէ լրջօրէն քննել քաղաքական ընթացքը մի շարք երկրների, որոնք 45 տարի է իրենց դռները բաց են պահել գերմանական հոսանքի առաջ: Սրանք չբաւականանալով այն սրտաբաց ընդունելութեամբ, որ վայելում էին իրանց հիւրընկալող երկրներում, անդադար պայքար մղեցին նրանց աւանդական օրինական ըմբռնումների դէմ, հիմքից խախտեցին նրանց համոզումները և հասարակական ու մասնաւոր կեանքում ձեռք ձգեցին մի կարևորություն, որին երբեք չպետք էր հանդուրժել:

Այդ մարդկանցից մեծ մասը, որ միայն թղթի

վրայ էր ֆրանսիացի, անգլիացի կամ իտալացի, ծառայում էր Գերմանիային, իր ապագայ թշնամու մէջ խոտովութիւն և երկպառակութիւն ձգելով պատրաստում էր գերմանական ներխուժումը: Որքան յանցաւոր են այն քաղաքագէտները, որոնք կարճատես շահախնդրութեամբ, իրենց անձնական համոզումները կամ ցանկութիւնները գոհացնելու համար հրապուրեցին այդ դաւաճաններին, պաշտպան կանգնեցին ներանց, յաճախ նոյնիսկ իրենց հայրենակիցներին բարձր դիրքի հասցրին, նրանց մտքին իրենց երկրի վարչութիւնների, բանակի, գործառնութեան քաղաքականութեան մէջ: Դա այնպիսի մի ազդակործան ոճիր է, որին ինչքան էլ ձաղկէք՝ քիչ է:

Եթէ անհամար գերմանացիների Ֆրանսիա գալը մեզ սարսափելի ֆեաներ պատճառեց, ուրիշ օտարականների ներգաղթն էլ յաճախ փրկարար չէ եղած: Բայց այն, որ այդ ժարդիկ մեծ մասամբ իրենց երկրի թափթփուքն են, նրանք անհնքն էլ, նոյնիսկ ամենապատուաւորները, բերում են իրենց հայրենիքի դադափարները—գաղափարներ, որոնք Ֆրանսիական չեն, և որոնք կարող են լաւ լինել այլուր, բայց մեզ համար այդպէս չեն, որովհետեւ համաձայն չեն Ֆրանսիական մշակոյթին, որ դարերի ընթացքում Ֆրանսիական ցիզի ձիգերով բարձրացւած մի կոթող է:

Ֆրանսիայում 40 տարուց ի վեր տեղի ունեցածի օրինակը պէտք է ուղեցոյց ծառայէ ոչ միայն Ֆրանսիացիներին, *) այլ և միւս բոլոր պետութիւններին. ո-

*) Այս գրքի տպագրութեան ժամանակ Ֆրանսիական կառավարութիւնը ներկայացրեց օրէնսդրական հիմնարկութիւններին մի օրինադիւծ, որի նպատակն է կուել օտարներին Ֆրանսիական քաղաքացի դառնալուն (նառնաբախցի) վաստեմանքների դէմ, ինչ որ նկատուում էր Ֆրանսիայի մէջ պատերազմից առաջ:

բովհետեւ ամէն տեղ էլ չարիքը միեւնոյնն է: Չէ որ շատ սերունդներ են անցնելու, մինչև որ յնտանիքում անհետանան օտար բարքերի վերջին հետքերը: Ամէն մարդ պատահած է ծագումով գերմանացիների, սրանց Ֆրանսիացած որդիներին կամ թոռներին, և ամէն մարդ էլ նկատած կը լինի, որ այդ մարդկանց մօտ տեսնոն մշակոյթը յարատեւում է:

Ի՞նչ ասել գերմանական այն օրէնքին *), որ ոչնչացնում է օտարների գերմանական քաղաքացի դառնալու իրաւունքը. միթէ դա բաւարար չափով ցոյց չէ տալիս նենգամտութիւնն այն մարդկանց, որոնց Ֆրանսիացիներս հիւրընկալում ենք: Դա մեզ միթէ չը պէտք է թելադրէր ընդմիջտ մերժել Ֆրանսիական քաղաքացի դառնալու մասին նրանց բոլոր խնդիրքները:

Նրանք, որ շահ ունէին աչք գոցելու օտարականների Ֆրանսիական քաղաքացի դառնալուն վրայ, պատըրակում էին, թէ քանի որ Ֆրանսիացի ժողովուրդը չէ աճում, անհրաժեշտ է նրան ուժեղացնել օտար տարրերով: Դա մի ամօթալի խաբէութիւն է՝ անխոստովանելի շահերը ծածկելու նպատակով. դա նոյնիսկ ոճիր է, որովհետեւ այդպիսի սկզբունքների հետեւելով Ֆրանսիան շուտով կանհետանար իբր բարոյական ու իմացական Ֆրանսիա. նա կը դառնար մի տեսակ միջազգային երկիր՝ առանց ուրիշ աւանդութեան, եթէ ոչ նիւթական շահը, և առանց իտէալի:

*) Delbrück-ի օրէնք, յօդ. 25, 2-րդ հատած, 1913 թ. յուլիսի 22-ի, գերմանական քաղաքացւ հանգամանքն ընդունելու և կորցնելու մասին:

Յայտնի է, թէ Հիւսիսային Ամերիկայի Միացեալ-Նահանգները բնակչութեան միջազգային կազմը վերջերս ինչքան խոչընդոտ էր հանդիսանում այդ մեծ հանրապետութեան որոշումներին: Նկատուեց, որ պետութեան մէջ մի հսկայական ընդդիմադրութիւն (օպպոզիցիա) առաջացաւ այն քաղաքականութեան դէմ, որ ամերիկեան կառավարութեան թելադրում էին իր պատիւը, արդարութիւնն ու նոյն իսկ ազգի շահը: Բանը նրանումն է, որ աշխարհի բոլոր երկրներից եկած զաղթականներից բաղկացած ամերիկեան ժողովրդի մէջ ամեն ազգութիւն պահպանւել է իր աւանդութիւններով հանդերձ, յաճախ իր ծննդավայր երկրի շահն աւելի առաջնակարգ համարելով, քան որդեգրող հայրենիքի շահը:

Հիւսիսային Ամերիկան դեռ ևս սեփական հանձար չունի. նրա մշակոյթն արդիւնք է օտար մտածողութիւնների, և նրանում ամեն անհատ ներկայանում է, եթէ ոչ իր լեզուով, գոնէ իր բնատոնմիկ ոգիով, ձգտումներով ու աւանդութիւններով: Այս հարուստ ու հզօր պետութեան մէջ շահագիտական գործառնութիւնից դուրս ոչ մի լայնատարած իդէալ չկայ: Ճիշդ է, որ դաստիարակւած հոգու տէր մարդկաց մէջ կայ մի իրական զգացում, թէ ինչ որ բաներ պահասում են հասարակութեան իմացական կարիքների համար, և ամեն օր ոսկու հեղեղներ են հոսեցւում ճաշակ ստեղծելու համար, բայց դեռ ոչ մի բոց չթայթեց այդ շատ բազմամարդ և գործունեայ, շատ առատաձեռն և եսասէր, շատ արիասիրտ ու վախկոտ ազգի միջից. մինչ օտար ծագում ունեցող քաղաքացիների խմբակներ ձգնում են պետութիւնը քարշ տալ

դէպի իրենց նախկին հայրենիքի իդէալը *): Ահա միջազգայնական թէորիաների արդիւնքը: Ամբողջ դարեր են հարկաւոր, որ այս ազգը կատարեալ միութիւն գոյացնէ. իսկ այդ միութիւնը կը սկսի ծնւել միայն երկար ժամանակ յետոյ այն օրից, երբ Միացեալ Նահանգները ունենալով բաւականաչափ ազգաբնակչութիւն, կը հրաժարեն օտարականներին իբր ամերիկեան քաղաքացի որդեգրելուց:

Դեռ երկու դար չկայ, որ Հիւսիսային Ամերիկայի երկրամասերն անգլիական ու Ֆրանսիական էին: Այն ժամանակ այնտեղ մտածում էին այնպէս, ինչպէս Եւրոպայում, և ինչպէս տակաւին մտածում են կանադայում: Ինչքան ճանապարհ է կտրւած այդ ժամանակից սկսած: Այսօր ամերիկեան մտայնութիւնն ինչքան տարբեր է անգլիականից, թէպէտ այդ երկու ժողովուրդները միեւնոյն լեզուն ունեն. ինչքան փոփոխութիւններ են առաջացել հոգիներում՝ օտարականների հետ շփւելով:

Կարելի չէ գիտնալ, թէ լիտագայում ինչ կը յառաջանայ այդքան տարբեր տարրերի խառնուրդից, մինչ բոլոր ժամանակների փոճից գիտենք ազգայնականութեան, մի ժողովրդի ինքնիրան զարգացման արդիւնքները. և ինչ էլ որ պատահի ցեղերի խառնուրդի վրայ հիմնւած պետութիւններին, մենք չենք կարող վստահ լինել, որ նրանք մի օր կը հասնեն այն ժողովրդների իմացական ու բարոյական բարձրաց-

*) Այս գիրքը գրւած լինելով Միացեալ Նահանգների պատերազմի միջամտելուց առաջ՝ հեղինակն ակնարկում է ամերիկեան ազգի միջև գերմանական գաղթակալից պրոպագանդը:

ման աստիճանին. որոնք յարգում են իրենց աւան-
դութիւնները, խանդավառութեամբ են կապւած իրենց
նախնիքների գործերի յիշատակին: Ամեն բանից ա-
ռաջ պէտք է, որ նոր երկրներում դարերը ծնեն ազ-
գութեան պատմութիւնը, աւանդութիւնը, զգացումը,
ստեղծեն սրտի աշն թրթռումները, որոնք քաղաքա-
ցուն մղում են հայրենիքի շահն իր անձնական շա-
հերից բարձր դասելու:

Սակայն ես հեռու եմ այն մտքից, որ Ֆրանսիան
պէտք է խզէ իր հիւրընկալութեան դարաւոր աւան-
դութիւնները. ընդհակառակը, թող նա շարունակէ
ընդունել օտարներին՝ փորձառութեան թելադրած վի-
րապահումներով, բայց թոյլ չտայ իր գաւազների պէս
չմտածող մարդկանց միջամտել իր գործերին, որ նա
իր սեփական ազգութեան վրայ հակէ միեւնոյն նա-
խանձախնդրութեամբ, ինչպէս հպատակ ժողովուրդ-
ները՝ իրենց նախնիքների բարոյական ու իմացական
ժառանգութեան վրայ:

Ճնշած ժողովուրդների ազգային վերականգ-
նումն անտարակոյս կը դանդաղեցնէ օտարների նոր
երկրի քաղաքացիներ դառնալու չարաղէտ հոսանքը՝
ինչպէս Ֆրանսիայում, նոյնպէս և ուրիշ երկրնե-
րում: Դա ամենամեծ ծառայութիւնը կը մատուցանէ
բոլոր ժողովուրդներին՝ իւրաքանչիւրին հնարաւորու-
թիւն տալով յառաջագիծել իր սեփական հանճարի ար-
ժէքաւորումով, զանազան մտայնութիւնների լոյսը
ճիգերը կենտրոնացնելով իրենց սեփական միջավայ-
րում, մահացու հարւած տալով միջազգայնութեան, ո-
րի ախտաւոր հետեանքներին են ենթարկւում բոլոր

պետութիւնները մի դարուց ի վեր: Բայց, որպէսզի
իրաւունք ունենանք մեր մշակոյթը գերծ պահելու օ-
տարազդեցութիւններից, պարտական ենք իւրաքանչիւ-
րին վերադարձնել իր ընտանեկան յարկը:

* * *

Եւրոպական բոլոր ժողովուրդների միջև ֆրան-
սիացին ազգային տեսակէտով անշուշտ ամենից աւելի
միացածներից մէկն է: Ֆրանսիական զօրամասերի
քաջութիւնը, պատերազմի ընթացքում ազգաբնակու-
թեան հանգարտութիւնը, «Սրբազան Միութիւնը» ա-
պացուցին այդ: Եւ սակայն Ֆրանսիան բաղկացած
է բազմաթիւ տարբեր ժողովուրդներից, որոնք միա-
ցած են ընդհանուր շահերով, սիրովը միեւնոյն՝ հայրե-
նիքի, որի բարգաւաճմանն են ուղղել իրենց ճիգերը,
որի համար իրենց կեանքն են դրել բոլոր ֆրանսիա-
ցիները:

Ֆրանսիայում խօսւում են բրըտոն, ստորին—
նորմանդիական, ֆլամանդրիական, օվերնեակ, իտալա-
կան, կատալոն բարբառներ և մի շարք ուրիշ գեղջկա-
բանութիւններ: Ժամանակին, երբ Ֆրանսիան բաժան-
ւած էր նահանգների, ամէն մի բարբառ ունէր իրնոգա-
մասը, իր պարլամենտը, և իւրաքանչիւր ժողովուրդ
վայելում էր մի տեսակ ինքնավարութիւն, կարողանում
էր պաշտպանել իր շահերը: Տերիտորիայի կամայական
կերպով բաժանման ենթարկւելուց ի վեր, առաւելապէս
նախկին նահանգների սահմանները ջնջելու մտադրու-
թեամբ, միայն շահերն են մնացել տարբեր խմբաւո-
րումներով և տակաւին արտայայտւում են նախկին յոր-

ջորջումներով՝ Բրլտաներ, Նորմանդիա, Ֆլանդրիա, Լալյոն։ Արդ, զանազան նահանգների հարազատ շահերն ու զգացումները յաճախ հակասում են իրար, և օրինակ՝ Մարսէյլին նպաստաւոր մի կարգադրութիւն ֆուսս է Լիլին կամ Բորդոյին։

Ամենից յաճախ հակումներն ու կարիքները խմբաւորւում են զաւառաբարբառներով, ինչպէս երբեմն միանում էին նահանգների մէջ։ Իշխանութեան ու օրէնսդրութեան կենտրոնացումը, ընդհանուր տնտեսական, մաքսային և հարկային ձեռնարկները յաճախ վերջիվերջոյ լուրջ անիրաւութիւններ են պատճառում ժողովուրդներին, և Ֆրանսիայի բաղկացուցիչ ազգութիւնների նկատմամբ պետութեան այդ րացարձակ արհամարանքը մի ծանր անարդարութիւն է։ Յուսանք որ ոչ միայն ճնշած ժողովուրդների ձայները կը լսւին նրանց կողմից, որոնց հակառակիքը վստահել է ազգութիւնների բաղբը, այլ և ազգութիւնների զարգացման հարցը մտածել կտայ նաև հին պետութիւնների կազմի մասին, որոնց զանազան նահանգները միացած իրենց հայրենասիրութեամբ, շատ անգամ իրարից հեռու են իրենց շահերով, նկարագրով և մասնաւոր կեանքով։

Ժողովուրդների ձուլման բարբարոս թէորիաները թողնենք տևտոններին. յայտնի է, թէ այդ դաժան մեթոդներով ինչ արդիւնքներ ստացւեցին Լեհաստանում, Ալգաս-Լոտարինգիայում։ Յարգենք իւրաքանչիւրի գաղափարները, դաւանանքն ու լեզուն. զաւառաբարբառները թող ֆիան ընտանիքի, հողի լեզուն, և ֆրանսերէնը թող համապատասխանէ իր դաւակների արիւնով ստեղծւած մեծ ու փառապանծ հայրենիքի

գաղափարին։ Բասկերը, գասկոնները, պիկարները, բրլտոններն աւելի վատ ֆրանսիացիներ չեն լինի, եթէ յարգւին նրանց վաղեմի յիշատակները, մանկութիւնից նրանց սիրած բարբառը։

Ասենք նաև, որ թւում է ընդհանրապէս, թէ ազգերի ապագան աւելի դաշնակցութեան մէջ է, քան կենտրոնացման մէջ։ Ճնշումի բէժիմը՝ բացի այն, որ ոտնահարում է արդարութիւնը, արել է իր տխուր փորձերը—ծայրայեղ կենտրոնացումը, նիւթական զարգացումը, ինչպէս որ հասկացւում էր դեռ 2 տարի առաջ, մի շարք ընկերային յղացումներ մեռան աղէտալի սընանկութեամբ։ Ողջամիտ մարդիկ այժմ հասկանում են, որ անհրաժեշտ է հասարակական գործը վերաշինել նոր հիմքերի վրայ, հրաժարել այն ողբալի փորձերից, որի զոհն է քաղաքակիրթ աշխարհը մի դարուց ի վեր։ Դաշնակցութեան և նահանգականութեան (բեժիոնալիզմ), աւատականութեան այդ ազատագրւած զաւակների միջոցով է, որ մեծ պետութիւնները կարող են գտնել իրենց կայունութիւնը, որ նոր ազգերը կը կարողանան պաշտպանել իրենց օրրանը։ Դաշնակցութեամբ է, որ կարելի է բարի նախանձ առաջացնել ոչ միայն տարբեր ինքնավար պետութիւնների, այլ և քաղաքական միեւնոյն խմբակցութիւնների զանազան բաղկացուցիչ մասերի միջև։ Տեղական բարբառը, սովորոյթները, արդիւնաբերութիւնը, տարազները, ամէն ինչ ներկայումս անհետանում են կենտրոնացման իմպերիալիզմի պահանջած ճապաղ միաձեւութեամբ։ Այդ աւանդութիւնների լքման հետևանքները միայն մակերեսային չեն. նրանք համուռ են մինչև հոգու խորքերը, որովհետև հայրենի հողի ոչ

մի զգացում անհատին այլևս չէ կապում այն վայրերի հետ, ուր ապրել է նա իր մանկութիւնը, ուր գտնուում են իր մերձաւորները, ընկերները: Նա մեկնում է առանց վերադառնալու ցանկութեան, իբր թէ հայրենազուրկ լինէր, և գնում է քաղաքներում քարշ տալու արմատախիլ եղած մարդու անկայուն գոյութիւնը— դա մի օտարական է, որ շատ յաճախ ախտաւոր սերմեր է ցանում իր շուրջը:

* *

Երբ վերջանայ այն սոսկալի աղէտը, որ այս րոպէիս աւերում է հին աշխարհը, պէտք է պայքարել կառավարական նախկին սկզբունքի— իշխելու դէմ, որպէսզի ստեղծւի մի նոր դարագլուխ, ազգութիւնների դարագլուխը: Բայց հին Եւրոպայի կայունութեան պայմաններն այն աստիճան խարսխւած են այնպիսի մի սխտեմի վրայ, որին այսօր դատապարտում են հասարակական բարոյականն ու շահը, որ դժւար կը լինի այժմեանից տալ ազգագրական զանազան ընտանիքներին այն բաւարարումները, որոնց նրանք իրաւունք ունեն: Ամեն մի պետութիւն, մեծ թէ փոքր, դարաւոր աշխատանքով է կազմակերպւած իր կեանքը՝ հիմնւելով պետութիւնների նախկին քաղաքական բեժիմի վրայ: ամեն կապ խզել միանգամից այդ աւանդութիւնների հետ, առանց միջանկեալ ֆազիսի, կը նշանակէր կործանման մատնել մեծ պետութիւններից շատերը: Ուստի, ժողովուրդների ազատագրումը պէտք է լինի մեծ մասամբ երկարատե մի գործողութիւն. որովհետեւ չէ կարելի առանց մեծ վտանգների անց-

նել ծայրայեղ կենտրոնացումից դէպի բացարձակ ազատութիւնը, նոյն իսկ դէպի դաշնակցութիւնն ու նահանգական ինքնավարութիւնը (régionalisme):

Շատ անկախ ժողովուրդներ ունեն այնպիսի իրաւունքներ, որոնք ամենից առաջ պէտք է բաւարարւեն՝ նրանց վերադարձնելով փառասէր հարեանների կողմից խլւած հողամասերը: Այս արդարացի իրաւահատուցումներից զատ, Եւրոպան պէտք է օգնութեան հասնի ճնշւած ազգերին, իրաւազրկւած խմբակցութիւններին վերադարձնելու համար այն ազատութիւնները, որոնց իրաւունք ունի ամեն մէկը:

Եւրոպայում միայն սլաւեան տարրի վրայ է, որ պէտք է սեւեռի պետութիւնների ուշադրութիւնը: Լեհեր, չեխեր, մորաւներ, սլովեններ, խրօտներ, բոսնիակներ և սերբեր թախանձում են մեծ պետութիւններին խղճալ իրենց դժբախտութիւնների վրայ, պահանջում են, որ իրենք էլ օգուեն արեւի լոյսից: Ասիայում մարտիրոսագրւած հայերը, սիւրիացիները պահանջում են ապրելու իրաւունք՝ հայցելով մարդկութեան կարեկցութիւնը:

Այս ալլաղան ազգերից ամենքն էլ փայլուն տրեւալներ ունեն բարեացակամութեան արժանանալու համար, թէև նրանց պատմութիւնները խիստ տարբեր են իրարից: Հայերը, որոնց ծագման մասին ես առիթ կունենամ տելի իրկարօրէն խօսելու, պատկանում են աշխարհի ամենահին ազգութիւններին, մինչ սլաւոնները նորեկներ են Եւրոպայում և քրիստոնէութեան առաջին դարերում պատմութիւն չունեցող բարբարոսներ էին: Բայց իրաւունքը հատուցանելու համար պէտք չէ ուշ դարձնել աղնականութեան տխուրների

հնութեան, այլ իրական, այժմեական իրաւունքին. ինչ որ պէտք է անւի հայերի համար, նոյնը պէտք է անւի և Եւրոպայի սլաւոնների համար: Այդ ազգերն իրենք արդէն հոգ տարած են դասաւորելու իրենց պահանջներն այնպիսի ձևով, որ համաձայնութեան պետութիւնները հնաւորութիւն կունենան բաւարարութիւն տալ նրանց՝ քննութեան ենթարկելուց և համաշխարհային քաղաքականութեան պահանջների համաձայն սրբազրկելուց յետոյ:

Սլաւոնների միջև 3 խմբակցութիւններ են կազմուած—լեհեր, հարաւային սլաւոններ և Բոհեմիայի ու Մորաւիայի չեխեր:

Լեհերի մասին Ռուսաստանը ստանձնել է յանձնառութիւններ, որոնց չէ կարող փոփոխել աւստրօ-գերմանների խաղացած անարժան կատակերգութիւնը: Ուրեմն հարաւային սլաւոններն և չեխերն են միայն, որ պետութիւններից ահնկալում են իրենց ճակատագիրը:

Հարաւային-սլաւոնները մի մասն են կազմում շատ աւելի նոր մի ներխուժման, քան հայերը: Ներանք պատկանում են այն մեծ մակընթացութեան, որ 3-րդ դարու մօտերն եկաւ ջախջախել յոյն—հռովմէական հին քաղաքակրթութեան սահմանները, և որ կործանելով արևմուտքի և արևելքի կեսարների կայսրութիւնը, նախ արաբներին և ապա թիւրքերին դիւրացրեց նաճել քաղաքակիրթ աշխարհի կէսը: Այս նորեկները յիշեալ դարաշրջանում մի չարաղէտ դեր կատարեցին. բայց սլաւոնները հեռոգհեռ հաստատուեցին Բալկաններում, քաղաքակրթեցին և, աւերիչներ լինելուց յետոյ, արևելքի բարբարոսների ոտնձգու-

թիւնների դէմ պաշտպան կանգնեցին այն ամենի, ինչ մնում էր հին աշխարհից:

Հարաւային-սլաւոնները, ինչպէս բոլոր այն նախնական ժողովուրդները, որոնք այդ դարաշրջանում նաճեցին Եւրոպան, բաժանուած էին ցեղերի, որոնք աստիճանաբար կազմեցին թագաւորութիւններ: Ամենից առաջ, 7-րդ դարում հիմնեց սլովեն պետութիւնը, որ 9-րդ դարում տապալեց գերմանների և հունգարների հարածների տակ: 9-րդ դարումն է, որ երևացին Սերբիան ու Սրօաւիան. այս իշխանութիւններից վերջինն, որոշ յաջողութեամբ պատերազմեց Վենետիկի հանրապետութեան դէմ. բայց, ինչպէս սլովեն պետութիւնը, հունգարացիներից ջախջախեց (1102 թւականին). ապա, թիւրքերի ներխուժման շրջանում, կցեց Հաբսբուրգների կայսրութեան (1526 թ.), ինչպէս միացել էին և իր արիւնակիցները: Գալով սերբիական պետութեան, նա բիւզանդացիներին ու բուլղարներին յաղթելուց յետոյ կործանեց Պոլսի սուլթանների հարածների տակ (1371, 1389 թ.):

Ես կանգ չեմ առնելու հարաւ-սլաւոն այն զանազան տարրերի պատմութեան վրայ, որոնք մի առ մի մարտիրոսագրեցին թիւրքերի կողմից, ճնշեցին հունգարներից: Ամեն մարդ գիտէ հարաւային Աւստրիայի սլաւոնների փորձերը 1848-ին, 1870-ին, 1878-ին՝ ազատելու Հաբսբուրգների լծից, և այն վայրագութիւնը, որով նրանք պատժեցին: Իշխողները նրանց բաժանելով վարչական տեսակէտից՝ յոյս ունէին չքացնել նրանց ազգային միութեան զգացումը: Այդ քաղաքականութիւնը թելադրում էր հին աւանդութիւններից: Գերմանական կայսրերն իրանց

համարելով կեսարների ժառանգորդներ՝ թշնամի էին համարում Եւրոպա նոր եկած բոլոր ժողովուրդներին, նրանց հետ վարում էին օրպէս բարբարոսների հետ, ամեն կերպ աշխատում էին տկարացնել, ստրկացնել նրանց: Վիեննայի իմպերիալիստական յաւակնութիւնները տարածւում էին նոյնպէս Իտալիայում և սլաւոն դարձած Մակեդոնիայում. նրա ձգտումների նպատակակէտն էին հանդիսանում Հոռովմն ու Պոլիսը:

Բոլոր հարաւային-սլաւոնները, լինեն նրանք սերբեր, խրօտաներ, սլովեններ թէ ուրիշներ, խօսում են միևնոյն լեզուի բարբառները, ղեկավարւում են միևնոյն շահերով և համակամ են հայրենասիրական միևնոյն զգացումներով: Միակ տարբերութիւնները, որ կարող են յարուցել նրանց միջև, կրօնական համոզումների մէջ են. բայց այդ ժողովրդի մէջ կաթուղիկները, յունադաւաններն ու մահմեդականները միևնոյն իգէալն ունեն, այն է ամբողջ համայնքի ազատագրումը՝ մի մեծ Սերբիայի ձևով: Նահանգների շահերի և հակումների յարգանքը այդ նոր պետութեան մէջ՝ պէտք է լինի ներքին քաղաքականութեան տնօրինութեան առարկայ *):

Անկարելի է նախատեսել, թէ հաշտութեան վեհաժողովը ինչ որոշումներ կը կայացնէ Սերբիայի զարգացման մասին. նա անշուշտ ահագին հատուցումներ կը ստանայ ի փոխարինութիւն իր սքանչելի քաղութեան, որպէս զի կարողանայ ամօքել այն սոսկալի թշուառութիւնները, որոնց նա զոհ դարձաւ: Բայց մի

*) Այստեղ մի ամբողջ պարբերութիւն հանւած է ֆրանսիական զրաքննութեան կողմից:

կողմից՝ ազգութիւնների յարգանքը ստիպողաբար առջ չէ քաշում մի միակ հարաւ-սլաւոնական պետութեան հիմնումը, և միւս կողմից՝ պատերազմող մեծ պետութիւնները, որոնք զէնքի դիմեցին սերբական հարցի առթիւ, անշուշտ ամբողջովին չեն զոհելու իրենց շահերը՝ կռիւ դաշտում իրենց զինւորների առիւնը թափելուց յետոյ: Հետեւեալը, խոհեմութիւն է ձեռնպահ մնալ հարաւային-սլաւոնների քաղաքական ապագայի մասին որեւէ որոշ բան ասելուց, միաժամանակ ջերմ ցանկութիւն յայտնելով, որ ազատութեան մասին նրանց տածած սէրը ստանայ բոլոր այն բաւարարումները, որոնց իրաւունքը ձեռք բերեց սերբ բանակների հերոսութեամբ:

Ինչ վերաբերում է Բոհեմիային, որ հայրենիքն է վեհ ձգտումների, վաղեմի բարեկամը Ֆրանսիայի, ամենահարուստ իր հանքերով, իր հողերի արգասաւորութեամբ, իր ժողովրդի եռանդով և իմացական սեռ փթթումով, նա ամեն տեսակէտից կը դառնար Եւրոպայի ամենազարգացած երկրներից մէկը, եթէ դարերից ի վեր չպահէր Աւստրո-Հունգարիային ենթակայ վիճակում: Նա այսօր Հաբսբուրգեան պետութեան արդիւնաբերական հզօրութեան ամենազլխաւոր աղբիւրներից մէկն է հանդիսանում. եթէ ազատագրելի, նա շուտով կը դառնայ Բելգիայի, Ֆրանսիայի հիւսիսային նահանգների, Անգլիայի ամենածաղկած կոմսութիւնների մրցակիցը:

Ազգային տեսակէտից՝ չեխերը պահանջում են, որ Մորաւիան ու Սլովաքիան միացնեն իրենց՝ կադմիլու համար 10—12 միլիոն ազգաբնակչութիւնից բաղկացած մի դաշնակցական պետութիւն, որ կը գրաւէ

կենտրոնական Եւրոպայի մէջտեղը, և առաջարկում են այս կերպով պատնէշ կանգնել հիւսիսի և հարաւի գերմանացիների միջև: Համաձայնութեան պետութիւններից ոչ ոք չէ կարող առարկութիւններ յարուցանել այդպիսի մի պետութիւն ստեղծելու դէմ, քանի որ նրա գոյութիւնը մեծապէս նպաստաւոր կը լինի համաշխարհային խաղաղութեան շահերին:

Բոհեմիայի բնական սահմանները նշանակած են այն լեռնաշղթաներով, որոնք եզերում են նրա կազմած քառանկիւնը: Այդ բնական օրէնքները չը յարգելը կը նշանակէր ահագին ֆլաս պատճառել չին ժողովուրդին թէ՛ նրա տնտեսական կեանքի և թէ՛ ապահովութեան տեսակէտից: Ուստի կատարեալ անհրաժեշտութիւն է զուտ սլաւոն գաւառներին միացնել այն հողաշերտերը, ուր հաստատւած են գերմանախօսներ, և որոնք աշխարհագրականապէս մասն են կազմում ս. Վենցեսլասի թագաւորութեան. եթէ պէտք է անարգարութիւն լինի երկու ազգութիւններից—սլաւոններից կամ տետոններից—մէկի հանդէպ, անտարակոյս ի ֆլաս գերմանացիների պէտք է լինի դա: Vae victis:

Յայտնի է, որ սլաւոնները գրաւեցին Պրագան գերմանների ձեռքից 5-րդ դարում, և Բոհեմիան, որ քրիստոնեայ դարձաւ 9-րդ դարում, վաղուց ի վեր կաղմում էր մի անկախ թագաւորութիւն, որ մօտ հազար տարւայ գոյութիւնից յետոյ, 1545 թւականին ենթարկեց Աւստրիայի լուծին: Ուստի չինքը մօտ 400 տարի է կորցրել են իրեց ինքնավարութիւնը, և տառապանքի այդ երկար ժամանակաշրջանում աղգային ոգին անաղարտ է մնացել նրանց մէջ: Հարաւի

գերմանները աշխատել են գերմանացնել այս ժողովրդին, ամէն միջոց գործադրել են, նոյնիսկ ամենից աւելի անասելիները, ձուլելու համար այս հերոսական ազգաբնակութեանը, սակայն միշտ էլ ապարդիւն: Աւստրիան դրանով միայն հրահրել է իր զոհերի ատելութիւնը: 30 տարի առաջ, երբ ես իբր երկրաբան անցնում էի Բոհեմիայից, յաճախ հարցումներ էի ուղղում գիւղացիներին Ֆրանսերէն լեզուով, թէպէտ վըստա՞ն էի, որ չեն հասկանալ. այդ կերպով իմ ազգութիւնը յայտնելուց վերջն է, որ գերմաներէն էի խօսում: Եթէ առաջին անգամից իսկ ատելի տէրերի լեզուով արտայայտէի, բոլորովին այլ ընդունելութիւն կանէին ինձ, քան այն, որին իրաւունք էր տալիս իմ Ֆրանսիացու հանգամանքը՝ Բոհեմիայի մեր սլաւոն քարեկամների կողմից:

Սլաւեան հարցը շօշափում է ամբողջ Եւրոպայի կենսական շահերը. հաշտութեան վեհաժողովում չինքերի և հարաւային սլաւոնների մասին արւելիք որոշումները շատ մեծ ծաւալ կունենան, և վիճաբանութիւններին կը միջամտէ մեծ ազգերի աւանդական քաղաքականութիւնը: Ուստի նախադասելի է ձեռնպահ մնալ այդ ծանրակշիռ հարցում և մատնանշել միայն, թէ ինչ են սլաւոն ժողովուրդների յոյսերն ու ազատագրման համար նրանց տեսլանքները: Հարցը միևնոյն բնոյթը չունի հայերի համար, որոնց մասին խօսելու եմ ստորև: Այս ժողովուրդն ապրելով Ասիայում՝ նրա քաղաքական վերածնունդը չի առաջացնիլ այնպիսի ծանրակշիռ հետեանքներ, ինչպէս սլաւոն երկիրների ինքնավարութիւնը. ընդհակառակը, նա դէպի արեւելք, կը տարածէ քաղաքակրթութիւնը և մեծ օժանդակութիւն ցոյց կը տայ ընդհանուր յառաջադիմութեան՝ առանց որեւէ մէկին ֆլաս պատճառելու:

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ՀԱՅԵՐԸ

Ազգային քաղաքական կեանքի վերականգնման կոչւած բոլոր ժողովուրդների միջև, ազգային վերածնունդ ունենալու խնդրում, ամենից աւելի շահագրգռւողներից ու արդարացիներից մէկն է անտարակոյս հայ ժողովուրդը, որ չնայած ամենազարհուրելի հաւածանքներին, հակառակ իր բարբարոս իշխողների ճիգերին, կարողացել է դարեր շարունակ պահել իր աւանդութիւնները, լեզուն ու նախնիքների պաշտամունքը: Հայի կենսունակութեան այդ յարատեւութիւնն Արեւելքի պատմութեան ամենանշանակելի երևոյթներից մէկն է և իր տեսակում համարեա եղակի մի բան. որովհետեւ արաբներին ու թիւրքերին ոտըկացած ժողովուրդների միջև քչերն են, որ կարողացել են պահել ազգութեան երեքյատկանիշները—բարձրը, լեզուն ու կրօնը:

Գերբերը, հին Պարսկաստանի մագդէնական վերջին բեկորները, դեռ ևս մնում են իբր համայնք՝ միայն իրենց դաւանանքով. նրանց հին լեզուն անհետացել է՝ տեղի տալով արդի պարսկերէնի գաւառաբարբառներին, խառնւած հնաբանական ձևերի հետ: Քաղաքացիները, մեծ մասամբ քրիստոնեաներ, խոշոր չափով լքած են իրենց լեզուն. նրանցից շատերը կրօնափոխ եղան և ձուլեցին արաբական գանդածի մէջ:

Ս. Յովհաննու սակաւթիւ քրիստոնեաները (բապտիստները), որոնք բնակւում են Ստորին-Քաղդէաստանում, դեռ ևս միացած են մնում կրօնական հաւատալիքներով. բայց նրանց հին լեզուն մնած է:

Եկիպտոսում զպտերը պահելով հանդերձ քրիստոնէութիւնը՝ մի դարուց ի վեր հետզհետէ կորցրին իրենց լեզուն. Սիւրիան մոռացաւ իր աւանդութիւնների մեծ մասը, այնպէս որ զպտերն ու սիւրիացիներն այժմ լսում են միայն իրենց իշխողների լեզուն:

Մահմեդական կրօնն աստիճանաբար կարողացել է ոչ միայն ձուլել լեզուն, այլ և փնասել դաւանանքներին: Այսօր քրիստոնէութեան բեկորներին է միայն, որ պատահում ենք թիւրքական կայսրութեան մէջ:

Գրեթէ միայն հայերն են ունեցել այդ փոթորկին դիմադրաւելու բարոյական ոյժը. միայն նրանք են, որ պահած են իրենց նախնիքների իմացական ու բարոյական աւանդութիւնը:

Այս ցեղի պատմութիւնը սկսւում է շատ հին ժամանակներից: Զգիտենք՝ որ տեղից գալով Եւրոպայում բնակութիւն հաստատած ժողովուրդների հետ միաժամանակ, հայերը հին ժամանակներում բնակւել

են Ռուսաստանի տափաստաններում և Դանուբի հարթավայրերում, երկար ֆնացել են Թրակիայում, ուր կողք կողքի ապրել են իրենց ցեղակից հելլենների հետ։ Ապա նրանց հանդիպում ենք Հելլեսպոնտն անցնելիս՝ մոտաւորապէս Տրոյայի պատերազմի դարուն. յետոյ հաստատուում են Փոիւզիայում, փոիւզիացիների հետ միասին, որոնց մի մեծ ցեղն էին կազմում այն ժամանակ։ Այս ժամանակաշրջանում հաղեան պետութիւնը նոր էր վերջ գտել։ Հակառակ գաղթականութիւնների ընդհանուր օրէնքին՝ հայերը Փոիւզիայից առաջացել են դէպի արեւելք, Եփրատի վերին հովիտով և զնացել են գրաւել Վանայ, Ուրմիայի, Կարնոյ և Այրարատի շրջանները։ Այդ ժամանակ ուրարտեան թագաւորութիւնն արդէն անհետացած էր։ Հայերը հաստատուեցին նրա աւերակների վրայ։

Այդ շրջանին է, որ երեւան է գալիս Հայկի մեծ դէմքը, աւանդութիւնների մէջ առասպելական, բայց վստահաբար իրական մի անձնաւորութիւն, որին Մովսէս Խորենացին պատկերացնում է հերոսական կերպարանքով, պատերազմելիս Բեյի, այսինքն Ասորեստանի թագաւորների դէմ։ Մեր օրերի Մեծ-Հայքն այն ժամանակ գրաւած էր կովկասեան այժմեան ժողովուրդների՝ լաւերի, մինգրելների և վրացիների ազգակից ցեղերով։ Ասորեստանի թագաւորները մըտածում էին տիրանալ նրան՝ Վանայ ծովափի հզօր պետութեան անկումից յետոյ։ Բայց Նինւէն ինքը պէտք է ընկնէր քիչ վերջ, և այդ յիշաշրջման շնորհիւ է, որ հայերը ժամանակ ունեցան ամբապնդելու իրենց իշխանութիւնը՝ Հայկի առաջնորդութեամբ զբաւառ գաւառներում։ Հայերի առաջին թագաւորու-

թիւնը, «Հայաստանը», հիմնւեց Քրիստոսից վեց կամ եօթ դար առաջ, և Հայկի անունը ֆնաց մինչև մեր օրերը՝ համադրելով հայ տարրը, որ նոր էր բաժանւել փոիւզիական ազգից։

Նինւէի կործանումից մի քանի դար յետոյ Մարաստանը կորցրեց իր իշխանութիւնը։ Նրա թագաւորութիւնն անցաւ պարսիկների ձեռքը, որոնց հեղեղը Իրանի նախկին տէրերին ստիպեց քաշել դէպի լեռները։ Այդ ժամանակ է, որ այդ ցեղերը շփման մտան հայերի հետ և յետ մղւելով արեւելքից՝ այդ ձնշումը փոխանցեցին Այրարատի ժողովուրդներին։

Մարերն իրանեաններ էին, ինչպէս պարսիկները, և առաջին աշիքն էին Առաջաւոր-Ասիա ներխուժող այդ ազգազրական խմբակի։ Նրանք բռնել էին Պարսկաստանի ամբողջ հիւսիսային մասը, Ատրպատականն ու Արաքսի հովիտը և քաշեցին դէպի Արարատի հարաւային կողմն եզերող լեռնաշղթան և դէպի Տիգրիսի ու Եփրատի վերին հոսանքները, ուր և հաստատուեցին քիչ անւան տակ, ինչպէս կոչւում են մինչև այսօր էլ։ Իսկ լատին դասականները (կլասիկ) նրանց անւանում են կարդիւկներ։

Ուրեմն հայերը շրջապատւած էին հիւսիսից վըրացիներով ու մինգրելներով (իբերիացիներով), հիւսիս-արեւմուտքից լազերով (սասպիրներ, մոսխեր), արեւելքից կասպեան և կազսեան ցեղերով, ստորին Երասխի վրայ, և հարաւից՝ քիւրդերով։ Այս ժամանակներից սկսած յարատե պատերազմ ունենալով իրենց զանազան հարեանների հետ՝ հայերը հետզհետէ դէպի հիւսիս մղեցին իբերիացիներին (մինգրելներին). Կասպեանների կողմից, ըստ երևոյթին, մեծ դժա-

րութիւններ չեն կրել. իսկ լազերի և մանաւանդ քիւրդերի դէմ նրանք սոսկալի կոխներ են մղել և մղում են մինչև այսօր էլ:

Միայն Աքեմենեանների օրով է, որ հայերը սկըսեցին բաղադրական կարևոր դեր խաղալ: Դարեհ I-ի օրով Հայաստանը կազմում էր մի սատրապութիւն, որ տարածւում էր Արաքսից մինչև Եւքսինեան Պոնտոս՝ ծովեզրում ունենալով Տրապիզոնը, Կիրասոնն և Օրտոնն (Cotiora?): Բայց շուտով ծովեզրը դուրս եկաւ նրա ձեռքից, և Հայաստանը սահմանաւորւեց Պոնտեան Ալպերից այս կողմը: Ինչ վերաբերւում է Իբերիային, Կողքիսին և Լազիստանին, նրանք միշտ էլ Աքեմենեանների կայսրութիւնից դուրս մնացին, այնպէս որ պարսկական այդ արքայական տան իշխանութեան տեղութեան ընթացքում հայերը մնացին սահմանակից ժողովուրդ և հէնց սրա համար էլ ստիպւեցին դիմագրել հիւսիսային թագաւորութիւններին:

Ո՛չ մի հայ հեղինակ տեղեկութիւններ չէ տալիս մեզ Աքեմենեանների օրով այս երկրում տեղի ունեցած դէպքերի մասին. բայց պարսիկների վիմագիր արձանագրութիւնները լրացնում են այդ բացը և պատմական ամբողջութիւնը հնարաւոր է դարձնում հասկանալ, թէ ինչպէս էր Հայաստանի գրութիւնն այն ժամանակ: Այն դաժան կոխները, որ նրանք մղեցին իրենց անկախութեան պահպանման համար, նրանց զէնքի յաջողութիւններն արքայից արքայի հոծ բանակների վրայ՝ ցոյց են տալիս, որ այս ժողովուրդն ուժեղօրէն կազմակերպւած և հզօր էր: Բանակների բազմաթիւ առաքումներ անհրաժեշտ եղան Հայաստանը հարկատու դարձնելու համար:

Հերոդոտ (VII, 73) նկարագրելով Քսերքսէսի բանակը Հելլեսպոնտից անցնելիս (Ք. ա. 486 թ.)՝ այսպէս է արտայայտւում հայերի մասին.

«Հայերը գինւած էին փոխգիացիների պէս, որոնց մի զաղութն են կազմում նրանք: Թէ՛ մէկի եւ թէ՛ միւսի հրամանատարութիւնը տալն ընել էր Արտոքսը, որ ամուսնացել էր Դարեհի մի աղջկայ հետ»:

Մի քիչ վեր (VII, 73) յոյն պատմագիրն ասում է. «Փոխգիացիները, մակեդոնացիների ասելով, բրիգններ էին կոչւում, քանի ընտելւում էին Եւրոպայում եւ մտնում էին նրանց (մակեդոնացիների) հետ, բայց անցնելով Ասիա, փոխելով երկիրը՝ փոխեցին նաև իրենց անունն եւ կոչեցին փոխգիացիներ»:

Ինչպէս տեսնում էք, այս մի քանի տողերը չափազանց թանգարժէք են հայերի ծագման հարցում: Գալով փոխգիացիներին, որոնց մասին խօսում է Հերոդոտը, հայերի եղբայրակից այդ ժողովուրդը աստիճանաբար ձուլւեց յոյն տարրի մէջ, որ գերակշռւում էր Փոքր-Ասիայում, և իբր ազգ անհետացաւ աշխարհի երեսից:

Մինչև Ք. յ. հինգերորդ դարը Հայաստանը սեփական տառեր չունէր իր լեզուով գրելու համար: Անդրկովկասում և Այրարատեան երկրներում գործածական էր ասորերէնը իբր կրօնական լեզու, իսկ ընթացիկ կենանքում պահլաւերէնն ու յունարէնը: Սրանից հետևում է, որ բերանացի փոխանցւած պատմական յիշատակները շատ շուտով փոխակերպւեցին առասպելների և աւանդավէպերի: Այդ աւանդութիւնները վերարտադրւում են յետագայ պատմագիրները,

ամենից առաջ Մովսէս Խորենացին, երբ նա խօսում է ցեղի հերոս Հայկի մասին, որ երբեք չկամենալով գլուխ ծռել Բաբելոնի բռնապետ Բելի լուծին, քաշուում է Հայաստանի լեռները, հետապնդում է Բելի կողմից, որ հասնում է մի հզոր բանակի գլուխն անցած, իր մարդկանցով կուում է նրա և նրա բազմաթիւ զօրախմբերի դէմ, սպանում է նրան տաք կուում շեշտակի արձակած նետով, ցրիւ է տալիս նրա բանակն ու հիմնում է հայկական անկախ հայրենիքը»:

Իսկ այն վիպական գիւցագնեղութիւնը Արա Գեղեցիկի, որ զոհւում է հայրենիքի և իր կնոջ Նըւարդի հանդէպ հաւատարմութեան համար՝ մերժելով Շամիրամի ձեռքն ու գահը.— դրանում միթէ չէ լըսուում ազգութեան և հաւատքի նկատմամբ յարգանքի արիական վաղեմի աւանդութիւնների արձագանքը:

Բոլոր ժողովուրդների մէջ էլ ցեղի ծագման յիշողութիւնները փոխւած են աւանդավէպերի. յաճախ այդ շփոթ զրոյցների մէջ կարելի է գտնել իրական դէպքերի մասին ակնարկութիւններ: Առհասարակ հայկական աւանդութիւններն աւելի յստակ են, քան ինչ որ սովոր ենք պատահել այլ դէպքերում, և հնարաւորութիւն են տալիս գէթ իրենց խոշոր գծերում վերաբրտադրելու այդ ժողովրդի շարժումներն ու ճիւղերը: Դրանց մէջ կան այնպիսի հաւաստիացումներ, որոնք համաձայն են դասական հեղինակների ասածներին և այն հետքերին, որ հայերը թողել են գաղթականութեան ընթացքում իրենց անցած երկրներում: Չանազան անուններ, ինչպէս Ասքանազեան լիճ, Ասքանազեան նաւահանգիստ և Ասքանազեան կղզիներ՝ Վոսփորի շրջաններում, նոյնպէս վկայում

են Ասքենազուի, ըստ Աստածաշնչի՝ Ասքանազի, այսինքն փոխդիպցիւնների, որոնք իրենց ազգի մէջ պարունակում էին և հայերին, գաղթականութեան մասին:

Աքեմենեանների կայսրութեան անկման և մակեդոնական աշխարհակալութեան ժամանակ՝ կիսանկախ Հայաստանը, որ արդէն իր թագաւորներն ու ազատութեան աւանդութիւններն ունեցած էր, ենթարկւեց Պարսկաստանի միւս բոլոր սատրապութիւնների բախտին. սակայն շուտով ազատուեց Միւրիայի (Ասորիքի) Սելեւանների լծից և վերստացաւ իր անկախութիւնը:

Այսպէս թէ այնպէս, առաջին Սելեւանների ժամանակակից մի արքայական տնից յետոյ, բնիկ պատմագիրները տալիս են յունական տիրապետութեան շրջանը. այս ժամանակ է, որ Մեծն Անտիոքոսը պարտուեց հռոմայեցիներից: Դրանով Հայաստանը դարձեալ ազատուեց և բաժանուեց երկու թագաւորութիւնների—Մեծ-Հայք՝ Եփրատից արեւելք և Փոքր-Հայք, որ տարածւում էր Եփրատից արեւմուտք: Արտաքսիան (Արտաշէս) իշխում էր Մեծ-Հայքում, իսկ Չարիադրէսը (Չարհ)՝ Փոքր-Հայքում:

Դա Հայաստանի ամենափառաւոր շրջաններից մէկն է: Այդ երկու իշխանները դաշնակցելով յոյների և հիւսիսի ու արեւելքի իրենց խոովասէր հարեանների հետ՝ ընդարձակեցին իրենց երկրները, մեծ դեր խաղացին այն ժամանակաւ ասիական ընդհանուր քաղաքականութեան մէջ և հիմնեցին իշխանութիւններ, որոնք շարունակեցին մի քանի դար: Յետոյ, պարթևեան շրջանում, տեսնում ենք մի առանձին արշա-

կունի թագաւորութեան կազմութիւնը, որ ազգակցական կապեր ունի արքայից արքայի հետ, բայց միշտ անկախ է: Հայաստանը մնալով հռովմէական և պարսկական վեհապետների կալաւածների միջև, դաշնակցելով իր հօգի հարևաններից մէկ սրա-մէկ նրա հետ, երկար դարեր ենթարկեց պատերազմի աղէտներին: Նա արիաքար դիմագրաւեց փոթորիկներին, նրա բանակները յաճախ փայլուն յաղթանակներ տարան, և հետզհետէ հետեւելով իրենց աւանդութիւններին, արիական ցեղին յատուկ իրենց ոգու մղումով՝ հայերը թեքւեցին դէպի հռովմէական մշակոյթն ու քրիստոնէութիւնը:

301 թւականին Այրարատը քրիստոնէութիւն է ընդունում, Կոստանդին I-ից 12 տարի աւելի վաղ: Այդ ժամանակից սկսած Հայաստանը կապեց հռովմէական կայսրութեան և քրիստոնէութեան առաջապահը հանդիսացաւ արեւելքում:

Սասանեանների Պարսկաստանը վերադառնալով նախկին կրօնին, մագդեհականութեան, իր ատելութեան մէջ սկսեց շփոթել հայերին ու հռոմայեցիներին: Հայաստանը կրկին դարձաւ անմահների և լեգիոնների *) հանդիպման ռազմադաշտը. քսան անգամ աւերւեց, գրաւեց և վերագրաւեց: Վերջիվերջոյ Արշակունիաց թագաւորութիւնը, պաշտպանութիւն չը գտնելով Բիւզանդիոնից, ընկնում է, և Հայաստանը բաժանւում է արքայից արքայի և կայսրի միջև:

*) Պարսիկների և հռովմայեցիների բանակները, ինչպէս իւրաքանչիւրն անւանում էր իրեն:

Արշակունի Վռամշապուհ թագաւորի օրով մտաւորական ու բարոյական մի մեծ թռիչք են գործում հայերը, որոնք աւելի ու աւելի էին կապւում Եւրոպային: Սահակ կաթողիկոսն ու Մեսրոպ վարդապետն էին այդ նոր թռիչքի ղեկավարները:

Հինգերորդ դարու վերջերը Պարսկաստանի Յազկերտ II փորձում է Հայաստանին ընդունել տալ մագդեհական կրօնը, որպէս զի բողոքովին ձուլէ նրան: Հայերն ամբողջ ոտքի ելան՝ Վարդան Մամիկոնեանի, Յովսէփ կաթողիկոսի և կղերականութեան գլխաւորութեամբ: Յազկերտը Հայաստան է ուղարկում մի վիթխարի բանակ՝ ընկճելու նրա դիմադրութիւնը: Վարդան և իր 70,000 զինակիցներն Աւարայրի դաշտում դիմագրաւում են պարսկական հսկայական բանակին, բայց Վարդանն ընկնում է այդ ճակատամարտում, նրա զօրախմբերը ցրիւ են գալիս, և Հայաստանն ենթարկւում է խուժողութ թշնամու վայրագութեան: Ամբողջ ժողովուրդը քաշեց ամրացաւ բերդերում ու կիրճերում, շարունակեց դիմադրել՝ անընդհատ ասպատակային կոիւններ մղելով: Կիները, երեսխաները, ծերերը քաշւում են անտառները, քարանձաւներն ու լեռները՝ նախադասելով վայրենի կեանք վարել, քան ուրախալ իրենց ազգային կրօնը, որով հայկական ոգին վառ մնաց աւերակների ու դիակների միջև: Վահան Մամիկոնեանը քաջաբար շարունակեց իր հօրեղբօր գործը: Պարսկաստանը պատերազմից յոգնելով վերջիվերջոյ վճռւում է թոյլ տալ հայերին պահելու իրենց կրօնական ու ազգային ա-

աւանձնայատկութիւններն և Վահանին անւանում է
Հայաստանի մարգալան» *):

Երկար ու տաղակալի կը լինէր յիշել պարսիկ-
ների բոլոր փորձերը՝ հայերին կրօնափոխ անելու
համար: Պէտք է նկատել, թէ կրօնամոլութեամբ չէ,
որ առաջնորդում էին Սասանեանները. Պարսկաս-
տանում կային բազմաթիւ քրիստոնեայ համայնքներ,
թեմեր՝ Բթեղիֆոնում, Ահւազում, ամբողջ Քաղդէաս-
տանում. Քրիստոսի հետևողները չէին հալածւում
այնտեղ: Բայց Հայաստանում հարցը բոլորովին այլ
էր: Այս երկիրն իր կրօնով կապւած էր թշնամի հը-
ռովմայեցիներին, այնպէս որ սասանեան թագաւոր-
ներն այնտեղ խոչընդոտի էին հանդիպում՝ իրենց
տիրապետութիւնը մինչև Կովկաս ու Եւֆրատեան Պոն-
տոս տարածելու փառասիրութեան մէջ. ուստի իրան-
եան կայսրութեան ամբողջ տեղւոյններն ընթացքում
Հայաստանը շարունակ դարձաւ պարսիկների և լե-
զիոնների միջև արեւնալի կռիւների թատերաժայր:

Եւ իրօք, Հայաստանը ռազմագիտական շատ
կարեւոր դերք ունէր՝ Եփրատի և Տիգրիսի ձևացրած
ընդարձակ ռազմադաշտի տեսակէտով: Ծնորհիւ նրա
դերքի, դէպի Սիւրիա պարսիկների ամեն արշաւանք
կարող էր կասեցւել՝ նրանց աջ թևի վրայ տրւած մի
յարձակումով և Բթեղիֆոնի հետ հաղորդակցութիւնը
կարող էր խզւել Նիզիբից կամ Օբիսից իջնող մի
բանի լեզիոններով:

7-րդ դարում արաբների կողմից սասանեան
կայսրութեան տապալումն ոչինչով չամփրեց հայերի
տառապանքը: Երկիրը գրաւեց, աւերեց, հուրի ու

արեան մատնեց. բայց իր աւանդութիւններին հաւա-
տարիմ ազգաբնակչութիւնը, հետևելով Վահան Մամի-
կոնեանի օրինակին, դիմադրութիւն կազմակերպեց,
այնպէս որ արաբները, յոգնած իրենց ապարդիւն ձի-
գերից, քաշեցին՝ թողնելով, որ Բագրատունիները
վերականգնեն թագաւորութիւնն ու շինեն Անի մայ-
րաքաղաքը, որը հայերն իրենց հայրենասիրական
թոխջրով չեն վարանում համեմատութեան դնել Բիւ-
զանդիոնի հետ: Անին իր տարածութեամբ, իր շինու-
թիւններով անտարակոյս փոքրիկ քոյրն էր Բագրիւս-
ների մայրաքաղաքի, բայց նրան հաւասարում էր
իր հաւատքով, իր իմացական մշակոյթով, ինչպէս և
իր բնակիչների հայրենասիրութեամբն ու գինւորական
քաջութեամբը:

Բագրատունեաց թագաւորութիւնն այս դժբախտ
երկրի համար դարձաւ բարգաւաճման մի նոր դա-
րաշրջան. բայց Հայաստանի աղէտները շուտով վեր-
սկսեցին: 11-րդ դարում երևան են գալիս սելջուկեան
թիւրքերը, տապալում են Բագրատունեաց թագաւո-
րութիւնը, քանդում են ամեն ինչ, և երկիրը խեղդե-
ւում է արեան մէջ: Այնուհետև դժբախտ հայերի հա-
մար վերսկսւում է լեռների և քարայրների կեանքը—
նրանք փախչում են դէպի Փոքր-Կովկաս (Քարթլի)
և Ղարաբաղ (նախկին Արցախ գաւառը՝ Սիւնիքում).
ուրիշներ գաղթում են Բիւզանդիոն ու մինչև Լեհաս-
տան:

Խիստ բազմաթիւ հայեր Ռուբէնի առաջնորդու-
թեամբ ուղղւում են դէպի Կիլիկիա՝ վերադառնալով
մօտ երկու հազար տարի առաջ իրենց նախնիքների
լքած այս երկիրը, ուր ցեղակիցների մեծ զաւակներ

*) A. Tchobanian. op. I., p. 8:

կային: Նրանք գրաւում են լեռները, ամրանում են և հետզհետէ իրենց հողամասերն ընդլայնում մինչև ծովը: Դա տեղի է ունենում խաչակիրների շրջանում: Կիլիկիայի հայերն ինքնարեւարար դնում են իրենց խաչակիրների տրամադրութեան տակ և մեծ ծառայութիւններ մատուցանում քրիստոնեայ ղորամասերին: Այդ օժանդակութեան համար իբր վարձատրութիւն՝ Կղեստին III պապն ու Հենրիկոս VI կայսրը, Ֆրեդերիկ Շիկամօրուսի որդին, Ռուբէնի համեստ իշխանութիւնը յայտարարեցին թագաւորութիւն: 1383-ին, Գրիգոր XII պապն իր *Ecclesia romana* կոնդակում գրում էր այսպէս. «Քրիստոնեայ եկեղեցու և հանրապետութեան հանդէպ հայ ազգի ուրիշ արժանիքների միջև կայ մէկը, որ վսեմ է և առանձնապէս յիշատակելի. դա այն է, որ երբ ժամանակին քրիստոնեայ իշխաններն ու բանակները գնում էին ազատելու սուրբ երկիրը, ոչ մի ազգ և ոչ մի ժողովուրդ աւելի արագ և աւելի հոսանքով, քան հայերը, չփութաց նրանց օգնել մարդկանցով, ձիերով, մթերքով, խորհուրդներով, այդ սրբազան պատերազմում նրանք քրիստոնեաներին օգնեցին իրենց բոլոր ոյժերով, ամենս մեծ արիութեամբ ու հաւատարմութեամբ»:

Դա դժբախտաբար վերջին անգամն էր, որ հայերն առիթ ունեցան գործնականապէս վկայելու իրենց անձնւիրութիւնը դէպի քաղաքակրթութեան դատը՝ բարբարոսութեան դէմ: Խաչակրութիւնների ժամանակ Փոքր-Հայաստանի այս թագաւորութիւնը քրիստոնեայ Եւրոպայի մի կղզեակն էր՝ կորած մահմեդական ուլկէանոսի մէջ: XIV դարու սկզբին, Ռու-

բինեան իշխանների շառաւիղը վերջացաւ. հայերը հրաւիրեցին Ֆրանսիական Լուսինեան ընտանիքը բաղմնելու իրենց գահի վրայ: Դա չշանակում էր աւելի սերտօրէն կապել տրւամտեան քաղաքակրթութեան: Մահմեդականներն իբր մարտահրաւէր նկատելով նոր լատին թագաւորի հաստատումը՝ կրկնապատկեցին իրենց ճիգերն այդ պատիկ պետութեան դէմ: Վերջապէս, XIV դարու վերջին տարիները, մամեղեղներին աջողեց կործանել խաչակիրների հզօրութեան այս վերջին վկային, որին Եւրոպան այլևս չէր պաշտպանում: Այսպիսով հայերը գոհարեցին մօտ վեց դար առաջ և լքեցին՝ իրենց անձնւիրութեանը զօհ դառնալով:

Մեծ Հայաստանի բախտը վճռած էր արդէն XI դարում. նա բաժանեց թիւրքերի և պարսիկների միջև: XIX դարու սկզբին է, որ Ռուսաստանը սկսեց կցել Հայաստանը. Պարսկաստանի և Թիւրքիայի դէմ նրա մղած պատերազմներն արդէն նրան էին թողել Արաքսից հիւսիս գտնուող Հայաստանի հողափասը, երբ ծագեց 1914 թւականի պատերազմը:

* * *

Ով որ Արեւելք չէ այցելել, և կամ եղել է այնտեղ՝ առանց հասկանալու տեղական լեզուները, չէ կարող ճիշտ գաղափար կազմել, թէ մահմեդական ինչ զգացումներ է տածում քրիստոնեայի նկատմամբ: Պէտք է տպրած լինել այդ մարդկանց մէջ: պէտք է լսել, առանց կասկած հրաւիրելու, նրանց մտերիմ խօսակցութիւնը, ըմբռնելու համար, թէ մոլլաների

ուսումն ինչքան կարող է մոլորեցնել ամենամեղ-
մաբարոյ մարդկանց հոգին ու սիրտն և նրանց փո-
խակերպել անհաշտ մոլեռանդներին:

Պոլսում, Թեհրանում, բոլոր մեծ քաղաքներում,
եւրոպացիին կանոնաւոր շփման մէջ է միայն մեր
կենցաղավարութեան սովոր մարդկանց հետ, կամ դոնէ
իրենց ներքին մտածումները ծածկելու վարժածների
հետ: Թւում է, որ անհաւատարի դիւրութեամբ ըն-
տելանում են մեր սովորոյթներին, և մեր ներկայու-
թեան հետեւում են նրանց այնպիսի բնականութեամբ,
որ կարծես բացարձակապէս անկեղծ լինե՞ր. բայց
հենց որ տուն են գնում, նրանք թօթափում են կեղծ
եւրոպականութիւնը և կրկին դառնում են միևնոյն
անխիղճ ու անգութ բարբարոսները:

Մահմեդականի և եւրոպացու միջև յարաբերու-
թեան խնդրում թուրքերի մօտ երևութական համբե-
րողութիւնը շատ աւելի մեծ է, քան պարսիկների
մօտ: Թիւրքը խոզի միս չէ ուտում, գինի և ալքոհոլ
չէ խմում, բայց լինելով աւելի ճարպիկ կեղծող, քան
Արեւելքի հարևանը, նրանից աւելի լաւ է իւրացնում
մեր ձեռքը:

Պարսկաստանում, շիաների մօտ հարցը բոլորովին
փոխւում է: Պարսիկն ամենից առաջ մտահոգ է մա-
քուրի և անմաքուրի մասին: Նա պահում է մազդե-
հական պատերաճները, որոնք իրենց հերթին մեծ
ազդեցութիւն են կրել հնդկական Բրահմայականու-
թիւնից: Լաւ շիան ստիպւած է հազար նախազգու-
շութիւնների դիմել քրիստոնեայի հետ յարաբերու-
թիւն ունենալիս:

Պարսիկն ոչ միայն պէտք չէ ուտէ խոզի, նա-

պաստակի, անթիփ ձկան, ծխական տոթքներով
չօրհնած, չարագործւած մսերը, այլև չպէտք է
ձեռք տայ եւրոպացուն, կաշի ձեռնոցներ չպէտք է
հագնի, կաղտոտւի, եթէ շանը շօշափէ, չէ կարող ու-
տել կամ խմել քրիստոնէային տրւած ամանից: Նա
բնականաբար պէտք է հրաժարւի գինուց և ալքոհո-
լից *) . բայց, ինչպէս թիւրքը, արաբն ու բոլոր մահ-
մեդականները, նրան ներելի է մատնել ամենից ա-
մօթալի և կեղտոտ մոլութիւնների՝ առանց անհաճոյ
լինելու Մոհամեդին և Ալլահին:

Մահմեդականի աչքում կան երկու տեսակ քրիս-
տոնեաներ, որոնց սակայն ատում է նոյնքան խորա-
պէս—օտար քրիստոնեան, որին յարգում է երևութա-
պէս, վախիցը, և թիւրքիայի կամ Պարսկաստանի
քրիստոնեան, որին նա երբէք հաշի չի առնի:

Պարսիկների մօտ այդ վերջին տեսակի քրիս-
տոնեան, որ Շահի հպատակն է, սաստիկ արհամարհ-
ւում է. բայց, ընդհանրապէս, այսօր թողւած է իր
գլխին և քիչ անգամ է անպատուում: Նրանից նոյն
խսկ աւելի են փախչում, քան քուստ մահմեդակա-
նից. բայց նրան աշխատում են չարիք չհասցնել: Դա
առաջանում է նրանից, որ պարսիկի նկարագրի խոր-
քը մեղմ է և մոլեռանդութիւնը նրան չափազանց չէ
այլանդակած, միւս կողմից՝ նրանից, որ անցեալ դա-

*) Պարսկաստանում բարձրաստիճան կրթւած մարդիկ
արհամարհում են այդ պատերաճները և միայն հասարակու-
թեան մէջ է, որ յարգում են նրանց, բայց խնամքով ծածկում
են իրենց այդ ընթացքը մոլաների վախից, որոնք ամենակարող
ազդեցութիւն ունեն բուրժուազիայի և ժողովրդի մտայնութեան
վրայ:

րուց սկսած իւրոպական պետութիւնները մեծ հեղինակութիւն ձեռք բերին պարսիկ արքունիքի վրայ: Բայց և այնպէս կան կատաղիներ, մանաւանդ սէյդի-ների և մոլլաների միջև, որոնց եթէ չկաշկանդէ հրեպատասարանների փրկարար երկիւղը, Եւրասութեամբ կը կատարէին պախարակելի ակտեր:

Թիւրքերի մօտ, քրիստոնեայի դիրքն աւելի անտանելի է և մանաւանդ էր աւելի քան մի դար առաջ, քան այլուր: Քրիստոնեան, մի խօսքով, մահմեդականի ստրուկն էր: Նա պարտական էր յարգել, ակնածել և հնազանդել Ալլահի հաւատացեալներին փողոցային առաջին պատահած սրկային: Ո՛չ մի այլ երկրում բռնի ոյժն այնքան չարաչար չէ գործածւած, ինչքան Թիւրքիայում: Ճշմարիտ հաւատացեալը իրեն նկատում է գերադանց մի էակ. նա ռազմիկ է: Նա հազիւ է բարեհաճում զբաղել վարչական հարցերով. ինչ վերաբերում է իր ձեռքով աշխատելու խնդրին, դա վայել չէ նրան: Ուստի և քրիստոնեաները պէտք է ապրեցնեն այդ ծոյլին, և միայն այս պատճառով է, որ նրանք խնայել են անհաւատների կեանքին: Բայց քրիստոնեաները պէտք է այնպէս հազւեն, որ կարելի լինի նրանց ճանաչել մի ակնարկով, որ նրանք չչիոթւեն մարգարէի սիրեցեալ գերբնտրի դասի հետ:

Ժամանակին, քրիստոնեան մահմեդականի առարկան էր, նա իրաւունք չունէր ապահովութիւն ունենալ ո՛չ իր և իրենների կեանքի, ո՛չ իր և իր ընտանիքի պատւի, ո՛չ էլ իր ինչքի համար: Երբ Թիւրքը ցանկանար սրբել տալ իր կօշիկները, կանչում էր մի քրիստոնեայի, որ գրպանիցը պէտք է հանէր Թաշկի-նակը, ինչ գիրքի տէր մարդ էլ լինէր, և պէտք է կա-

տարէր այդ ոտրկական աշխատանքը: Նոյն իսկ ԺԹ. դարու սկզբում, Պոլսի մէջ, մահմեդականը կարող էր, առանց ենթարկւելու մինչև անգամ յանդիմանելու վտանգին, փողոցում կանգնեցնել մի քրիստոնեայի և նրա գլուխը կտրել՝ փորձելու համար իր սուրբ բերանը: Քրիստոնեայ և հրեայ կանայք միշտ քօզով էին դուրս գալիս, որպէս զի խուսափեն առաջին հանդիպած մահմեդականի քմահաճոյքից. բայց այդ նախազգուշութիւնը միշտ բաւ չէր լինում, և նրանք աւելի շուտ տանից չէին դուրս գալիս:

Եկեղեցիները պէտք է լինէին փոքր, առանց զանգի, թոյլատրւած չէր զանգահարել, և երբ մի մահմեդականի խելքին էր փչում իր ձիուն պատուարել խորանում և այնտեղը պղծել, քրիստոնեաները պէտք է մաքրէին: Յաճախ նա կանչում էր քահանային, որ բռնէ ձիւ սանձը, Հարկ չկայ աւելացնել, որ եթէ մահմեդականների մի խումբ կանգ առնէր մի գիւղում, բնակիչները պէտք է հայթայթէին ամեն բան, բացարձակապէս ամեն բան, ինչ որ պահանջւէր:

ԺԹ. դարու երկրորդ կիսից սկսած, Խրիմի պատերազմի ժամանակները, Թիւրքիայում քրիստոնեաների դրութիւնը զգալիօրէն լաւացաւ՝ Սուլթանին օգնող պետութիւնների ճնշման տակ. և սակայն նրանց դրութիւնը դեռ ևս քիչ էր շատ անկայուն, որովհետև մահմեդական կղերականութիւնը չէր փոխած իր տոնը և յանձնարարում էր բարբարոս լինել անհաւատի նկատմամբ: Կրօնաւորների սնուցած այս մոլեռանդութեան վրայ պէտք է աւելացնել նաև քրիստոնեայի համար յաճախ վտանգաւոր աւելորդապաշտութիւնները:

Եթէ Շահի հպատակ և նահանգապետների կոնտրոլի տակ դրած պարսիկն այսօր համբերող է երեւում քրիստոնեաների վերաբերմամբ, այդ բարեացակամութիւնը չպէտք է վերագրել գթասրտութեան, որովհետև շատ յաճախ, հերոսացի ներկայացուցիչների վախն է, որ գործել է տալիս նրան: Իրան ապացոյց այն, որ վերջերս, երբ օսմանեան զօրախմբերը գրաւեցին Ատրպատականի արևմտեան մասը, ամեն տեղից Շահի մահճեղական հպատակները մասնակցեցին ասորիների և հայերի կոտորածին՝ Ուրմիայի և Սալմաստի գաւառներում՝ երևան հանելով աւելի վայրագութիւն, քան մինչև իսկ թափառաշրջիկ քիւրդերը, և մտածելով, որ իրենց ոճիրները անպատիժ կը մնան, անարգ բարբարոսութեան ակտեր կատարեցին:

Յայտնի է, թէ արաբներն ինչ արհաւիրք տարածեցին Պարսկաստանում, Ուրմիայում, բիւզանդական գաւառներում, ինչպէս և պարսիկներն ու թիւրքերը. հանրածանօթ է, թէ այդ ժողովուրդներն ինչպիսի ծայրայեղութիւնների են ընդունակ. այսուամենայնիւ եւրոպացիների միջև կան կրթւած մարդիկ, որ հիացմամբ են խօսում այդ բարբարոսների մասին: Հարցնում ենք, թէ կարելի՞ է հաւատալ նրանց:

* * *

Տասնամէկերորդ դարուց սկսած, Անիի թագաւորութեան սելջուկների կողմից կործանումից յետոյ, շատ հայեր հեռացան իրենց երկրից և հաստատուեցին Պոլսում, Լեհաստանում, Հունգարիայում, Վինետիկում, Միջերկրականի բոլոր քրիստոնէական քաղաք-

ներում, և ամեն տեղ էլ նրանք շատ օգտակար դեր կատարեցին հիւրընկալող երկրների համար: Ուրիշներ գաղթեցին Հնդկաստան, Չինաստան և այնտեղ տարան հերոսական քաղաքակրթութեան առաջին տարրերը: Երկար դարեր նրանք համարեան միակն էին, որ մեր երկրների առևտուրը պահում էին Ասիայի ամենահեռուէր մասերում, բայց հետզհետէ այդ գործառնութիւններն անցան պարսիկների և չինացիների ձեռքը: Լուսինեանների թագաւորութեան անկումը մի նոր թափ տւեց նրանց գաղթականութեանը:

Հայերի վարչական ընդունակութիւնները կարելուր դիրք էին ստեղծել նրանց համար բիւզանդական կայսրութեան մէջ, և երբ Մուհամեդ II տիրեց Պոլսին, ստիպւած եղաւ նոր պետութեան գործերի մի մեծ մասը յանձնել հայերին: Իրենց վրայ իշխող կառավարութեան մէջ հայերի դերը ճշտելու համար բաւական է յիշել նորագոյն ժամանակներից Եգիպտոսում Նուպար փաշային, Տիպրան փաշային, Եագուպ Արթին փաշային, Թիւրքիայում՝ Միտհաթ փաշայի աշխատակից Օտեանին, Պարսկաստանում՝ Մելքոն խանին ու Եփրեմ խանին:

Այդ մարդիկ յաճախ պետական խորհրդականներ են եղել, դա չի նշանակում, թէ նրանք միշտ լաւագոյն կերպով են ծառայել այդ երկրների շահերին: Նրանցից մի քանիսը փութացրին այդ երկրների կործանումը՝ ժողովրդի ընդունակութիւններից վեր յղացումներով, բայց նրանք ապացուցել են իրենց եռանդուն գործունէութիւնն ու մեծ ուշիմութիւնը՝ համակած լինելով Արեւելքն իր տգիտութիւնից ազատելու ցանկութեամբ: Եթէ այդ փորձերի արդիւնք-

ներն աջող չանցան, եթէ մահմեդական երկրները խորտակեցին, պատճառն այն է, որ նրանք պատրաստած չէին բարենորոգումների համար, որ նրանց ճակատագրապաշտութիւնը, իրենց ժողովրդի ծուլութեան աւանդութիւնները, վաղայ մասին նրանց անփութիւնը անաջողութեան էին դատապարտում նման ծրագիրները:

Թիւրքիայում, ինչպէս և Պարսկաստանում ալատական զաղափարներն ընկնելով այնպիսի ժողովուրդների մէջ, որոնք աւելորդակ էին իւրացնելու այդ զաղափարները, միայն փութացնում էին կործանումը: Պէտք էր ժամանակ տալ ժողովուրդներին՝ պատրաստելու բարենորոգումների համար, եթէ սակայն նրանց ոգին ընդունակ է այդ բարենորոգումներին, և ոչ թէ հարկադրել նրան՝ առանց աստիճանական յեղաշրջման: Այս մասին Զինատանում ձեռք բերած արդիւնքն աւելի բարեյաջող չէր, քան Արեւմտեան Ասիայում ձեռք բերածը, որովհետեւ այդ երկրներում միայն մի քանի մարդիկ կարող էին կշռադատել անցեալ դարերի ընթացիկ նւազ տիրական մի իշխանութեան առաւելութիւնները. իսկ ժողովրդական զանգեածի մէջ ազատագրման միտքը մինչև այժմ էլ, թւում է, առաջացրել է միայն օտարատեսաց զգացումի սատուակցումը՝ թէ հեռաւոր արեւելքում և թէ մահմեդականների միջև:

Հիւսիսային Հայաստանում ուսումական առաջխաղացութեամբ, թէ Թիւրքիայում և թէ Պարսկաստանում, ամենքի հասարակութիւնն օրէնքի տոջն, ուստահայերին հնարաւորութիւն է տւել զարգանալ ծայրայեղ արագութեամբ: Նրանք թւով հոտապատկեցին

ուսական երկրներում, մեծ դիրքեր ձեռք բերին, անթիւ ծառայութիւններ մատուցին վարչական ու զինւորական պաշտօններում: Անհարկի մեծ աղմուկ հանեցին այն բանից, որ նրանցից մի քանիսը հետեւելով ուսն յեղափոխականների օրինակին և ընդօրինակելով նրանց գործելակերպը, կովկասեան ճգնաժամի պահուն ցաւալի ծայրայեղութիւնների են դիմել, ահաբեկման ակտեր են կատարել: Ժողովրդի ահապին մեծամասնութիւնը միշտ ամենախոհական և ամենազգուշաւոր դիրք է պահել: Ամբողջ հայ երիտասարդութիւնն այսօր լիուլի քառում է մի գոյզն փոքրամասնութեան այդ խիւլայեղութեան բոպէները՝ Թիւրք-գերման թշնամու հանդէպ իր հերոսական պայքարով, քաղաքակրթութեան և համաձայնութեան պետութիւնների դատի վերաբերմամբ իր անձնւիրութեամբ:

Սակայն, եթէ հայերը յարգանքի են արժանի իրենց գերազանց յատկութիւններով, նոյնքան ճշմարիտ է, որ նրանք ունեն մի քանի այնպիսի թերութիւններ, որոնց վրայով չէ կարելի լուծեամբ անցնել, եթէ ուզւում է անկեղծօրէն բնութագրել նրանց, և ոչ թէ նրանց գովեստը հիւսել: Պ. Քիյեարն իր Pour l'Arménie, Mémoires et Dossiers գրքում այոպէս է արտայայտւում. «Այն հանգամանքը, որ դրամափոխներից (սարրաֆ) մեծ մասը հայեր են, նրանք (եւրոպացիները) հապճեպով եղբակացնում են, թէ բոլոր հայերը դրամափոխներ են. ինչ վերաբերում է չուկայի միջնորդների պարկեղտութեան, լինեն նրանք յոյներ, հայեր, հրէաներ թէ կաթոլիկ արևելքցիներ, դա իսկապէս կասկածելի է. բայց մի տարօրինակ մե-

թող կը լինէր մի ամբողջ ժողովրդի մասին դատել վճռանի անհատներէից, որոնք ունեն իրենց արհեստից բղիթող և հչ թէ իրենց ցեղին յատուկ թերութիւններ»։ Ես համաձայն եմ պ. Քիշեարի կարծիքին։ Լորդ Բայընը շատ ճիշտ է ասել. «Հայերի թերութիւնները ստրկութեան թերութիւններ են»։ Զայ աւելի ճիշտ բան, քան մեծ բանաստեղծի այդ պնդատուութիւնը, որովհետեւ արեւելքի քրիստոնեաները, առանց բացառութեան, իրենց աէրերի կոպտութեան դէմ մաքառելու համար չունենալով այլ գէնք, բացի խորամանկութիւնից, դարձել են ճարպիկ, և նրանց նախանձող ժողովուրդները, վրացիները, թաթարները, մինգրելները և այլն, աւելի շուտ պէտք է յանդիմանեն իրենց հոգեկան ծուլութիւնը, քան թշնամութիւն ցոյց տան այն մարդկանց հանդէպ, որոնք իրենց եռանդով ծագկեցնում են այն երկրները, ուր նրանց առաջնորդում է ճակատագիրը։

Ինչպէս սարբաֆ չին բոլոր հայերը, նոյնպէս մանաւանդ անարեկիչներ չեն նրանք ամենքը։

Սխալ հասկացած հայրենասիրութեան բռնի ձևը, մի բուռը տաք-զլու ի մարդկանց միջև, որոնք բացասւած են ազգի խոշոր մեծամասնութեան կողմից, տւած է միայն շատ կարճ ժամանակ, և շատ տարիներէից ի վեր այլևս անարեկման հարց չկայ հայկական ամենաառաջատոր շրջաններում։ Բայց թիւրք իշխանութիւնների և գերմանական իշխանութեան կողմից ուժեղացած այդ դէպքերը կարող էին ծառայել տւտոնեան նպատակներին։ Այդ դէպքերը շահագործեցին անափօթ ձևով, թիւրքիայում բարբարոսաբար, իսկ Բերլինում՝ փառաբանելու համար Արեւելքում կատարուող ոճիրները։

1915-ի աշնան վերջերին ամբողջ գերմանական մամուլը արտատպից հետեւալ զգւելի տողերը. «Ժամանակ է վերջապէս, որ գերմանացիները հաշիւ տան իրենց գոնէ, թէ որտեղից է առաջանում հայկական խժդժութիւնների մասին յերիւրած աղմուկը, որ հասկնան վերջապէս, թէ մեր գործը չէ խղճալ յեղափոխական և ապստամբ հայերի վիճակի վրայ, որոնք մեծ վտանգ են հանդիսանում մեր հաւատարիմ զինակից թիւրքիայի համար, և որոնք գործիք են մեր մահացու թշնամիները՝ Անգլիայի և Ռուսաստանի ձեռքում։ Եթէ թիւրքերն ազգու կերպով չպաշտպանւէին հայկական վտանգի դէմ, նրանք թէ իրենց զինակիցներին և թէ իրենց շատ վատ ծառայութիւն մատուցած կը լինէին։ Ահա, թէ ինչու մենք, գերմանացիներս, այդ հայկական հարցը պէտք է նկատենք իբր ինչ միայն թիւրքիան շահագրգռող խնդիր, այլ և նրա բոլոր զինակիցներին վերաբերող մի հարց, և պէտք է պաշտպանենք թիւրքիան՝ դրսից եկած յարձակումների դէմ *»)։

Մարդ սարսուռ է զգւանքից և արհամարհանքից կարգալով այդ տողերը, ուր մահւան սուղնորդւած դժբախտների ողբերը, պաղատանքները յեղաթիւրւած են, փոխակերպւած են յեղափոխական աղաղակների, ապստամբական ակտերի։ Բայց չէ՞ որ գերմանական սուտերը միշտ էլ ամենազաղրելի ձևեր են ընդունած։

* *

*) Ռեհնալով. Deutsche Tageszeitung, 19 դեկտ. 1915 թ.։

Հայերի նախկին հայրենիքը 1914 թվականին գտնուում էր երեք պետութիւնների՝ Թիւրքիայի, որ գրաւում էր մեծագոյն մասը, Ռուսաստանի և Պարսկաստանի միջև բաժանուած վիճակում:

Ռուսաստանում՝ հայերը առաւելապէս բնակւում են Երևանի դաշտում, Արաքսի հովտում, Արագածի, որ մարած հրաբխային մի լեռ է, և Մասիսի եղբայր փոքր Գովկասի լեռներում՝ Ղարաբաղում, Սևանի շրջականերում, Դեբեդ գետի, Խրամ գետակի և Կուրի հարաւային ձիւղերի հովիտներում, առանց Կուրից հիւսիս անցնելու:

Դաշտում նրանք խառն են թաթարների հետ, խոկ լեռներում գրացի են քրդերին և լազերին: Ամենուրեք ազգագրական այս տարբեր տարրերի գիւղերը զատ են և նրանց հողամասերը խառնւած են իրար. բայց չնայած դարաւոր թշնամութեան, նրանք ապրում են խաղաղ, ամենքը զինաթափւած են և հսկում է ցարական ոստիկանութիւնը *): Դա մի անգնահատելի առաւելութիւն է հայերի համար, որոնք կարող են կատարեալ ապահովութեամբ նւիրել իրենց մշակոյթին և գործերին:

Լուսաւորչական հայերի կրօնական և իմացական կենտրոնն է, ինչպէս յայտնի է, Էջմիածինը (Վաղարշապատ), Երևանի հարևան մի գիւղաքաղաք, զետեղւած այդ գեղեցիկ, ճոխ ու պտղաբեր դաշտում, որ

*) Հեղինակն անտարակոյս խիստ չափազանցում է ցարական ոստիկանութեան բարեբար դերը: Կասկած չկայ, որ եթէ չլինէր հին րեժիմի կովկասեան քաղաքականութիւնը՝ իր տխուր հետեանքներով, կովկասեան ազգութիւնները գուցէ գտնէին մշտական խաղաղ համակեցութեան հողը:

տարածւում է Մասիսի հիւսիսային ստորոտում: Այնտեղ բարձրանում են հայկական կաթուղիկէի զանգակաւորները, շրջապատւած կղերականների բնակարաններով և Ֆրանսական միջնադարեան ամրացւած եկեղեցիների նման, բարձր պարիսպներով: Այս պարիսպներից ներսը հայերը կենտրոնացրել են իրենց ազգի անցեալի բոլոր յիշատակները, ժամանակի աւերումից, մահմեդականների մոլեգնութիւններից ազատւած բոլոր նշխարները, Անիի կողոպուտից ազատւած նւիրական զարդերը, թանգարժէք ձեռագիրները, պատմական ու կրօնական վաւերաթղթերը: Հիւրընկալ կրօնաւորները մեծ սիրալիրութեամբ ցոյց են տալիս այդ գանձերը:

Նւիրական անտառի շուրջն է գիւղաքաղաքը, որ բաղկանում է, ինչպէս Արևելքի բոլոր կենտրոնները, թրժւած հողի դարատափներով (տեքլաւ) տընակներից: Մայր եկեղեցու ծախսով փորւած ջրի ան համար ընդունարաններ երաշտ տարինների համար պարունակում են ջրի պահեստներ և աշխատասէր ազգաբնակչութեան կողմից հրաշալի բոլորւած դաշտը տալիս է ցորենի, բամբակի և ժամանակին Նոյի չափազանց սիրած հոշակաւոր գինու առատ հունձքեր:

Դէպի արևմուտք, Արագածի միւս կողմը, Ալեք ոսնդրապոլից մօտ 40 վերստ հարաւ, գտնուում են Բագրատունիների մայրաքաղաք Անիի մնացորդները— հոշակաւոր աւերակները՝ Ախուրեանի և իր մի ճիւղի կազմած հողաթմբի վրայ իրենց դիրքովը, եղբւրւած բարձր քարաժայռերով, յուզիչ՝ իրենց պարիսպներով, աշտարակներով, չեչաքարի պէս թեթև գոյնագոյն լաւայից շինւած՝ աւերակ գեղեցիկ եկեղեցիների ուրա-

գծով, թագաւորական պալատների նշխարներով: Երկար դարերից ի վեր Անին մենաւոր է: Մի ծեր կրօնաւոր է պարուստ իր ընտանիքի հետ այդ աւերակների քառասուն: Նա պաշտամունք է կատարում պատարագի յատկացւած միակ եկեղեցում և հազարէպ այցելուին բաց է անում եկեղեցու դռները, որի կամարների նրբաքանդակ որժանկարները յիշեցնում են Կոմսիոսների օրով Տրապիզոնի վանքի սրմանը-կարները:

Անին մի մեծ քաղաք չէր. ընդհակառակը, Վը-րաստանի թագաւորների Թիֆլիս, Գորի, Մցխեթ քաղաքները հաւանաբար նոյնքան մեծ էին. բայց Բագրատունիներն ուզել են գեղեցկացնել նրան շինու-թիւններով: Անիի մէջ իշխում էին այնպիսի վսեմ զգացոյ մներ, որոնք անծանօթ էին քարթլեկեան ցեղերին: Բարքերը մաքուր էին, և ոչ հայ հասարակու-թեան, ոչ էլ արքունիքի մէջ չէին երևում այն զազ-րելի սկանտալները, որոնց օրինակը տեւել է Ռուսու-զան թագուհին:

Պատմագիր Արիստակէս Լաստիվերտցին, ժամա-նակակից և ականատես Բագրատունեաց մայրաքաղաքի շքեղութեան և կործանումին, մեզ թողել է այս փոքրիկ թագաւորութեան պատկերը՝ նախքան սել-ջուկների գալը: Այդ էջերը հրաշալի են իրենց բա-նաստեղծականութեամբ, քնքշութեամբ, իրենց ա-րևելեան ճաշակով: Նա ասում է.

«Աշխարհ՝ որ երբեմն ժամանակաւ իբրև զգրախոտ անկախիտ առաջի էւր, կանաչագեղ, տերևալից, պլու-զաբեր, գեղեցկաշուք և երջանիկ անցաւորացն ցու-ցանիւր. քանզի իշխանք նստէին յիշխանական գահու

զուարթահայեաց զիմօք, և զգարնանարեր ծաղկանո-ցաց բերեալ զնմանութիւն՝ վառ ի վառ գունովք ա-ռաջի կացեալք, ուրախական երգոց և բանից միայն լինէին հանդէսք. ուր և ձայնք փողոցն և ծնծղայից և այլ երգեցողական արուեստիցն զլսողացն անձինս ի առնէին ուրախական բերկրանօք: Անգանօր և ծերք նստէին ի հրապարակ հարկեւոր և պատուական ալ-կօք բարդաւածեալ. այլ և մարք զմանկունս ի գիրկն ընկալեալ, վասն առատ ուրախութեանցն մոռանային զտխրական ժամանակս երկանց, զօրէն աղաւեսաց զնորափետուր ձագօքն միշտ թռթռելով: Զթնչ ասա-ցից և զհարսացն ի սենեկի, և զփեսայիցն յառագաստի զսիրահարուստ ըզձիցն զըրբըքոյմն և զանժոյժ բը-նութեանն զհակամիտութիւն: Այլ և վեր տանելի է մեզ բանս, առ հայրապետական աթոռն և ի առ թա-գաւորական պատիւն. զի մինն զօրէն ամպու խտաց-եալ ի պարզեացն հոգւոյն՝ ի ձեռն վարդապետական շնորհին, ցօղէր զցօղ կենացն. որով պարարտացեալ պտղաբերէր եկեղեցւոյն զըրախտ, արթուն պահապանս ի վերայ պարսպաց նորա կարգելով զառ ի յինքնէ ձեռնադրեալսն: Իսկ թագաւորն յառաւօտեան յոր-ժամ ի քաղաքէն ելանէր, զօրէն փեսայի որ ելանէ յառագաստէ իւրմէ, կամ որպէս տունջենային արուս-եակն որ ի վիսոյն արարածոց բարձրանալովն զամե-նայն տեսանելիս յինքն ձգէ, այսպէս և նա պաղպա-ջէր փաղփուռն հանդերձիւք և մարդարտախուռն թա-գիւն, և զամենայն մարդ ի տեսութիւն և ի զարմանս ցուցանէր. որ և սպիտակամազ նժոյգ՝ ոսկեզօծ զար-դիւք առաջի ընթանալով, ի ճառագայթից արեգա-կանն, որ զնովաւ հարկանէր՝ շացուցանէր զտեսո-

դացն տեսանիլիս: Իսկ զօրացն բազմութիւն խուսն
առաջի ընթանալով՝ զօրէն ծովային ալեացն զմիմեամբ
կուտակելովք:

Այս տողերում զգացում է բիւզանդական մեծ
աղդեցութիւն. պատկերները բռնադրօսիկ են և չա-
փազանցւած, բայց նրանք շնչում են լիւնականներ
անկեղծութիւնը, այս ինքնամփոփ ժողովուրդներ
կեանքի պարզութիւնը:

Հայերն ափն ժամանակ յարաբերութիւն ունէին
միայն Պոլսի հետ, և ամեն ինչ երևում էր նրանց
բիւզանդական քողի միջով: Նոյն բանը կարելի է ա-
սել ամբողջ Հայաստանի, Վրաստանի, Մինգրելիայի,
ինչպէս և Ռուսաստանի մասին, ուր բիւզանդական
աւանդութիւնները պահւած են գեղարւեստում, և
կովկասում աչքի են ընկնում իրենց արտասովոր
մնայուն ութեամբ. ամեն զիւզ ունի իր եկեղեցին,
նրանցից շատերը մայր-եկեղեցիներ, որոնց պատկա-
ռազրու զանգակատունը իշխում է հաւատացեալների
համեստ բնակարանների վրայ. անտառներում յաճախ
պատահում էք լքւած մատուռների, որոնք շինւած են
ժամանակին մի ջերմեռանդ տանուէրի կամ մի խումբ
բարեպաշտ մարդկանց կողմից: Ապա կան նաև իրենց
միաբաններից լքւած վանքեր, որոնց կիսաւեր պա-
տերը պատսպարում են գիւղացիներին, բայց որոնք
դիւրաբեկ ապաստաններ են աւազակների, թալանիչ
բիրդերի ձեռքի հարւածի դէմ, որոնք գեռ մի հա-
րիւր տարի առաջ ասպատակում էին ամբողջ Անդր-
կովկասը:

Այս յիշատակարաններից մեծ մասը ներշնչւած
է յունական կայսրութեան անկումից բիշ առաջ գոր-

ծածւած տիպից. մէկ մասն էլ համապատասխանում է
աւելի հին յղացումների: Վերջերս նոր եկեղեցիներ
շինելիս՝ նրանց ծրագիրները, մանրամասներն ընդ-
րինակում են հին տիպարներին: Այս կերպով կրկ-
նում է այդ ոճը, հետզհետէ աւելի և աւելի զարդա-
րուն՝ բոլոր արհեստների յատուկ ճաշակով, բայց
աւանդական գծերը սրահելով իրենց մաքրութեան մէջ.
որովհետև գիւղացի հայու համար, աւելի ևս քան
բաղաքացու, աւանդութիւններն ամեն բանում նուիրա-
կան են. դրանք ներկայացնում են ազգային զգա-
ցումները:

Հայաստանում բիւզանդական արւեստը զար-
գացւած է փոխառութիւններ անելով սասանեան, ա-
րաբական և պարսկական ոճերից, որոնց վրայ աւե-
լացել է հայկական սեփական ճաշակը, այնպէս որ
մի կողմից անճիշդ կը լինէր ասել, թէ գոյութիւն
ունի հայկական արւեստ, և միւս կողմից անարդա-
բացի կը լինէր չճանաչել տեղական զգացումը, հայ-
կական դպրոցի գոյութիւնը: Եգիպտոսում, Հայաս-
տանում, Ռուսաստանում, Իտալիայում, Սիւրիայում,
Սպանիայում և Ֆրանսիայում իսկ, բիւզանդական ար-
ւեստը ձևափոխւած է զանազան գեղարւեստական ճա-
շակներով, այսպիսով կազմելով ձիւղաւորումներն այն
մեծ ծառի, որի արմատը գտնւում է Վուսիորի ափե-
րում:

Գիւղում քահանան է լեզու սովորեցնում երե-
խաներին: Այդ դպրոցներում, ուր ճառողում են տղա-
նիրն ու աղջնակները, հազած պայծառ գոյնի զգեստ-
ներ, զարդարւած արծաթէ ծանր դարդիրով, շարու-
նակ հեգում են քրիստոնէութեան առաջին դարերում

ս. Մեսրոպի կազմած տառերով: Ռուսերէնն ուսուցում է միայն իբր օտար լեզու, ինչպէս և թիւրքերէնն ու պարսկերէնը:

Այսօրայ խօսակցական հայերէնն անտարակոյս հին լեզունն է: Ինչպէս բոլոր լեզուները, հայերէնն էլ է ձևափոխութիւններ կրած, գիւղերում նա աղքատացել է, միաժամանակ ձոխանալով թիւրքական, պարսկական, ուսական կամ արաբական ասացածքներով՝ կորցնելով քերականական շատ ձևեր. դա Մովսէս Խորենացու բարբառը է, այլ ժամանակի ընթացքում փոփոխւած մի լեզու:

Ընդհակառակը, գրական հայերէնը, որը Պոլսի, Վենետիկի և Թիֆլիսի գրողները կատարելագործել, յղկել են, գլխաւորապէս ֆրանսիական լեզւի ազդեցութեամբ, ճկուն, ձոխ, օտար բառերից համարեա զէրծ մի գործիք է, անսահման աղբիւր ոտանաւորի և արձակի համար, որը մի շարք գրողներ, ի միջի այլոց Չոպանեանն ու Ահարոնեանը, կարողացել են արժէքաւորել եզակի տաղանդով:

Հայերի նոր գրականութիւնը շատ զարգացած է, հասնում է շատ բարձր մակարդակի և ցոյց է տալիս, թէ այս ժողովուրդն ինչքան մտահոգւում է հոգեկան խնդիրների մասին: Ժամանակակից հեղինակների միջև բաւ է յիշել հետևեալ բանաստեղծներին՝ Ալիշան, Պէշիկթաշեան, Դուրեան, Քամառ-Քաթիպա, Թումանեան, Իսահակեան, Եարճանեան (Սիամանթօ), Վարուժան, դրամատուրգներ՝ Սունդուկեանց, Շիրվանզատէ, վիպասաններ, նորավիպագիրներ և զրուցագիրներ՝ Աբովեան, Բաֆֆի, Ծերինց, Չոհրապ, Չարդարեան, երգիծաբան՝ Պարոնեան և ուրիշ շատեր,

որոնց գործերը դժբախտաբար անմատչելի արևմուտքի մարդկանց համար, վերլուծւած, յաճախ նոյնիսկ թարգմանւած են մասամբ *):

Միջին դարու հայերէնը, ինչպէս և այսօր դանազան գաւառներում խօսւած բարբառները, պարունակում է արաբներից, պարսիկներից, թիւրքերից, նոյնիսկ յոյներից առնւած բաւական քանակութեամբ բառեր. բայց այդ խառնուրդները չեն խանգարում, որ այժմեան հայերէնը լինի մեծապէս արտայայտիչ ու ախորժելի: Կան շատ շնորհալի բանաստեղծութիւններ, որոնց հնութիւնը կասկած չկայ, որ հասնում է մինչև տասներեքերորդ դարը:

Հայերէն ամենահին գրածքները, որոնք հասել են մեզ, Առաջաւոր Ասիայում քրիստոնէութեան առաջին շրջանի՝ 5-րդ դարու գործեր են: Չգիտենք, թէ զբանից առաջ հայերէնն ինչ ձև ունէր. անտարակոյս այդ բարբառը ազգակից էր փոխգերէնի. բայց փոխգերէնն անհետացել է, այնպէս որ քրիստոնէական գրածքներին պէտք է դիմել՝ վերլուծելու համար հայ լեզուն: Այդ քննութիւնից հղրակացւում է, որ հայերէնը լինելով մերձուոր ազգակից յաւնարէնի, պատկանում է եւրոպական լեզաբանական ձևերին և ոչ թէ հնդկ-իրանեան լեզախմբին: Այս գիտողութիւնը համապատասխանում է հայ ժողովրդի և իր աւանդութիւնների մասին մեր ունեցած պատմական տեւալներին:

*) Cf. A. TCHOBAHIAN, Poèmes Arméniens anciens et modernes—le peuple arménien, son passé, sa culture, son avenir.—FRÉDÉRIC MACLER, Petite bibliothèque arménienne.—MINAS TCHÉRAZ, Poètes arméniens.—Revue franco-étrangère, Hommage à l'Arménie.

Ծոտ հարիւր տարի առաջ հիւսիսից մի հզօր վեհապետ եկաւ ճնշւած հայերին տալու բացակայող ապահովութիւնը, և վերածնութիւնը սկսեց Փոքր-Կովկասում. գիւղացիների աշխատանքը սկսեց վարձատրել հարստութեամբ: Այսօր գիւղերում երևում են գեղեցիկ այգիներ, ճոխ մշակոյթ, բախտից նպաստաւորւածների ինքնասիրութեան աւելի համապատասխան բնակարաններ: Հայերի միջև հանդիպում էք մեծ հարստութիւնների, և իրենց անհատական կեանքում այդ տնտեսող մարդիկը անսահման առատաձեռնութիւն, իսկական շռայլութիւն են ցոյց տալիս, երբ հարցը վերաբերում է եկեղեցիներին, մանաւանդ էջմիածնին, որովհետեւ այդ կաթողիկէն խորհրդանշանն է իրենց յիշատակների, վշտերի և յոյսերի:

Բայց և այնպէս, հայերը, այդ անխոնջ աշխատաւորները, այժման գործունեայ են, որ չէին կարող բաւականապէս իրենց նախնիքների հողերի մշակումով: Շատերը գաղթեցին իրենց գիւղերից դէպի քաղաքներ՝ ձեռնարկելու առևտրի, գործերի, և մի քանի տարիների ընթացքում, ամենաշատը կէս դարում, Թիֆլիսը, Բագուն ու Բաթումը դարձան նրանց արտոնական զարգացման վայրերը: Հայերն իրենց գործնական մտքով, տոկունութեամբ, աշխատանքի կորովով ու տաղանդով ստեղծեցին և կազմակերպեցին Անդրկովկասի առևտրական, կլիմատական և արդիւնաբերական գլխաւոր գործառնութիւնները. շնորհիւ այս ժողովրդի գործունէութեան, այդ երկիրն արագօրէն

կերպարանափոխեց և դարձաւ Ռուսաստանի ամենահարուստ երկրամասերից մէկը: Քարթլեկան հին ցեղերը, որոնք հազարաւոր տարիներից ի վեր բնակւում են այստեղ, անընդունակ եղան ծաղկեցնելու այդ սքանչելի գաւառը. իսկ ռուսներն այնքան լայնածաւալ կոյս հողեր ունեն, որ չէին կարողանում Կովկասին, այս երկրային դրախտին, յատկացնել ըստ արժանոյն անհրաժեշտ ամբողջ խնամքը:

Պարսկաստանում, ուր հայերը շատ աւելի քիչ են, քան Ռուսաստանում և Թիւրքիայում, Շահի կառավարութիւնը նրանց հանդէպ շատ մեղմ վերաբերմունք ունի: Դա առաջանում է նրանից, որ այդ կործանւած պետութիւնը, որ ոչ բանակ և ոչ էլ երկմուտք ունի այլևս, գտնւում է Ռուսաստանի և Անգլիայի ձեռքում, և աշխատում է անհաճօյ չլինել իր տէրերին. ուստի հայերը ամենամեծ ազատութիւնն են վայելում իրենց գործառնութիւնների, ինչպէս և իրենց կրօնական պաշտամունքի մէջ. բայց, մի քանի բացառութիւններից դատ, հեռու են պահւում պետական բարձր պաշտօններից. դրա պատճառն այն է, որ պարսիկները, լինելով հնդկադարձներ, անընդունակ չեն, ինչպէս Թիւրքերը, իրենք վարել իրենց գործերը: Իբր ճարպիկ մարդիկ, նրանք կարողացել են ժամանակին մեծ թուիչք տալ իրենց երկրին, և Պարսկաստանը չէ դադարել նշանակելի դեր խաղալուց արեւելքի ազգերի միջև՝ մինչև այն օրը, երբ իշխանութիւնն անցաւ խաջարների Թիւրքմէն ընտանիքին:

Իրանի և Թուրանի միջև տեղի ունեցած կռիւի այսպիսի վախճանը նշանակն եղաւ Իրանի անկման:

Պարսկաստանի ամբողջ հիւսիսը, մինչև Համադան, թիւրքերով է բնակւած, որոնք ներխուժելով այնտեղ են մնացել 11-րդ դարուց ի վեր: Բայց իրանականների հետ շփւելով՝ այդ թիւրքերը մի քիչ կորցրել են իրենց կուսաէր բնաւորութիւնն ու իրենց կոպիտ եսականութիւնը: Նրանք դարձել են աւելի հեղահամբոյր և նրանց միջև ապրող հայերը յաճախ ոչինչ չեն տուժում նրանց հարևանութիւնից:

Ատրպատականում կողք կողքի տեսնուում են թիւրքական, գելրական (եզիդական), հայկական, ասորական գիւղեր, առանց անախորժութիւններ ծագելու այս հարևանութեան հանգամանքից: Այս գաւառում է, որ դտնում է պարսկահայերի մեծագոյն մասը, ամենքն էլ վաստակաւոր երկրագործներ, մինչ իբր վաճառական նրանք ազդեցիկ գաղութներ են կազմում Իրանի գրեթէ բոլոր քաղաքներում: Նրանց պատահում էք Մարաղայում, Թեհրանում, Թաւրիզում, Համադանում, Սպահանի մօտ Նոր-Ջուղա արւարձանում, ուր նրանք տեղահանւել են ժամանակին Արաքսի վրայ գտնուող համանուն քաղաքից: Ամենուրեք նրանք զբաղւում են մանր արդիւնաբերութեամբ կամ առևտրով, յաճախ էլ արտածման մեծ վաճառականութեամբ:

Ատրպատականի գիւղերում՝ հայերը խաղաղ, շատ աշխատասէր մարդիկ են և քիչ են յաճախում իրենց հարևան մահմեդական կամ եզիդի հարևանների մօտ: Մեծ մասամբ նրանք կաթոլիկներ են՝ շնորհիւ Ուրմիայում բազմաթիւ տարիներից ի վեր հաստատւած ֆրանսական միսիոնարների. բայց զանազան աղանդների պատկանող բողոքական միսիոնարներ, օժտւած լինելով հօգոր միջոցներով, կուտւում են հայ կաթոլիկների ազդեցութեան դէմ և Սալմաստի գաւառում, ինչպէս և Սպահանում, խղճերը մի քիչ պղտորւած են: Բայց և այնպէս, կրօնակոտ հարցերը չեն զիջուել հայ ցեղի միութեանը—կաթոլիկ, լուսաւորչական և բողոքական հայերը ամեն բանից առաջ հայ են: Ահա մի օրինակ, որի մասին Եւրոպայի շատ ժողովուրդները խորհրդածելու խոհմութիւնը պէտք է ունենան:

Ուրմիայի շրջանում՝ հայերը շփման մէջ են Պարսկաստանի և Թիւրքիայի միջև գտնւած լեռնոտ վայրերում բնակւող քիւրդերի հետ. այդ աւազակ ու բարբարոս թափառաշրջիկները, որոնք միայն անւանալէս են հնազանդւում Շահին, յաճախ իջնում են իրենց լեռներից՝ կողոպտելու քրիստոնեաներին. այսու ամենայնիւ, հակառակ Թիւրքիայի օրինակին, պարսիկ կառավարութիւնն անում է այն, ինչ կարողանում է, պաշտպանելու իր քրիստոնեայ հպատակներին: Պէտք է ասել, որ Թաւրիզում կան Ծը-

րանսիայի, Անգլիայի և Ռուսաստանի հիւպատոսներ որոնք մօտից հսկում են Քիւրդիստանի դրութեան վրայ և ոյժ են տալիս Սալմաստի քաղաքացիներին և Ուրմիայի հայերի բողոքներին: Բայց հարաւային Քիւրդիստանում և բախտիարներին երկրում կան բըրիստոնեայ գիւղեր, որոնք պահպանում են միայն թեհրանի կառավարութեան բարեացակամութեամբ:

Ատրպատականի այս գլխաւոր օջախից դուրս, հիւսիս-արեւմտեան Պարսկաստանի համարեա բոլոր գաւառներում եւ յաճախ եմ պատահել կղզիացած հայկական գիւղերի: Երբեմն նոյնիսկ, դարերից ի վեր տեղահանւած այս մարդիկը խօսում են չորս հինգ դար առաջւայ բարբառով և, չնայած իրենց կղզիացած վիճակին, քահանայ չունենալուն, դարձեալ պահած են իրենց բրիստոնէական կրօնը: Բայց ինչ բըրիստոնէութիւն—խաչակնքումն, մի քանի աղօթքներ, առանց նշանակութիւնը հասկանալու, միակնութիւն և մի տեսակ մկրտութիւն գիւղի աղսախկալների ձեռքով—ահա ինչ որ նրանք գեռ պահել են: Նրանք խաղաղ էին ապրում քիւրդերի հետ, բայց այն պայմանով, որ ենթարկեն մահմեդականների բոլոր քմահաճոյքներին և հետզհետէ վարժեւել էին իրենց հունձքի, իրենց հօտերից գառների մի մասը նրանց տալու, վճարելու մի տեսակ տանանորդ:

Մի ուրիշ տեղ, Ղարաղալում, Արաքսից հարաւ, եւ եղել եմ 1911ին, մի գաւառի կենտրոնում, ուր 7 կամ 8 հայկական գիւղերից բաղկացած մի գիւղախումբ կուում էր իր հարեան մահմեդականների դէմ: Չգիտեմ ինչ վէճով, բայց շատ վաղուց այդ քրիստոնեաները զինեւել էին իրենց լեռների թիւրքերի դէմ և արդէն կուում էին երկար շաբաթների ընթացքում: Իմ ճանապարհն ինձ ստիպում էր անցնել թիւրք գիւղերից, յետոյ թափանցել նրանց թշնամիների մէջ: Թիւրքերը, որոնք շատ սպանւածներ էին ունեցել, ինձ աղերսեցին այդ մասին գրել թաւրիզի ընդհանուր նահանգապետին, հայերն էլ, իրենց կողմից նոյնպէս փնաս կրած, նոյնը խնդրեցին ինձ: Եւ ոչինչ չարի այդ առթիւ, որովհետեւ մի կողմից պարսկական նոր իշխանութիւնը բացարձակապէս անդօր էր միջամտել այդ կուին, և միւս կողմից հայերն իրենց հակառակորդներին դիմադրաւելու ոյժ ունէին:

Այն ժամանակից ի վեր, երբ Ասիայից Պարսկաստանի միջով եկած թիւրքերը տապալեցին Այրա-րատեան վերջին թագաւորութիւնը, դարերի ընթացքում այնքան կտրիճ, իր անկախութեան այնքան հաստատապէս փարած հայ ժողովուրդը ստիպեց ենթարկել նւաճողների լծին: Պարսիկները, Սելջուկները, Օսմանցիները յաջորդաբար տիրեցին նրան, իրար ձեռքից խլեցին ու վերագրաւեցին և վերջիվերջոյ բաժանեցին իրար միջեւ: Բայց այդ 8 դարու ստրկութեան ընթացքում այդ իշխողներից ոչ ոք նրան չէ պաշտպանել: Նա քրիստոնեայ էր, կորած այլազան աղանդներով մահմեդական ժողովուրդների միջեւ, և նրանցից իւրաքանչիւրը նրան նկատում էր իբր

ոչխարի հօտ, որի բուրդը կարելի էր խուզել, բայց որը չէր երաշխաւորւած նրա հարեան գայլ քիւրզի դէմ. և քիւրզ ցեղերը շարունակ կողոպտեցին, անգութ կոտորածներ, զուելի առեւանգութիւններ կատարեցին՝ մի որ և է պատուակով իջնելով իրենց արօտատեղերից, յափշտակեցին քրիստոնեաների ինչքը, սպանեցին տղամարդկանց, փախցրին երեսաներին:

Հայ-քրդական զաւառներով անցնելիս՝ ամեն հովտում պատահում էք աւերակների, որոնցից մի քանիսը շատ հին են, ուրիշներ՝ աւելի նոր, երբեմն էլ դեռ ծխի մէջ: Դրանք մահմեդականների և քրիստոնեաների միջև այդ յարատե կռիւների ընթացքում աւերւած գիւղերի մնացորդներն են: Հայերը միշտ քաջաբար պաշտպանւել են, կուել են իրենց ընտանիքներին, ինչքերը, մշակւած հողերը պաշտպանելու համար, և քանի կատարելագործւել են ղէնքերը, թըշնամի գիւղերը հեռացել են իրարից՝ հողի վրայ թողնելով իրենց բնակութեան յաջորդական էտապների հետքերը: Այստեղ մի աւաակի, որ սահմանակիցն է երկու ցեղերի միջև, աջից ու ձախից կան աւերակների երկու կործանւած պատեր—գրանք թշնամի գիւղերի փլատակներն են՝ մնացած այն ժամանակից, երբ կռիւը մղւում էր աղեղով: Աւելի դէնը կան նոյնպէս աւերակներ, յետոյ ուրիշ աւերակներ ևս, նրանք քարէ հրացանների և գծաւոր ղէնքերի ժամանակից են մնացած. շատ հովիտներում յաղթւողները, որոնք եղիլ են միշտ քրիստոնեաները, վերջ ի վերջոյ փախել են:

Արարատի ստորոտում՝ Մակուն, որի դիւրը յիշեցնում է Ռոքմազուրը, ժամանակին հայկական

աւան էր. ունէր իր վանքը, Ս. Թադէոս. ժայռերի վրայ փորագրւած արձանագրութիւնները հաստատում են այդ: Այսօր նա քիւրդական է:

Մակուն շատ հետաքրքրական քաղաք է: Հաստատւած մի հեղեղատի եղերքին, բարձր ժայռով եղրափակւած մի խորունկ ձորում, ձևացնում է մի շեղ-ջակոյտ, մի մեծ բնական պատսպարանի տակ, որ երբէք չէ անձրևում: Քաղաքը շրջապատւած են տերրասներ, անխոնջ աշխատաւորների ձեռքով ստեղծւած հրաշալի այգիներ: Անտարակոյս քիւրդերը չեն, որ հողի այդ ժլատ աղբիւրներից օգտւել են այդքան սքանչելիօրէն, այլ նրանց նախորդները, հայերը, որոնք զրկւել են նրանցից՝ հօրազոյնի օրէնքով. մի օրէնք, որ դժբախտաբար քիւրդերից զատ ուրիշների մօտ էլ յարգւում է:

Թիւրքիայումն է, որ հայերի գոյութիւնը միշտ եղել է ամենից անապահովը: Սակայն նրանք վաղուց համակերպւած են գոյութեան այդ յարատե կռիւն. այսպէս է եղել շարունակ նրանց, ինչպէս և արեւելի ժողովուրդների կեանքը՝ շատ հին ժամանակներից ի վեր: Այս միտքը թափանցելու համար բաւ է մի ակնարկ ձգել բիւզանդական պատմութեան վրայ, երբ Բաղիւկաներն և արքայից արքաները կուում էին Տիգրանի նախկին թագաւորութեան շուրջը, բաւ է աչքէ անցկացնել Վախուշտի Վրաստանի տարեգրութիւնները: Միջին դարում, այս ամբողջ երկրի մէջ տեղի են ունեցել միայն կողոպուտներ ու կոտորածներ, քաղաքների և վանքերի պաշարումներ, ամբողջ գիւղերի ստրկացումներ: Այսուամենայնիւ հայերը վարժուած էին վտանգի, և ընդհանուր անապահովութեան մէջ մի որոշ հաւասարակշռութիւն էր կայացել:

Բայց հայերը միայն Հայաստանում չէին ապրում. նրանք տարածւած էին ամբողջ աշխարհում յաճախ մեծ խմբաւորումներ կազմելով, և միշտ իրենց ազգութեան զգացումին յենւած: Բիւզանդական շրջանից է, որ սկսւում են Անատոլիայի ափերի գլխաւոր հայ գաղութները: Հռովմայեցիների և պարսիկների պատերազմների ընթացքում, Այրարատեան երկրները թատերաբեմն եղան այնպիսի արիւնալի կռիւների, որոնք շարունակեցին ամբողջ դարեր. շատ բնակիչներ գաղթեցին գնացին հանգստութիւն փնտելու կայսրութեան խորքերում. ծովեզերեայ քաղաքներում, որոնց զբաւման համար չէին կուում այն ժամանակ, Տրապիզոնում, Սամսոնում, Կիրասոնում, Սինոպում և մի շարք աւելի փոքր քաղաքներում հաստատուեցին գաղութներ և վերջին Բաղրիկսների մայրաքաղաքը նախքան վերջին կոտորածները, դեռ ունէր մօտ քսան հազար հայեր՝ քաղաքում և շրջականերում:

Տրապիզոնը Սև ծովի ամենահրապուրիչ քաղաքներիցն է: Պոնտեան Ալպերի, Թիւրքական Թորու-Դաղի լանջերի վրայ ամփիթատրոնի ձևով շինւած քաղաքը տարածւում է մինչև ծովը և իր կարմիր կոտւրների զանգւածով ծածկում պարիսպներով ու աշտարակներով շրջապատւած բլուրը, որի վրայ բարձրանում էր Կոմնենոսների մայրաքաղաքը: Փողոցները, բազարը, ինչպէս արեւելքի բոլոր քաղաքներում, նեղ ու զով են, կրպակներն երկարում են անհուն շարանով: Քանի քանի անգամներ ես անցել եմ այդ բազարով, Կեսարների պատմութեանը վերջին անգամ հագնող իշխանների հին դրամները գտնելու համար: Կանգ էի առնում ոսկերիչների, որոնք հայեր են, ամեն մի խա-

նութում և խօսակցում էի նրանց հետ, մի աթոռակի վրայ նստած, նրանց աշխատանոցներում, խմելով պտիկ բաժակներով մատուցւած սուրճը: Նրանք գոհ էին, որովհետև պաշտպան հիւպատոսները հսկում էին նրանց ապահովութեան վրայ, և առևտուրը ծաղկում էր: Նաւահանգստում, մաքսատներում, հասարակական վարչութիւններում, բոլոր գործերում ամենուրեք պատահում էին հաճոյակատար, սիրալիք, ծառայելու միշտ պատրաստակամ հայեր: Աւաղ, ի՞նչ եղան նրանք: Նրանցից տասնէնորս հազարը *), ասում են, կոտորւել են վերջին ամիսների ընթացքում, և կանայք ուղարկւել են Միջագետքի հաւաքավայրերը, կամ ստիպւելով մահմեդական դառնալ, բռնի ժպիտ են շռայլում իրենց հօր, ամուսնու, եղբայրների դահիճներին: Պատերազմը Տրապիզոնից հեռացրեց պաշտպան պետութիւնների հիւպատոսներին, որոնք միակ հովանաւորներն էին այդ դժբախտներին:

Տրապիզոնը լինելով Սև ծովում երթևեկող բոլոր նաւերի կայան, Բաթումի մօտաւոր դրացին, շարունակական յարաբերութեան մէջ լինելով Օգեսայի, Նովորոսիյսկի և Միջերկրականի բոլոր մեծ նաւահանգիստների հետ, մեկնակէտը լինելով Էրզրում, Խոյ, Թաւրիզ և Թեհրան գնացող բոլոր կարաւանների, քաղաքակրթւած քաղաքի տպաւորութիւն էր թողնում: Նրա փողոցներում պատահում էիք Թիւրքերին, յոյներին, հայերին, պարսիկներին և լեռներից իջած

*) Տրապիզոնում և իր շրջակայքում հաշւում էին պատերազմից առաջ (1914-ին) 18,343 հայեր՝ քաղաքի և 45 գիւղերի մէջ: Ռուս զօրախմբերը միայն 92 հայ են գտել քաղաքում և 367 հայ՝ գիւղերում:

մի քանի լագերի: Եւրոպացիները բազմաթիւ էին
այնտեղ, և ազգաբնակութիւնը շատ հեռու էր Քիւր-
դիստանի վայրագ աւաղակամբերից: Ուրեմն թիւր-
քերը, միայն թիւրքերն են, որ այնքան արիւն են
հոսեցրել երբեմնի այնքան հանգարտիկ այդ փողոց-
ներում, և եթէ Տրապիզոնը զո՞հ է դարձած սպանումի
այդ ծարաւին, ինչէր պէտք է տեղի ունեցած լինեն
ներքին քաղաքներու մ, լեռների մէջ կորած գիւղերում,
քրիստոնեայ կենտրոններից մղոններով հեռու այդ
վայրերում: Vae soli! Նախկին, այժմ գահազուրկ, Սուլ-
թանի տւած պժգալի հրամաններից ի վեր՝ թիւրքերի
հասարակական կարծիքը զգւելիօրէն հակառակեց հա-
յերին, ամենուրեք լսելի եղան ատելութեան աղա-
ղակներ: Մանհեղականներն իրենց միջև խօսում էին
հայերին ջարդելու մասին՝ որպէս մի արդար, սրբա-
զան և թիւրքիայի հանգարտութեան ու Մարգարէի
փառքի համար անհրաժեշտ մի գործի: Այս դժոխային
կարգախօսն այդ կռաւիտ հոգիների մէջ զարթեցրեց
արիւն հոսեցնելու կարիքը:

Սթամբուլի մի փողոցում ինքս ներկայ եմ եղել
այդ պղծելի վայրագութեան շատ բնորոշ մի դէպքի:
Երկու փոքրիկ սրիկաներ կուռւմ էին և մի թուրք
ծերունի, ալեհեր, պատկառելի միբուքով, ծիծաղա-
ղէմ դիտում էր նրանց՝ մատներովը համբիշը դարձ-
նելով: Նա խօսքով ու շարժումներով խրախուսում էր
երկու հակառակորդներից մէկին. բայց տեսնելով որ
սա թուլանում է, աղաղակեց. «Վճուր, վուր, էրմէնի
տիք» (զարկ, զարկ, հայ է): Ի՞նչ կարելի է սպասել
այդպիսի մարդկանցից:

Գաւառներում փաշաների և նրանց պաշտօնեա-

ների հարստահարութիւններին նշաւակ լինելով, հա-
յերը թափեցին Պոլիս, ուր դեսպանատների պաշտ-
պանութեան տակ յոյս ունէին գտնել իրենց նախկին
բնակավայրում գոյութիւն չունեցող հանգստութիւնը,
և անհատապէս աշխատում էին մի տեղ զրաւել ա-
րևի տակ. մինչ ճակատագիրը, թոււմ էր, այդ տեղը
մերժում էր տալ հայ ազգին: Կապեր հաստատելով,
պաշտպանութիւններ ճարելով, նրանք հետզհետէ մեծ
թւով մտան օսմանեան վարչութեան մէջ: Այս կեր-
պով է, որ ամբողջ թիւրքական կայսրութեան մէջ
նրանց աջողեց տնհրաժեշտ դառնալ իրենց տէրերի
համար: Բայց թիւրքերը սոսկացին պետութեան մէջ
հայերի ձեռք բերած ազդեցութիւնից: Նրանք մի տե-
սակ նւաստացման և երկիւղի հետ խառն նախանձի
զգացումով համակեցին: Ծնունդ առաւ մի դժգոհու-
թիւն, որ ցատու մի փոխակերպելու համար սպասում
էր վերսից տրեւիք մի նշանի:

Գերմանիայի ազդեցութեան պատճառով, Բեր-
լինի դաշնագիրը, որ ոչնչացնում էր Սան-Ստեֆանօի
դաշինքը, հայկական հարցը վերածում էր միջազգային
խնդրի: Հայերը վստահանալով մեծ պետութիւնների
ստորագրութեանը, սպասում էին իրենց խոստացած
բարենորոգումներին: Ոչինչ չարեց, ընդհակառակը, հա-
յաստանը դարձաւ անորակելի խժգժութիւնների թատե-
րաբեմ (1894—1896 թ.): Մեծ քաղաքների փողոցներում
խաղաղ ցոյցեր կատարեցին. Եւրոպան չմիջամտեց և
կոտորածները շարունակեցին: Այն ժամանակ է, որ
յեղափոխական կոմիտէները զարգացան, պահանջելով
գործադրել Բերլինի դաշնագրի 61րդ յօդւածով խոստա-
ցած բարենորոգումները: Այդ կոմիտէները հայ ժողովըր-

դին մղեցին զէնքով դիմադրելու քիւրդերի և թիւրքերի յարձակումներին, յուսալով, որ այդ կերպով ներանց կը յաջողւի դրդել Եւրոպային, որ աւելի վճռական լինի Սուլթանի հանդէպ։ Այդ ժամանակ է, որ տեղի ունեցաւ Բանկ-Օտտոմանի դէպքը։ Առաջնորդելով յուսալքումից՝ մի բռն երիտասարդ յեղափոխականներ կազմակերպեցին բանկի յանդուգն ցայցը՝ յուսալով, որ այդ ժեստով օրակարգ կը մտցնեն հայկական հարցը։ Այդ բռնութիւնը մի մեծ սխալ էր, որովհետեւ դա թիւրքերի ձեռքը պատրւակ էր տալիս նոր կոտորածների համար, երևութական արդարացում էր յաւիտեալ գաւառներում ամեն օր կատարւող վայրագութիւններին։ Բայց այդ սխալն արդարանում է յուսահատութեամբ։

Սուլթանը չկարողացաւ վրէժ լուծել այդ ուղղակի վերաւորանքի համար. միջամտեցին դեսպանները։ Դա արդէն մեծ հարւած էր այդ բարբարոս փառասիրութեանը։

Այդ րոպէից սկսած հայ ցեղը դատապարտւած էր, և երկու օր չանցած՝ Ապդիւլ-Համիդի հրամանով Պօլսոյ փողոցներում տասը հազարից աւելի հայեր ըսպանեցին։

Դա անորակելի մի կոտորած էր, մի զարհուրելի սպանդանոց։ Երբ ես այդ սոսկումներից մի բանի օր յետոյ անցայ քաղաքի միջով, մարտիրոսացածների դռների վրայ դեռ ևս կային կաւիճով գծւած նշաններ որոնք մահմեդական խուժուժ՝ ամբոխին մատնանշել էին զոհերին։ Յարձակում կրելով փողոցներում, իրենց տներում՝ հայերը մեծ մասամբ սպանւել էին փայտի հարւածներով, իսկ ուրիշներ, որոնք ինքնապաշտպան-

ւել էին, սպանւել էին զէնքով։

Զգալով, որ քրիստոնեաները՝ յոյները, հայերը, սերբիացիները, քաղղէացիներն երբէք չեն մոռանալու այն խժոժութիւնները, որոնց զոհ դարձան նրանք, երիտասարդ—թիւրքերն այսօր, չնայած իրենց ազատականութեան դիմակին, հակառակ իրենց կարծեցեալ քաղաքակրթութեան, չեն վարանում բնաջնջման անարգ գործի առաջ, և չնայած թիւրքական զրաքննութեան ձեռք առած նախազգուշական միջոցներին, մեղ ամեն օր հասնում են նոր ամօթանքների լուրերը։ Դրանք պատմութեան ամենահրէշային ժամանակների վայել վայրագութիւններ են, զանգաձային սպանութիւններ, չարչարանքներ, որոնց միայն նկարագրութիւնը սոսկումի սարսուռ է պատճառում։ Եւ ամենամօթալին, որովհետեւ դա արգարացում չի գտնում ցասումի մէջ, այն է, որ քսաներորդ դարում, արար աշխարհի առջև, թիւրքական մեծ քաղաքների շուրջ կաներում իբրև ստրուկներ վաճառւում են կանայք և աղջիկներ*։

Թիւրքիայում կապիտալիստները ջնջեցին, պաշտպան պետութիւնների դեսպաններն արտաքսեցին. Պոլսում մնում են միայն չէզոք երկիրների (Ամերիկայի, Սպանիայի դեսպաններն ու պապական պատիրակը) ներկայացուցիչներն ու Վիլհելմ II-ի և Կարլի ամենազօր ներկայացուցիչները, այն կայսրերի, որոնք իրենց հերթին արիւն են թափում Բելգիայում, Սերբիայում, Լեհաստանում և Ֆրանսիայից պրուսական նա-

*) Դեռատի կանայք և աղջիկներ ծախւում են մի մէջի-դիէյով (մօտ չորս ֆրանկ) իւրաքանչիւրը, երբեմն էլ երկուսը մի մէջիդիէյով։

հանգնեցնում: Միջնադարեան արհաւիրքները, որոնց նկարագրութիւնն է տալիս Արիստակէս Լաստիվերտցին, աւելի ճշդիչ չեն քան նրանք, որոնց յանցանքն այսօր ծանրանում է թիւրքերի ու կենտրոնական պետութիւնների վրայ:

XI դարու հայ պատմագիրն ասում է.

«Քանզի բազմաքանակ մեր աւերեալք և տունք այրեցեալք, և ապարանք հնոցացեալք, արքունաշէն սրբաշէն աճիւնացեալք: Արք ի հրապարակս կոտորեալք, և կանայք ի տանց զերի ելեալք, և կաթնասուն տըղայք զքարի հարեալք, և գեղեցիկ դէմք պատանեկաց թառամեալք: Կոյսք ի հրապարակս ի խայտառականս անկեալք, և երիտասարդք առաջի ծերոց սրախողխող եղեալք. պատուական ալիք ծերոց ընդ արիւն և ընդ ապաժոյժ եկեալք, և դիակունք նոցա թաւալզլոր խաղացեալք»:

Ինչպէս յոյներն ու փիւնիկեցիները հին դարերում Միջերկրական ծովի վրայ ու Եւրոպայի արևմուտքում առևտրական մեծ գործունէութիւն ունէին, նոյնպէս հայերը, ամենահին ժամանակներից սկսած միջնորդի դեր կատարեցին Միջերկրականի երկրների ու Արևելքի հեռավոր վայրերի միջև: Նրանք Ասորեստան և Քաղզխաստան էին տանում Փոքր-Կովկասի իւրենց պղնձի հանքերի արտադրութիւնները՝ ասորական մինայի (ժամ 78 ֆունտանոց կշիռ) օղակների ձևով *): Ասորպատականից մեկնող նրանց կարաւանները գնում էին Բախտիարիա և այնտեղից Հնդկաստան: Աստուածաշունչը, Հերոդոտը, Քսենոֆոնը յիշա-

տակում են նրանց վաղեմի յարաբերութիւնները Փիւնիկէի քաղաքների և Բաբելոնի հետ, ուր նրանք հասնում էին կարաւաններով թէ Տիգրիսի հոսանքով, թէ հիբրատի ափով: Այդպիսով նրանք հաղորդակցութեան մէջ էին դնում Առաջաւոր Ասիայի հարաւային երկրները՝ Եւքսինեան Պոնտոսի յունական գաղութների հետ:

Դէին հայկական մայրաքաղաքը 6-րդ դարուն, ըստ Պրոկոպի, Առաջաւոր Ասիայի առևտրական գլխաւոր կենտրոններից մէկն էր հանդիսանում: Հընդկաստանի, Բախտիարիայի, Պարսկաստանի, Կովկասեան Իբերիայի ապրանքները խաչաձևում էին Հռոմի և Յունաստանի ապրանքների հետ: 10-րդ դարու վերջերը, Անի, Արծն, Բաղէշ, Նախիջևան փոխարինեցին Դէինը: Սելջուկեանների կողմից երկրի աւերումով՝ պարսիկներն ու թիւրքերը բաժանեցին նրան իրար միջև, կասեցրին այդ բարգաւաճ վիճակը, և Մեծ-Հայքի բնակիչները ստրկութեան ենթարկելով ուրիշ միջոցներ չունեցան, բացի հողագործութիւնից: Այդ ժամանակից սկսած առևտուրն անցաւ Փոքր-Հայք, Ռուբինեանների ձեռքը: 13-րդ և 14-րդ դարերում, Կիլիկիայի մեծ նաւահանգիստ Փայտսը, ըստ Մարկո Պոլոի, դարձաւ «Արևելքի բոլոր թանկագին ապրանքների և բոլոր հարստութիւնների շտեմարան»:

Անտարակոյս, հայերը համաձայնել էին Առաջաւոր Ասիայի իրենց իշխողների՝ թիւրքերի հետ, որպէսզի իրենց երկիրը լինի Արևելքից եկող կարաւանների գլխաւոր կայանը: Այսպէս, Վենետիկի, Ջենովայի, Սիկիլիայի, Մարսէյլի, Բիւզանդիոնի նաւերը գալիս էին այդ քրիստոնեայ նաւահանգիստը վերցնելու չի-

* J. de Morgan, Mission scientifique au Caucase. 1889. Recherches archéologiques.

նական, հնդկական, պարսկական և արաբական բոլոր
երկրներին ապրանքները: Դրանց փոխարէն՝ նրանք
բերում էին եւրոպական արտադրութիւններ, որոնք
նոյն ճանապարհով ուղարկւում էին Չինաստան և
մինչև Մանջուրիա: Այդ ցամաքային փոխադրութիւնը
կատարւում էր մի շարք միջնորդների միջոցով, ո-
րոնց միջև մահմեդականները խաղում էին ամենամեծ
գերը, որովհետև նրանց կարաւանները կարող էին մի
կողմից հասնել հիւսիսային Հնդկաստան, միւս կողմից
թափանցել Սիբիրի խորքերը՝ առանց հանդիպելու
մարգարէին չհաւատացող ժողովուրդների:

Հայերն առևտրական մեծ յարաբերութիւններ
մշակեցին մանաւանդ Վենետիկի հանրապետութեան
հետ՝ սկսած 11-րդ դարուց մինչև 17-րդ դարը շարունա-
կաբար: Փոքր Հայքի թագաւորներն ափն տեսակ դիւ-
րութիւններ տալիս էին Վենետիկի վաճառականնե-
րին: Վենետիկի դուքսներն ու ծերակոյտն իրենց հեր-
թին ամենասիրալիք ընդունելութիւն էին ցոյց տալիս
հայ վաճառականներին: 1253 թւականին, կոմս Մար-
կո-Ջիւանի Վենետիկ հաստատւած հայերին նւիրեց իր
տներէից մէկը, որ մինչև այժմ էլ կոչւում է «Հայկա-
կան տուն»: Անկախութիւնը կորցնելուց յետոյ՝ հայե-
րը շարունակեցին իրենց վաճառականական գործառ-
նութիւնն և նոյնիսկ աւելի մեծ ծաւալում տւին նրան.
այնուհետև զինւորական և վարչական ասպարէզները
փակւած լինելով նրանց առջ, որովհետև հպատակ
ժողովուրդ էին դարձել, միայն առևտուրն էր մնում
իւր մի ասպարէզ, որ կարող էր բաւարարել նրանց
գործելու պահանջին: Նրանք կենտրոն ընտրեցին
Ջուլֆա և Գանձակ երկու մեծ քաղաքները՝ ներկայա-
ցուցիչներ ունենալով ասիական ու եւրոպական բոլոր

երկրներում, Հնդկաստանում, Պարսկաստանում, Չի-
նաստանում, Ռուսաստանում, Աւստրիայում, Ֆրան-
սիայում, Սպանիայում, Իտալիայում: 11-րդ դարուց
սկսած հայկական բազմաթիւ գաղութ էր հաստա-
ւել Լիհաստանում. այդ գաղութը, որ Լիհաստանի վա-
ճառականութեան ահագին ծառայութիւններ մատու-
ցեց, մինչև 17-րդ դարը վայելեց վարչական կէս
ինքնավար ընթիւմ, որ երաշխաւորւած էր թագաւո-
րական հրովարտակներով: Թիւրք բռնապետները, շա-
րունակելով հանդերձ հայ ժողովրդի ամբողջութեան
վրայ իրենց քաղաքական ու ընկերային ճնշումը, ա-
զատութիւններ էին տալիս միայն վաճառականներին,
որոնց նկատում էին իրենց կայսրութեան բարգաւաճ-
ման համար անհրաժեշտ մի տարր: Շահ Աբբաս I մին-
չև իսկ մի անպայման ինքնատիպ ու բարբարոս մի-
ջոցի դիմեց՝ ազացուցելու համար իր հիացումը դէպի
հայերի առևտրական ընդունակութիւնները. ցանկա-
նալով, որ իր կայսրութեան մէջ ծաղկի վաճառակա-
նութիւնը, նա 1605 թւին աւերեց Զուղա քաղաքը,
ստիպեց այստեղի հայերին գաղթել Պարսկաստան և
նրանց բնակեցրեց Սպահանի մօտ, ուր նրանք հիմ-
նեցին մի նոր քաղաք, որը կոչեցին Նոր-Զուղա: Եւ
իրօք այս քաղաքը շուտով դարձաւ Ասիայի (Պարս-
կաստանի) առևտրական զխաւոր կենտրոնը: Նոր-Զու-
ղայեցիներն ուժեղ զարկ տւին պարսկական վաճառա-
կանութեան. նրանք գրասենեակներ հիմնեցին Հնդ-
կաստանի մեծ քաղաքներում՝ Դելիում, Բոմբէյում,
Մատրասում, Կալկաթայում, Բատաւիայում, Սինգա-
փուրում: Հնդկաստանի սպանիական ու պորտուգա-
լական նաւահանգիստները, որոնք փակ էին օտարազգի

նաւերի առաջ, բայց էին հայ վաճառականների նաւերի համար: Նրանց ճիւղերը Մինգափուրից տարածւեցին դէպի հնդկական արշիպելագոսի կղզիները՝ Զաւայում, Սուամաւայում, Բորնէօյում, Ֆիլիպպինեան կղզիներում, Սիամում, Բիրմանում և Թիբեթում, մինչև Զինաստանի նաւահանգիստները՝ Կանտոն և Նանկին. նրանք շարունակեցին իրենց առևտրական դերը՝ իբր միջնորդներ եւրոպայի և Արևելքի միջև: Կարդինալ Ռիչլիեօ, գնահատելով այդ գործունէութիւնը, նպաստեց Մարսէլյում մի հայկական գաղութ հիմնւելուն: Աւստրիացի Մարիա Թերեզան մի յատուկ հրովարտակով բազմաթիւ առանձնաշնորհումներ տւեց հայ վաճառականներին, որոնք մի մեծ գաղութ կազմեցին Տրիեստում, ուր նրանց բնակած փողոցը դեռ կոչւում է հայկական փողոց: Երկրէ երկիր թափառող առևտրականները չէին մոռանում իրենց հայրենիքն ու ցեղը. նրանք Հայաստանի զանազան մասերում և օտար երկրների հայ գաղութներում հիմնում էին եկեղեցիներ, դպրոցներ: Նրանք եւրոպայում տպագրել էին տալիս հայերէն գրքեր և ուղարկում էին Հայաստան իրենց հայրենակիցներին, խոշոր գումարներ էին կտակում իրենց երկրի վանքերին ու դպրոցներին *):

Մեր օրերում հեռաւոր արևելքի մէջ հայերի առևտրական գործառնութիւնները շատ են կրճատւած, որովհետև պարսիկների առևտուրը զարգացած է, և չինացիները, որոնք շատ ճարպիկ վաճառականներ են, սովորել են արդէն անձամբ վարել իրենց սեփական

*) A. TCHOBANIAN, Chants populaires arméniens, ներածթ. էջ XXXV.

գործերը: Եւրոպայում ահագին դրամադուխներով հիմնւեցին շոգենաւային խոշոր բնկերութիւններ, և առևտրական մրցումն անկարելի դարձաւ Այսուամենայնիւ, արևելքում հայկական վաղեմի գործունէութեան հիմքերը դեռ չեն կորած:

Թիւրքիայում, ինչպէս և Պարսկաստանում, հայերն այս վերջին տարիներում դեռ ևս շատ կարեւոր դեր էին կատարում տնտեսական կեանքում: Սարըաֆները, թէև բազմաթիւ, բայց շատ դոյզն փոքրամասնութիւն էին կազմում. իսկ վաճառականները, մասնաւորապէս փոքր խանութպաններն ու արհեստաւորները համեմատաբար խիստ շատ էին: Պոլսի բեռնակիրները, որոնք գրեթէ ամենքն էլ հայեր էին, շատ արդարացիօրէն վայելում էին արտասովոր ուժի և իրենց արհեստում շատ խզճամիտ լինելու հռչակը: Նրանց կարելի էր տեսնել Պերայի և Ստամբուլի փողոցներում դանդաղօրէն շրջելիս, վիթխարի բեռներ շալկած: Հացթուխների մեծագոյն մասը հայեր էին, այնպէս որ 1896 թւականի կոտորածների ժամանակ քաղաքում երեք օր հաց չկար, որովհետև հայ հացթուխները սպանւած կամ պահւած էին: Դերձակները, առաջագործները, կոշկակարները, դարբինները, որմնագիրները, քարհատները, աղիւսագործները մեծ մասամբ հայեր էին և Պոլսի բազարում բոլոր ոսկերիչները, հնավաճառները՝ նոյնպէս հայեր: Մի քանի հայեր գորգի շատ մեծ վաճառատներ ունէին:

Մինչև 1896 թւականի կոտորածները, Պոլսում ոչ միայն բոլոր բեռնակիրները հայեր էին, այլև մեծ վաճառատների պահապանները, ծառաները, խոհարարները. նրանք ճանաչւած էին իբր շատ պարկեշտ

մարդիկ: Շատերը սպանւեցին, ուրիշները Հայաստան ուղարկեցին: Թիւրքերը բռնակիր հայերին փոխարինեցին քիւրդերով. բայց շատ տարակուսելի է, որ այդ աւազակներից կարողանան պահապաններ, ծառաներ ու խոհարարներ պատրաստել: Ինչ վերաբերում է բուն Հայաստանի հայերին, նրանք ամենքն էլ վերջերս տեղահանւեցին Միջագետք:

Պոլսի հայ համայնքը պահում էր բաւական թւով դպրոցներ, ուր սովորեցնում էին և ֆրանսերէն. այդ դպրոցները տեւել են իմացական ընտիր ուժեր, որոնք մեծ պատիւ են բերում իրենց ազգին—բժիշկներ, փաստաբաններ, ճարտարապետներ, արձանագործներ, շատ մեծ թւով նկարիչներ, տաղանդաւոր գրողներ, բանաստեղծներ, որոնք առաջնակարգ դեր են կատարում ժողովրդի իմացական զարգացման գործում, և որոնց գեղեցիկ էջերը դաստիարակելով հոգին՝ զօրացնում են ձախորդութեան տոկալու արիւթիւնը:

Միևնոյն բանն էր և Իզմիրում, Հնայած յոյների մրցումին, նոյնպէս և Թիւրքիայի բոլոր մեծ քաղաքներում: Կովկասում գրամատների և խոշոր ձեռնարկութիւնների մեծագոյն մասը հայերի ձեռքումն են: Նրանք բանեցնում են Սալեանի թառափի (օսետրինա) ձկնորսարանները և պատրաստում են ձկնկիթ (խաւհար): Նրանք մեծապէս շահագրգռւած են Բագրի նաւթի արդիւնաբերութեան մէջ: Պարսկաստանում նրանց կատարած դերը նւազ կարեւոր է, որովհետև պարսիկը խիստ ձեռներէջ վաճառական է: Բայց բոլոր քաղաքներում էլ հայերի մանր արդիւնաբերութիւնը ծաղկած վիճակի մէջ է:

Կովկասի և Պարսկաստանի քաղաքներում հայ

տարրը շատ մեծ տոկոս է կազմում ազատ արւեստներով զբաղողների թւում. պատահում էք հայազգի բազմաթիւ փաստաբանների, բժիշկների, ճարտարապետների, ուսուցիչների, որոնցից շատերն իրենց ուսումը ստացել են արևմուտքի՝ Ֆրանսիայի կամ Անգլիայի մեր համալսարաններում:

Գիւղական հայերը մեծ մասամբ հողագործ և խաշնարած են: Վանում, Անգորայում, Արճէշում, Բըրուսայում, Սղերդում նրանք այգեպաններ են. նոյնն է և Անդրկովկասում: Պարսկաստանի մէջ միայն նըրանք են գինի պատրաստում. Ատրպատականում, Համաւանում, Շիրազում նրանք հրաշալի գինի են արտադրում: Վանում և Անգորայում նրանք են մեղաբոյծները: Ամենուրեք նրանք երկրագործներ ու հովիւներ են:

Սեբաստիայի վիլայէթում հայերը հողը մշակում են նոյն իսկ ժամանակակից տեխնիկայով. Հաֆիկում և Քոչերիում նրանք գործածում են ամենից աւելի կատարելագործւած մեքենաներ: Նգիլատսում Պօղոս Նուպար փաշան կառավարում է անծայրածիր ազարակներ:

Հայերն են, որ Բրուսայում սկսել և զարգացրել են շերամաբուծութիւնը. 1849 թւին Պիլէզիքէին այնտեղ հաստատեց շերամաբուծարաններ, և յաջորդ տարիներում նրա օրինակին հետեցին Յովակիմ աղան և Փափազեանը. այդ երկրում նրանք առաջինը կարողացան գործածել Պաւտօբեան մեթոդներն ու կուել շերամի հիւանդութեան դէմ:

Հայերը զինագործներ, դանակագործներ և ոսկերիչներ են մանաւանդ Երզնկայում, Բաբերդում, Վա-

նում, Տիգրանակերտում, Սեբաստիայում, Անգորայում, Տրապիզոնում, Թիֆլիսում, համարեա ամեն տեղ նրանք են դարբինները, պղնձագործները, ջուլհակները: Երզնկայում նրանք են խաղախորդներն ու ներկարարները. Իզմիրի մօտ Արսլան-Բէյ գիւղում նրանք են կառավարում կերպասի և ֆէսի վիւժողական գործարանը*:

Վերոյիշեալներից պարզ երևում են հայերի բազմապիսի ընդունակութիւնները. այդ յատկութիւններին նրանք միացնում են խնայողութիւնը, որ այնքան հազագիւտ առաքինութիւն է արեւելքում, և ամեն փորձութեան դիմադրելու յատկութիւնը Հայը շատ յանդուգն է գործառնութիւններում, և երբ անյաջողութեան է հանդիպում, երբէք չի յուսահատուում. նա վերսկսում է աւելի համեստ կերպով, և գործատէր լինելուց յետոյ պատրաստ է ծառայող դառնալ:

Ես խօսեցի Հայոց պատմութեան մասին, մի քանի խօսք ասացի սեփական իշխանութեան կորստելուց յետոյ նրանց կրած տառապանքների մասին: Աւելորդ չի լինիլ ցոյց տալ, թէ նրանք ինչպիսի մարտիրոսագրութեան են ենթարկուում այսօր թիւրքերի լծի տակ, մի քանի պատմութիւններ տալ այն մեթոդիկ բնաշնչումից, որին զոհ է դառնում այսօր հայ ժողովուրդը:

Սուլթան Ապդիւլ-Համիդի հրամանով կատարւած կոտորածները (1894—1896 թ.) ամենքի յիշողութեան

*) Pierre Quillard—«L'Arménie, mémoires et dossiers».

մէջ են դեռ. Ադանայի հեկատոմբերը (1909 թ.) աւելի նոր են. ուրեմն՝ մի սերնդի ընթացքում այս երրորդ անգամն է, որ հայերը զոհ են դառնում սոսկալի վայրագութիւններին:

1915 թւի Մայիսի 20-ից սկսած, երիտասարդ թիւրք կոմիտէի որոշումով, զինւ. նախարար էնէր փաշան հրամայեց տեղափոխել դէպի արաբական տնապատները, Բաղդադի գծից հարաւ, Անատոլիայի և Կիլիկիայի վիլայէթների ամբողջ հայ ազգաբնակչութիւնը:

Քաղզէսաստանում, ուր բոլոր հնաւուրց ջրանցքները լեցւած են դարերից իվիր, ուր թափառաշրջիկ արաբներն են իշխում, իբր այլամերժ տէրեր, մեծ մասամբ առանց հպատակելու պոլսական կառավարութեան, գաղութ հիմնելն անհնար է: Այդ երկիրն ոչ մի միջոց չէ տալիս, և սակաւաթիւ բնակիչները, նոյնքան բարբարոս. որքան քիւրդերը, չէին հանդուրժիլ, որ օտարներ հաստատուին այդ անջրդի տափաստաններում, որոնց նրանք նկատում են իբր իրենց սեփականութիւնը:

Տրապիզոնի, Էրզրումի, Սեբաստիայի, Բաղէշի, Խարբերդի, Տիգրանակերտի և Ադանայի վիլայէթները «օսմանեան ազատական կառավարութեան» հրաւանով պարպեցին ամբողջ հայ ազգաբնակչութիւնից, քիչ բացառութեամբ: Իզմիրի գաւառում նոյն հրէշային գործը կատարեց: Մինչև հիմա, ասում են, խնայել են մասամբ Պոլսի, Զմիւռնիայի և Ադանայի հայերին, ինչպէս և բուն հայկական գաւառներից դուրս գտնուող մի քանի վայրերի հայերին: Բացի այդ, 100,000 հայեր Էրզրումի նահանգից փախել են

Կովկաս և Պարսկաստան 1914—1915 թվականի ձմեռայն ընթացքում, և վանի նահանգից 200,000 հոգի նոյն ճանապարհին են հետևել 1905 թ. յուլիսին:

Հասկանալի է, որ հայերի տեղահանութիւնը կատարել է նրանց բոլոր ինչքերը կողոպտելուց յետոյ. բայց աւելի վատն այն է, որ սրբազան պատերազմի յայտարարութիւնից իվեր հարիւր հազարաւոր հայեր են կոտորւած, հարիւր հազարաւորներ բռնի իսլամացւած են, իսկ մնացորդը—կանանց, երեխաների և ծերերի մի խղճալի հօտ—քշւած է դէպի անապատը, բոլոր զրկանքներին, ամենադաժան վարձուների ու բոլոր ամօթալի արարքներին ենթարկւելուց յետոյ՝ այնտեղ մեռնելու համար: Տեղահանութիւնն ուրիշ բան չէ եղած, եթէ ոչ զիմակաւորւած կոտորած:

Արիւնտուշա բռնապետ Աբդ-իւլ-Համիդը տեսնելով, որ իր հայ հպատակները, համարձակութիւն առած Բուլղարիայի և ազատագրւած ուրիշ «ուայա» ժողովուրդների օրինակից, սկսում են բողոքել իրենց վրայ գործադրւած անօրէն բեժիմի դէմ, կազմակերպւում են բիւրդերի դէմ պաշտպանելու համար, Եւրոպային են գրիմում բարենորոգումներ պահանջելու, հրամայեց կոտորածներ սարքել՝ ահաբեկելու նպատակով այդ ժողովուրդը, պակասեցնելու նրա թիւը, որպէսզի անհնար դարձնէ Հայաստանի քաղաքական վերածնութիւնը: Երիտասարդ թիւրքերը, հակառակ իրենց ազատականութեան զիմակին, խորհելով գահից տապալւած Սուլթանի պէս, հետապնդեցին հայերին ջնջելու քաղաքականութեան՝ դործածելով նոր, բայց աւելի զարհուրելի միջոցներ, քան կիրառել էր Աբ-

դիւլ-Համիդի կառավարութիւնը, գերմանական կուտուրան միջամտեց ոճրին. մէջ իր մեթոդիկ ոգին մտցնելու համար. մինչ զինւորական տարիքում գլտնընդ հայերն երանութեան զօրահաւաքի էին ենթարկւում, կառավարութիւնը տեղահանում էր մնացած ազգաբնակչութիւնը: Ինչ վերաբերում է զօրահաւաքով կանչւածներին, նրանց չէին զինում, այլ գործածում էին որպէս բանւորների՝ զօրախմբերի հսկողութեան տակ: Այդ կերպով պատրւակ էին ստեղծում նրանց սպանելու համար:

Նմանօրինակ վերաբերմունքը բողոքների տեղի կը տար հայ մտաւորականների կողմից, և այդ բողոքներն անտարակոյս կը տարածէին Եւրոպայում և ամբողջ աշխարհում: Կարող էր վտանգ ծագել դրանից: Ապրիլ 28-29 գիշերով ձերբակալեցին Պոլսում հայ ազգի ամբողջ ընտրեալ դասը—պատգամաւորներին, քաղաքագէտներին, լրագրողներին, բժիշկներին արեւստագէտներին, ուսուցիչներին, և արշալոյսից առաջ նրանց ճամբայ հանեցին դէպի Անգորա, Կոնիա կամ Տիգրանակերտ:

Միւսոյն ճակատագիրն էր սպասում և ներքին քաղաքների բոլոր մտաւորականներին: Առանց մեղադրական ակտի, առանց դատաստանի, առանց նոյն իսկ որևէ այլ պատրւակ ցոյց տալու, բացի այն, որ հայ են, բանտարկեցին, սպանեցին կամ տեղահանեցին: Դրանից առաջ կամ միաժամանակ սկսեցին ամբողջ հայ ժողովրդին զինաթափել և զինել մահմեդականներին: Կազմակերպեցին քիւրդական և թիւրքական հրոսախմբեր՝ չարագործներին ազատ արձակելով բանտից: Այդ հրոսախմբերը 1915 թւի մարտից սկսած

շղթայադերձ արձակելով էրզրումի, Վանի վիլայէթներում, կողոպտեցին աւելի քան 500 հայկական գիւղեր և սպանեցին նրանց 26000 բնակչութիւնը. բայց սրանք նախափորձեր էին դեռ:

Մայիսի 20-ին (7-ին) սկսեցին կոտորածի և տեղահանութեան համատարած կարգադրութիւնները: Մի ընդհանուր ազդարարութեամբ հրամայեց, որ բոլոր քաղաքներում և գիւղերում հայ ազգաբնակչութիւնը պատրաստ լինի մեկնելու մի քանի ժամայ ընթացքում՝ տեղափոխելու համար հեռաւոր գաւառներ, զապթիէների (ժանդարմ) ուղեկցութեամբ: Տներ, հողեր, ամեն տեսակի կայքեր դարձան կառավարութեան սեփականութիւն և յանձնեցին մահմեդականներին: «Միւթիւն և յառաջդիմութիւն» կուսակցութեան համար դա մի միջոց էր բազմաթիւ կողմնակիցների շահելու: Ունեւոր հայերին արտօնեց կառքեր կամ գրաստներ ճարել շատ թանգ գներով. բայց դժբանց մեծ մասը քաղաքից դուրս գալուց յետոյ խլեց նրանց ձեռքից: Դրանից յետոյ, ամենահարուստներից մինչև ամենաաղքատները, կարողացան իրենց մօտ պահել միայն այն, ինչ կարող էին իրենց վրայ կրել: Մահմեդական ազգաբնակչութեանն արգելւած էր կենսամթերք ծախել հայերին կամ նրանցից որեւէ բան գնել:

Չեւնարկւած առաջին միջոցն այն էր ամենուրեք, որ պէտք էր իրարից անջատել ամուսիններին ու կանանց, ընտանիքի անդամներին, նոյնիսկ երեխաներին իրենց ծնողներից: Արդէն մեկնումից առաջ ամենասիրուն կանայք և աղջիկները, մանաւանդ ունեւոր դստին պատկանողները, բերեցին թիւրքական

մասնաւոր կամ հասարակաց տները*) և բազմաթիւ երեխաներ տարեցին մահ-կեղականների կողմից:

Անատոլիայի ամայի ձորերի միջից, ամառւայ խիստ շոգերին, մարդկային այդ սովալլուկ զանգւածները, յոգնածութիւնից ուժասպառ, զապթիէների մօրակի կամ փայտի հարւածներով քշւում էին, և վնջ նրան, որ ընկնէր ուժասպառումից. սւինի կամ թուրի հարւածով սպանում էին նրան:

Մի քանի տեղերում, ինչպէս Քեմալի կիրճում, եփրատի վերին հոսանքի վրայ, տեղի ունեցան հաւաքական սպանութիւններ: Ճանապարհին այդ կարաւանները յաճախ յարձակում էին կրում քիւրդերի և թուրք աւաղակների կողմից, և համարեա բոլոր ողջ մնացած տղամարդիկ, ինչպէս և շատ կանայք՝ սպանեցին: Շատ խմբերի միայն մի քանորդը հասաւ նշանակւած վայրը: Կանանց և երեխաներին ճանապարհին խլում էին թիւրք ու քիւրդ գիւղացիները, որոնք նրանց տանում էին գիւղերը՝ իրենց ստրուկները դարձնելու համար և քաղաքների մօտի խսկական շուկաներում չնչին գնով ծախում էին դեռատի աղջիկներին ու երեխաներին: Իշխանութիւնները մրցանակ էին խոստանում այն թիւրք ընտանիքներին, որոնք յանձն առնէին մահմեդական դարձնել այդ դժբախտներին. հաւատափոխութիւնը քաջալերեց՝ իրենց նախնիքների կրօնից հրաժարել չուզողներին մահաւան սպառնալիք անելով:

Չպէտք է մոռանալ, որ բոլոր այս անարգանք-

*) Այսօր արդէն ստոյգ է, որ գերմանացի սպաները վերջինները չեն եղել գերւած հայ, տիւրքացի, հրէայ և յոյն կանանց միջև ընտրութեան գործում:

ները հասցում էին այնպիսի ընտանիքներին, որոնց անդամները տղամարդիկ, կանայք և օրիորդները մեծ մասամբ եւրոպայում են եղել, խօսում են արեւմտեան լեզուներ և իրենց իմացական մշակոյթով ու իրենց զգացումներով եւրոպացիներին համահաւասար են:

Մահմանադրութեան սկզբից, հայ բաղադրական վարիչները շարունակ յարել են «Միութիւն և յառաջ-դիմութիւն» կուսակցութեան: Նրանք անձնական բարեկամներն էին ազատական թիւրքերի, և բէակցիայի ժամանակ (1909-ին) ազատել են նրանցից շատերի կեանքը՝ իրենց սեփական կեանքի վտանգով պահելով նրանց: Այս իրողութիւնն աւելի տմարդի է դարձնում երկտասարդ-թիւրքերի վարմունքը:

Ոչ մի ռազմագիտական կամ զինւորական նկատառում չէ կարող մէջ բերել արդարացնելու այդ սարսափները, և կամ իբր պատուակ ծառայելու նըրանց: Կոտորածի ու կոլոպուտի դրդապատճառը չէր կարող լինել և այն, որ թիւրքերը կամենում էին քրիստոնեայ ազգաբնակչութիւնը ստիպել մահմեդական դառնալու, իսկական շարժառիթը հայ ժողովրդի արմատական բնաջնջումն էր: Պաղեստինում հրէական կոտորածները (1915 թւականին) *) և Իզմիրի շրջականներից յոյների արտաքսումը նոյնպէս հետեանքն են թիւրքական սա ծրագրի — թիւրքիան միայն թիւրքերին. որովհետև արաբներն իսկ շնորհագուրկ են այս վայրագ օտարատեսացների մօտ:

Անտարակոյս թիւրքիայի յոյները շատ աւելի բիշ տուժեցին, քան հայերը. բայց նրանք էլ զոհերն

*) Որոնք աւելի մեծ չափեր ստացան հետզհետէ, ինչպէս հաւաստում են եւրոպական աղբիւրները: Ծ. Թ

են թիւրքերի բարբարոսութեան, և Աթէնքի կառավարութիւնը բաւականացաւ մի քանի, այն էլ պղտոնական, բողոքներով: Եթէ յոյների դէմ հալածանքները համեմատաբար նւազ դաժան եղան, պատճառն այն է, որ Բ. Դուռը մասամբ նկատի պիտի առնէր կոստանդին թագաւորի հպատակների կտրփոքը: Ինչ վերաբերում է Պաղեստինի սիոնիստներին, հայերին ու սիւրիացիներին, թիւրքիայի արտաքին յարաբերութիւններն ոչ մի արգելք չէին յարուցանում: Այսօր ամբողջ թիւրքիայում կարգախօսն այս է. «Այլևս ոչ մի քրիստոնեայ, ոչ մի հրէայ»:

Վերոյիշեալ տեղեկութիւններին, որոնք առնւած են գերմանական աղբիւրներից, ես կաւելացնեմ երկու գերմանուհի հիւանդապահների պատմածը: Նրանք 1914 թւականի հոկտեմբերից մինչև 1915-ի ապրիլը ֆրացել են Էրզրումում Deutsche Militär-Mission-ի (գերմանական զինւորական միսսիայի) ծառայութեան մէջ, և որոնց նօթերը, հրատարակւած Ժընևի հայաստաստ կոմիտէի կողմից (1915-ին), գրւած են Պոլսում 1915-ի յուլիսի 29-ին (16-ին): Ուստի դրանք չեն կարող կողմնապահ համարւել՝ իբր այնպիսի փաստաթղթեր, որոնք Հայաստանի պաշտպան երկրների մէկից ծնունդ առած լինեն:

«1915-ի մարտին մենք իմացանք մի հայ բժշկից, որ յետոյ տիֆից մեռաւ, թէ կառավարութիւնը պատրաստում է մի մեծ կոտորած: Նա մեզ խնդրեց իմանալ գններալ Պաոսելտից, թէ դա ճիշտ է: Մեզ ասացին յետազայում, որ այս ազնիւ սպան եւ վախենում է այդ բանից և խնդրել է հեռանալ իր պաշտօնից... Մենք հիւանդացանք տիֆով, և պաշտօնեաների յա-

ճախակի փոփոխութեան պատճառով ոտիպեցինք հե-
ռանալ Էրզրումից: Էրզրումի գերմանական հիւպա-
տոսի միջնորդութեամբ, որ վայելում էր հայերի
վստահութիւնը, մենք մտանք Երզնկայի Կարմիր-Սաչի
մէջ և այնտեղ աշխատեցինք եօթը շաբաթ:

Յունիսի սկիզբը, Երզնկայի կարմիր խաչի մի-
սիայի պետը, X սպայակոյտի բժիշկը, մեզ ասաց,
որ հայերը Վանում ապստամբել են (Վանի հայերը
ամբացել են իրենց քաղաքամասերում պաշտպանե-
լու համար թիւրք և քիւրդ շարդարարների դէմ), թէ
միջոցներ են ձեռք առնւած, որոնք պիտի ընդհան-
րացեն, և Երզնկայի ու շրջակայքի ամբողջ հայ ազ-
գաբնակչութիւնը պիտի տեղափոխուի Միջագետք, ուր
նա մեծամասնութիւն չի կազմիլ. բայց կոտորածներ
չեն լինիլ. թէ միջոցներ ձեռք պիտի առնեն տեղա-
հանւածներին կերակրելու և զինուորական պահակա-
խումբով ապահովելու նրանց անվտանգութիւնը: Իբր
թէ Երզնկայում գտել են զէնքով ու ռումբով բեռնւած
կառքեր և շատ ձերբակալութիւններ են կատարել:
Կարմիր-Սաչի ծառայողներին արգելեց յարաբերու-
թիւն ունենալ տեղահանւածների հետ. արգելեց նոյն-
պէս ոտքով կամ ձիով թափառել:

Այնուհետև մի քանի օր ժամանակ տրեց Երզն-
կայի ժողովրդին ծախելու իր ինքները, ինչոր բնա-
կանաբար տեղի ունեցաւ ծիծաղելի գներով: Յունիսի
առաջին շաբթին առաջին թափոյն էր մեկնելու. հա-
րուստներին թելադրեց կառք վարձել: Նրանք պէտք
է գնային Խարբերդ, Յաջորդ երեք օրերում նոր տե-
ղահանութիւններ եղան, շատ երեխաներ վերցնեցին
մահմեդական ընտանիքների կողմից: Յետոյ որոշեց
որ երեխաներն էլ պէտք է մեկնեն:

Ստիպեցին մեկնել և մեր հիւանդանոցում ծա-
ռայող հայերի ընտանիքները, նոյնիսկ մի հիւանդ
կին. նրան խնամող դուկա Նոյկիրլի բողոքը միայն
երկու օրով ուշացրեց նրա մեկնումը: Մեզ մօտ կօշ-
կակարութիւն անող մի զինուոր ասաց ըոյր X-ին. «Ես
քառասուն վեց տարեկան եմ, բայց և այնպէս ինձ
զինուոր են վերցնում, չնայած որ ամեն տարի վը-
ճարած եմ զինուորական տուրքը (ծառայութիւնից ա-
զատման): Ես երբէք ոչինչ չեմ արել կառավարութեան
դէմ, բայց և այնպէս խլում են իմ ամբողջ ընտանի-
քը, իմ մօրը՝ որ 70 տարեկան է, իմ կնոջն ու հինգ
երեխաներին, և ես չգիտեմ, թէ նրանք ուր են գը-
նում»: Նա լաց է լինում մանաւանդ իր մէկուկէս
տարեկան փոքր աղջկայ համար:

Հետեւեալ օրը նա եկաւ և ասաց. «Իմացայ. նրանք
ամենքն էլ մեռած են». և դա կատարելապէս ճիշտ էր:
Մեր թիւրք խոհարարուհին լալով պատմեց մեզ, թէ
քիւրդերը Քեմալի կիրճում (Եփրատի վրայ՝ Երզն-
կայից 12 ժամ հեռու) յարձակել են դժբախտ թա-
փորի վրայ, բոլորովին կողոպտել են նրան և մեծ
մասը սպանել. դա պէտք է եղած լինի յունիսի 14-ին
(1-ին): Երկու զեռատի հայ ուսուցչուհիներ, Խար-
բերդի կողքում ուսում առած, որոնց խնայել էին,
պատմեցին, թէ այդ կարաւանը կողքից քիւրդերի և
յետեից թիւրքական կէս-կանոնաւոր զօրքի խաչաձև
կրակի տակ էր առնւած: Նրանք ընկել են գետնի վը-
րայ և մեռած ձեացել և ապա կարողացել են խոտոր-
նակ ճանապարհներով հասնել Երզնկա՝ զրամ տալով
իրենց պատահած քիւրդերին: Իրանցից մէկի հետ է
եղել իր նշանածը, կանացի հագուստով, որին պաշտ-

պանել էր իր թիւքը դասընկերը: Երբ Երզնկա են հասել, մի ժանդարմ ուզել է տիրանալ մատուղատի օրիորդին. նշանածը բողոքել է: Սա սպանոււմ է, և երկու օրիորդները տարւում են թիւքերի տները, ուր նրանց հետ վարւում են սիրալիր կերպով, բայց պահանջում են, որ մահմեդական դառնան: Նրանք մեզ այս տեղեկութիւնները հաղորդեցին մի երիտա-սարգ բժշկի միջոցով՝ խնդրելով, որ մեզ հետ միա-սին խարբերդ տանենք նրանց: Եթէ թոյն լինէր ի-րենց մօտ, ասել էին, կը թունաւորւէին:

«Հետեւեալ օրը, ուրբաթ, յունիսի 11-ին (ն. տ.) կանոնաւոր դօրամասեր (հեծելազօրքի 86-րդ ջոկատի զինւորներ) ուղարկեցին՝ քիւրդերին պատժելու հա-մար, ինչպէս որ ասում էին:

«Զինւորները մեզ պատմեցին, թէ այդ անգէն զժախտները ինչպէս են կոտորւել ամենքն էլ: Այդ զօրծի համար հարկաւոր է եղել միայն չորս ժամ: Կիները ծունկի էին դալիս և իրենց երեսնաներին ձը-գում Եփրատի մէջ: Մի զինւոր ասում էր. «Սարսա-փելի բան էր, ես չէի կարողանում կրակել»: Մենք ուրիշ թիւքերից էլ լսեցինք պարսաւանքի և կա-րեկցութեան խօսքեր: Նրանք պատմեցին, որ պատ-րաստի սայլեր են եղել՝ դիակները դէպի գետը տա-նելու և կոտորածի հետքերը ջնջելու համար: (Ամսի 11-ի երեկոյեան տեսանք, որ զինւորները վերադառ-նում են աւարով):

«Հետեւեալ օրն որսորդական արշաւանք կատար-ւեց ցորենի չհնձւած արտերում, ուր բազմաթիւ հա-յեր էին պահւած:

«Այդ բոլորից սկսած շարունակ հասնում էին

տեղահանւածների կարաւաններ, ամենքն էլ բերած սպանելու համար. զա հոստատուում է շատ բազմազան աղբիւրներից և մեր քաղած միաձայն վկայութիւն-ներով: Յետոյ մեր յոյն կառապանն ասաց մեզ, որ զոհերի ձեռքերը կանւում են և ժայոների բարձունքից ձգոււմ դետի մէջ: Այդ միջոցին են դիմել, երբ դան-դաւանները չափազանց շատ լինելով այլ կերպ չէին կարող սպանել:

«Քոյր X և ես բնականաբար անմիջապէս մտա-ծեցինք, թէ ինչ կարող ենք անել և վճռեցինք թա-փօրներից մէկին ընկերանալ մինչև խարբերդ: Մենք գետ չգիտէինք, թէ կառավարութիւնն է հրամայել նրանց կոտորել ճանապարհին. կարծում էինք, թէ այդ կերպով կարող էինք առաջն առնել ժանդարմ-ների վայրագութիւնների ու քիւրդերի յարձակում-ների, որոնց լեզուն իմանում էինք, և որոնց վրայ աղբեցութիւն ունէինք:

«Ուստի հեռագրեցինք էրզրումի հիւպատոսին՝ ասելով, որ մենք արձակւած ենք հիւանդանոցից և խնդրում ենք Գերմանիայի շահի համար, որ Երզնկա գալ: Նա պատասխանեց. «Անկարելի է հեռանալ պաշ-տօնատեղիցս, սպասում եմ աւստրիացիներին, որոնք այստեղով պիտի անցնեն յունիսի 22-ին»:

«Յունիսի 17-ի երեկոյեան, Կարմիր խաչի դե-ղագործ Գ.-ի հետ դնացինք պտոյալի: Նա էլ մեզ պէս դարձուրած էր վայրագութիւններից և շատ բացօթոշ արտայայտեց այդ մտքին: Նա էլ արձակւել էր պաշ-տօնից: Մենք պատահեցինք մի ժանդարմի, որ մեզ պատմեց, թէ 10 բոլէ հեռաւորութեան վրայ Բա-բերդից տեղահանւածների մի մեծ կարաւան էր կա-

սեցրել: Նա սրտայոյզ շեշտով պատմեց, թէ ինչպէս տղամարդիկ կոտորւած և կիրճի խորն էին նետւած՝ «Քէսին, քէսին, կէլիօրլար» (կոտորեցէք, կոտորեցէք, գալիս են) աղաղակների տակ, թէ ինչպէս ամեն մի գիւղում կիները բռնաբարւել են, թէ ինչպէս ինքն էլ ցանկացել է տիրանալ մի օրիորդի, բայց իրեն ասել են, թէ նա այլևս կոյս չէ, թէ ինչպէս գլուխներն են ջարդել այն երեխաների, որոնք ճշում կամ ուշացնում էին կարաւանի երթը: «Շա քարի գործ կատարած լինելու համար թաղել տւի երեք աղջկայ դիակ» — այսպէս վերջացրեց նա իր պատմութիւնը:

«Յաջորդ առաւօտեան շատ վաղ լսեցինք, որ մեր տան կողքով Նրդնկայ տանող մեծ ճանապարհի վրայ անցնում է տեղահանւածների մի թափօր: Մ. Գ. ի հետ միասին մենք նրանց հետևեցինք և ընկերացանք մինչև քաղաքը: Դա մի մեծ կարաւան էր. միայն երկու կամ երեք տղամարդիկ, բոլոր ֆացածները կիներ կամ երեխաներ էին: Նրանք աղաղակում էին. «Ազատեցէք մեզ, մենք կը դառնանք մահմեդական կամ գերմանացի, կամ ինչ որ կուզէք, միայն ազատեցէք մեզ: Մեզ տանում են Քեմալի կիրճը ուր մեր գլուխներն են կտրելու» և նշանակալից մի շարժում էին անում: Ուրիշներ լսում էին և համբերութեամբ քայլում՝ մի քանի ծրար շալակած և երեխաների ձեռքից բռնած: Մի քանիսն էլ մեզ խնդրում էին ազատել իրենց երեխաներին: Շատ թիւրքեր գալիս էին երեխաներ կամ կոյս աղջիկներ փնտռելու՝ երբեմն ծնողների հաւանութեամբ, և երբեմն առանց նրանց հաւանութիւնն ստանալու: Ժամանակ չկար

մտածելու, քանի որ խումբն անդադար առաջ էր քաշւում ձիաւոր ժանդարմների կողմից, որոնք ճօճում էին իրենց մտրակները: Քաղաքի մուտքի մօտ Քեմալի կիրճի ճանապարհը բաժանւում է պողոտայից: Այնտեղ կար ստրուկների շուկայի նման մի բան. մենք ինքներս էլ վերցրինք վեց տղաներ՝ 3-ից մինչև 14 տարեկան, որոնք փաթաթւում են մեզ, և մի աղջնակի: Այս վերջինին յանձնում ենք մեր թիւրք խոհարարուհուն: Նա ուզում է երեխային տանել դուկտ. X-ի մասնաւոր տան խոհանոցը՝ մինչև մենք վերադառնանք և վերցնենք նրան. բայց բժշկի գինւորական կցորդը՝ Ռիզա բէկը խփում է կնոջը և երեխաներին ձգում է փողոցը: Թշաւանների խումբը ցաւի ճիչերով շարունակում է ճանապարհը, մինչ մենք մեր վեց երեխաներով վերադառնում ենք հիւանդանոց: Ամենափոքրը Բաբերդցի մի հարուստի որդին է, ծածկւած իր մօր վերաբրկուի մէջ, արտասուելուց երեսը ուռած, առաջ է նետւում ցոյց տալով մի ժանդարմի. «Ահա իմ հօր սպանողը» ասաց նա... Մենք նկատեցինք, որ նախկին հիւանդներ, որոնք միշտ երախտազէտ էին եղել դէպի մեզ, այլևս մեզ ճանաչելու երևոյթը չունեն: Մեր հիւրանոցի տէրը սկսեց խօսել այնպիսի բաներ, որ ամենքն ուշադիր լսում էին. «Այս կանանց և երեխաների մահը հրամայեց Պոլսից»: Մեր հիւրանոցի թիւրք խօջան (կրօնաւոր) նոյնպէս եկաւ և ասաց մեզ ի միջի այլոց. «Եթէ Աստուծ չի ողորմում, ինչու դուք էք ուզում գութ ունենալ: Հայերը Վանում անգթութիւններ են արել, դա նրանից է առաջանում, որ նրանց կրօնը էքսիկ է (թերի, պակասաւոր), Մահմեդականները չպէտք է

հետեւէին նրանց օրինակին, այլ առելի մեղմ կերպով կատարէին կոտորածը»

«Գնացիք միւթէսարքի մօտ... Այդ մարդը հըրէշի կերպարանք ունէր... նա մեզ ասաց, որ այլևս չի ուզում մեզ հանդուրժել, և թէ մեզ չի թոյլատրում խարբերդ գնալ մեր իրերը գտնելու համար. նա մեզ պէտք է ուղարկէր Սեբաստիա, և ինչ որ ամենավատն էր, թոյլ չտուց մեզ հետ տանել երեխաներին. նա ժանդարմին ուղարկեց, որպէսզի նրանց մեր սենեակից վերցնի:

Հիւրանոց վերադառնալով մենք պատահեցինք երեխաներին, բայց նրանց աջնքան շուտ անցկացրին մեր կողքից, որ չկարողացանք վերադարձնել մեզ մօտ նրանց թողած դրամը (475 դրուշ, մօտ 100 ֆրանկ): Մենք յետագայում խնդրեցինք դուկտ. Լինդենբերգին, որ այդ գումարը նրանց յանձնէ: Կարիք եղաւ մի թիւրք սպայի հարցնել, թէ ո՛ւր են գտնուում նրանք. և ճիշտ մեր մեկնումի ըուպէին, երբ մեզ ասել էին արդէն, որ նրանք սպանւած են, Ռիզա բէկն եկաւ մեզանից պահանջելու այդ դրամը՝ երեխաներին յանձնելու պատրաստով! Հետեւալ օրը միւթէսարքին ուղարկեց մի սայլ, որի վրայ եօթն օր պիտի ճանաչողէինք մինչև Սեբաստիա: Մենք յայտարարեցինք, որ մերժում ենք այդ սայլը, որից յետոյ մեզ ուղարկեցին մի կառք՝ սպառնալով, որ մեզ կը ձերբակալեն եթէ չմեկնենք: Իսկ յունիսի 21-ին (8) էր տեղի ունեցում... Առաջին օրերը տեսանք հինգ գիտկներ, որոնցից մէկը կին, մէկը հագուստով, միւսները մերկ և մի ուրիշն անզուլա: Մեզ հետ միաժամանակ ուղևորւում էին երկու թիւրք սպաներ, որոնք ծպտւած հա-

յիր էին, ինչպէս հաւաստում էր մեզ ընկերացող ժանդարմը: Նրանք չյայտնեցին իրենց ինքնութիւնն և շատ վերապահ երևացին: Նրանք շարունակ աշխատում էին չբաժանել մեզանից. չորրորդ օրը մենք նրանց երեսը չտեսանք: Երբ հարցրինք նրանց մասին, մեզ հասկացրին թէ, որքան քիչ հետաքրքրուէինք նրանցով, այնքան մեզ համար լաւ կը լինէր: Ծանապարհին կանգ առանք մի յոյն գիւղի առաջ. վայրենի զէմքով մի մարդ էր կանգնել ճանապարհի վրայ: Նա սկսեց խօսիլ և ասաց, որ արդէն երկու հարիւր յիսուն հոգի է սպանել... Նա պատմեց ժանդարմներին, որ հետախօսով հրաման էր ստացել մեր երկու ուղեկիցներին սպանելու: Ուրեմն այդ երկու մարդիկ ու նրանց հայ կառապանները պէտք է վերջացւած լինեն այդտեղ: Մենք չկարողացանք ընդգիմախօսել այդ մարդասպանին: Երբ նա հեռացաւ, մեր յոյն կառապանը մեզ ասաց. «Ո՛չ մի խօսք մի ասէք, այլապէս... և նա հրացանազարկ անելու նշան արեց: Եւ իրօք, զրոյց էին տարածել, թէ մենք հայուհիներ ենք. ուստի և մահւան դատապարտւած:

«Մի օր մենք պատահեցինք տեղահանւածների մի քաղմութեան, որ գտնուում էր Քեմախի կիրճի ճանապարհի վրայ: Սակաւաթիւ տարիքաւորներ, բազմաթիւ կանայք ու շատ սիրուն երեխաներ... մի աղջնակ ծիծաղում էր՝ դիտելով այս տարօրինակ տեսարանը, մինչ ուրիշ զէմքեր մեռելային լրջութիւն ունէին: Ո՛չ մի շշուկ, ամեն ինչ խաղաղ էր, և այս դժբախտներն անցնում էին կարգով... անցնում էին՝ մի քանիսը բարեկեղծ մեղ: Նրանք ամենքն այժմ Աստծու զահի առաջն են և Նրան են բողոքում...

«Մեզ հետ հզոր ժամգարմը պատմեց, որ ինքն ընկերակցել է 3000 կանանցից բաղկացած մի կարաւանի՝ էրզրումի մօտ Մամա-Մաթունից մինչև Քեմախի կիրճը: «Հէլի կիլիմալի, պիլիմալի» (ամենքը կորան, վերջացան) ասաց նա: Մենք հարցրինք նրան, «Բայց ինչո՞ւ էք ենթարկում նրանց այդ զարհուրելի չարչարանքներին, ինչո՞ւ նրանց չէք սպանում իրենց գիւղերում»: Նա պատասխանեց. «Այդպէս աւելի լաւ է. նրանք պէտք է թշուա լինեն. և յետոյ՝ ինչպէ՞ս կարելի է ֆիալ այդ բոլոր զիալներին կողքին: Նրանք զարշահոտութիւն են սփռում»:

«...Առաւօտեան մեր մարդիկը պատմեցին մեզ, թէ սպանել են տասն հայերի (մենք գիշերը լսել էինք հրացանաձգութեան ձայներ), և որ թիւրք քաղաքացի ընակիչներ են ուղարկւում հետապնդելու (հայերին), Արդարեւ մենք նրանց տեսանք ձիերի վրայ, հըրացանն ուսերին, ճանապարհի եզրին, երկու զինւած մարդիկ ծառի առկ դբաղւած էին մի սպանւածի ըզգեստները բաժանելով: Մի տեղ տեսանք արեան ճապաղիք. զիալները հեռացրել էին այդտեղից: Դրանք ճանապարհին աշխատող 250 բանւորներն են եղել, որոնց մասին պատմել էր մեր ժանդարմը: Մի անգամ մենք պատահեցինք բազմաթիւ այդպիսի բանւորների, որոնք մինչև այդ հանգիստ կատարել էին իրենց գործը: Նրանց բաժանել էին երեք խմբի, մահմեդականներ, յոյներ և հայեր. այս վերջինների մօտ մի քանի սպաներ կային. նրանց ամենքին ջարդել էին:

«Սերաստիա համեւելուց երկու օր առաջ միևնոյն տեսարանին հանդիպեցինք: Մի ուրիշ վայրում էլ, երբ 10 ժանդարմներ կրակում էին, թիւրք բանւորները

զոհերին վերջացնում էին դանակներով ու քարերով...»

Այդպիսի սոսկումներ ժասին կարգալով, կարծում էք, թէ իսկապէս երազում էք: Ես յիշեցի երկու զերմանահի հիւանդապահների վկայութիւնը. նազ սարսաղեցիկ չեն և չէղոք հիւպատոսների տեղեկագրերը:

Տրապիզոնի ամերիկեան հիւպատոսն ի միջի այլոց տալիս է հետևեալ տեղեկութիւնները.

Նախ հիւանդանոցում թողեցին հիւանդներին, ինչպէս նաև հայ կաթողիկէներին: Յետոյ նրանք էլ արտաքսւեցին:

«Բազմաթիւ երեւելիներ, (որոնց միջև նաև մի ռուսահպատակ՝ Վարդան անուէնով), մօտ 600 հոգի, բեռեցեցին փոխադրանաւերի վրայ Սամսոն տանելու համար: Մի քանի ժամ անց, նաւերը վերադարձան դատարկւած վիճակում: Ծովի բացերում ուրիշ նաւեր ժանդարմներով սպասում էին նրանց: Ամենքին ըսպանել և ծովն էին թափել: Վարդանը գլխից վիրաւորւելով, կարողացել էր լող տալ մինչև ափը. նա պահեց յունական հիւանդանոցում, պատմեց ամեն բան և մեռաւ:

Տոցում, Տրապիզոնի մօտ. հայ երեւելի Պօղոս Մարիմեանին իր երկու որդիների հետ միասին կապեցին ու ժանդարմները նրանց միաժամանակ զընդակահարեցին այդ դրութեան մէջ: Արտէսի կինն ու աղջիկները բռնաբարւեցին թիւրք սպաներից, որոնք յետոյ ժանդարմներին փոխանցեցին նրանց: Երեխաներին սպանում էին՝ նրանց գլուխները ջարդելով ժայռերի վրայ: Տղամարդիկ սպանուեցին ամբողջովին. նը

րանց միջև նաև ֆրանս, հիւպատոսի հայ թարգմանը:

Այս սարսափելի պատկերը կը լրացնեմ մի հայուն տարագրութեան նկարագրութեամբ՝ հրատարակւած Նիւ-Եօրկի հայկ. կոմիտէի 1915 թւի տեղեկագրերում:

«Հայ ազգաբնակչութիւնը տեղահանուեց երեք խումբով. ես առաջինումն էի: Իմ ամուսինը մեռաւ ութ տարի առաջ՝ ինձ, իմ 8 տարեկան աղջկան և իմ մօրը թողնելով բաւական մեծ կալածանք, որոնցով մենք հանգիստ ապրում էինք: Զօրահաւաքի սկզբից ի վեր հրամանատար X-ը մնում էր մեր տանը՝ առանց ոչինչ վճարելու: Նա ոչինչ չստաց, որ հեռանամ, բայց հասկացայ, որ ինձ էլ է սպասում իմ ազգակիցների ճակատագիրը: Վերցրի երեք ձի՝ պաշարով բեռնած: Աղջիկս իր մօտ ունէր 5—6 թրքական ոսկի. ես վերցրել էի 20 ոսկի և 4 հատ ադամանդեայ մատանի: Ինչ որ ունէինք, թողել էինք տանը: Մեր խումբը ճանապարհ ընկաւ յունիսի մէկին, 15 ժանդարմների ուղեկցութեամբ: Խումբը բաղկացած էր 500 հոգուց: Հազիւ երկու ժամ քայլել էինք, երբ պաշարեցինք թիւրք գիւղացիներից և հրացաններով, դաշոյններով ու ատրճանակներով դինւած աւաղակախմբերից, որոնք թալանեցին մեր ամբողջ ունեցածը: Ժանդարմները խլեցին իմ երեք ձիերն ու ծախեցին թիւրքերին՝ գլուպանելով գրամը: Նրանք վերցրին իմ աղջկայ մօտ գտնւած դրամները, նոյնպէս մեր ամբողջ պաշարը: Դրանից յետոյ նրանք մի առ մի ջոկեցին տղամարդկանց և 6—7 օրւայ ընթացքում բոլոր արուները, մինչև 15 տարեկան հասակը, սպանեցին: Իմ կողքին ըսպանեցին երկու քահանաների, որոնցից մէկը 90 տարե-

կան էր: Աւաղակներն ընտրեցին բոլոր գեղանի կանանց և տարան իրենց ձիերի վրայ. շատ մեծ թւով կիներ և օրիորդներ այս կերպով տարւեցան լեռները. նրանց միջև կար և իմ քոյրը, որի մի տարեկան աղջնակին նրանք նետեցին ճանապարհի վրայ: Մի թիւրք խլեց իմ քրոջը և տարաւ, բայց հերձ չգիտեմ. իմ հայրը քալեց, ինչքան կարողացաւ և վերջ ի վերջոյ մահամերձ ընկաւ ճանապարհին: Մենք ճանապարհի երկայնքով հանդիպեցինք նախորդ խմբերից շատ մարդկանց, որոնք ընկճւել էին սպառումից. ըսպանւածների միջև բաւական մեծ թւով կիներ կային՝ իրենց ամուսինների և գաւալների կողքին ընկած: Տեսանք նաև ծերունիներ և շատ փոքր երեխաներ ողորմելի դրութեան մէջ, առանց կարողանալու նոյն իսկ մի ձի առնակել: Դիշերները մեզ թոյլ չէին տալիս գիւղերում ընել. հարկ էր լինում պառկել անպատասխար: Դիշերային մթութեան մէջ աննկարագրելի ոճիրներ էին գործւում ժանդարմների և գիւղերի աւաղակների կողմից: Շատերը մեռան քաղցից և կաթւածահարութիւնից: Քանիները լքեցին ճանապարհի վրայ՝ ուժասպառումից չկարենալով շարունակել:

Մի առաւօտ տեսանք 50—60 սայլեր, սրոնց մէջ կային մօտ 30 թրքուհիներ, որոնց ամուսինները ըսպանւած էին պատերազմում: Նրանք գնում էին Պոլիս: Այս կիներից մէկը նշանացի ասաց մի ժանդարմի, որ սպանի իր մատնանշած հային: Ժանդարմը նրան հասցրեց, թէ ինքը չի ցանկանում անձամբ ըսպանել: «Ինչո՞ւ չէ» պատասխանեց նա, և ատրճանակը հանելով իր հագուստի տակից՝ կրակեց և սպանեց հային: Բոլոր այս կիներն իրենց մօտ ունէին 5

կամ 6 աղջնակներ, 10 տարեկան և աւելի փոքրահասակ: Թիւրքերն երբէք չէին ուզում փոքրիկ մանչեր վերցնել. նրանց սպանում էին, ինչ տարիքի էլ որ լինէին:

«Ամենից աներեակայելի արհաւիրքները վերապահած էին մեղ՝ Եփրատի ափերում և Երզնկայի դաշտում: Կիւների, մատաղ օրիորդների և փոքր երեխաների այլանդակած դիակները սարսափեցնում էին մեզ ամենքիս: Աւազակներն ամեն տեսակ զարհուրելի մահով սպանում էին մեզ հետ եղող կիւներին և աղջիկներին, որոնց աղիողորմ ձայները երկինք էին բարձրանում: Նրանք Եփրատի մէջ ձգեցին 14 տարեկանից պակաս մնացած բոլոր երեխաներին: Լողալ փորձողները սպանւում էին հրացանի հարւածով:

«Նօթիսօրեայ ճամբորդութիւնից յետոյ հասանք . . . Այնտեղ ոչ մի հայ չէր մնում այլևս: Թիւրք կիւները ինձ ու իմ աղջկան տարան բաղնիք, և մեզ ցոյց տւին բաւականաչափ հայուհիներ, որոնք կրօնափոխ էին եղել:

«Այս կէտի և . . . -ի միջև դաշտերն ու բարձունքը ծածկւած էին ուռած և սևացած դիակներով, որոնք ապականում էին օդը: Ծանապարհին պատահեցինք վից կանանց, թիւրքական տարազով և ձեռներին երեխաներ բռնած. բայց երբ ժանդարմները վերցրին նրանց քօղը, տեսան, որ ծպտւած տղամարդիկ են, և նրանց ըս պանեցին տեղն ու տեղը: 30 օրւայ ճանապարհորդութիւնից յետոյ հասանք . . . »

Պ. Արնոլդ Զ. Տոյնբի, իր փոքր հատորում (Լոնդոն, Նիւ-Յօրկ, Տորոնթօ, 1915 թ.) *Armenian Atrocities*, հայ ազգի անգլիացի մեծ բարեկամ լորդ Բրայսի

մի հոյակապ յառաջաբանով, յուսահատական ճշտութեամբ հաղարատոր մանրամասնութիւններ է տալիս թիւրքերի գործած անարդ արարքի մասին: Ահա մի օրինակ (էջ 50). «Կանանց ու երեխաների կարաւաններ են ցուցադրւած ամեն քաղաքում կամ գիւղում, կառավարական շէնքի առաջ, որտեղից նրանք անցնում են, որպէս զի մահմեդականները կարողանան ընտրութիւն կատարել»:

Այսօր թիւրքիայում մնում են միայն չէզոք պետութիւններին պատկանող եւրոպացիներ— շվեյցարացիներ, հոլանդացիներ, սպանիացիներ և սկանդինաւներ, որոնք շատ քիչ են, աւստրիացիներ և գերմանացիներ և մի քանի հիւսիսային ամերիկացիներ, բողոքական միսիօնարներ՝ այս ու այն կողմ ցրւած Օսմ. Կայսրութեան մէջ, բայց որոնց թիւրքերը հետու են պահում այն վայրերից, ուր տեղի են ունենում այն դէպքերը, որոնց կարեւոր են համարում կատարել առանց վկաների:

Թիւրքիայում բնակող գերմանացիների միջև կան քաղաքացիներ, որոնք լաւ իրազեկ լինելով դէպքերին ու հասարակական կարծիքին, լուծւ են միայն Գերմանիայի շահերն ի նկատի ունենալով, այն վայրագութիւնների մասին, որոնց անձնատուր են լինում թիւրք-գերման իշխանութիւնները: Ամեն օր գործւող սարսափելի ոճիրներում նրանք մեծ վտանգ են տեսնում գերմանական հմայքի համար և զրանց մասին դառնօրէն գանգատւում են Բերլինի արտաքին գործերի նախարարութեան: Հալէպի գերմանական դպրոցի ուսուցիչները պաշտօնական նամակ են գրել, որն արտատպել է *Basler Nachrichten* *). մի նամակ, որ իս-

*) Որից եւ քաղաքներ եւ մեղ *L'Eclair de Montpellier* 1916 թ. օգոստոս 28-ի համարում:

կապէս արժանի է յիշատակութեան, թէկուզ միայն գլխաւոր հատւածները:

«Մեզ թուում է, թէ մեր պարտականութիւնն է, ասում են նրանք, արտաքին գործերի նախարարութեան ուշադրութիւնը հրաւիրել այն իրողութեան վերայ, որ մեր դպրոցական գործը այսուհետեւ կը զրկւի բարոյական հիմքից և տեղացիների աչքում կը կորցնի ամեն հեղինակութիւն... Սոսկումի այն տեսարանների հանդէպ, որոնք ամեն օր տեղի են ունենում մեր աչքերի առաջ, մեր դպրոցի կողքին, մեր դաստիարակչական գործը դառնում է մի մարտահրաւէր՝ ուղղւած մարդկութեան հասցէին: Մենք ինչպէս կարող ենք մեր հայ աշակերտներին կարգացնել տալ «Ծօթ թղուկներին» պատմութիւնները, մենք ինչպէս կարող ենք նրանց հոլովել և խոնարհել սովորեցնել, երբ մեր դպրոցի հարկան բակերում մահը հնձում է սովից մեռնող իրենց ազգակիցներին, երբ դեռաւոր աղջիկներ, կիներ, երեխաներ, գրեթէ մերկ, մի մասը հողի վրայ պառկած, ուրիշներ մահամերձների և արդէն պատրաստւած դագաղների միջև իրենց վերջին շունչն են տալիս:

Եւ իրենց գնահատութեան աւելի ուժգնութիւն տալու համար, ուսուցիչները մտնում են յարսուղեցիկ մանրամասների մէջ:

«Մեծ-Հայքի երկու-երեք հազար գիւղացիներ, ասում են նրանք, այստեղ բերեցին կատարեալ առողջ վիճակում. այժմ նրանցից մնում են միայն 40—50 կմախքներ: Ամենապեղեցիկները զոհերն են իրենց պահապանների վաւաշոտութեան, տգեղներն ընկնում են հարւածների տակ, քաղցից, ծարաւից, որովհետեւ՝

պառկած ջրերի ափին, նրանց չէ թոյլատրւում յագեցնել ծարաւը: Եւրոպացիներին արգելւում է հաց բաժանել սովեալներին. Հալէպից ամեն օր 100-ից աւելի դիակներ են գուրս հանում... 40—50 կմախքացած ուրւականներ բակում դիզւում են իրար վրայ, մեր դպրոցի դէմ առ դէմ: Դրանք յիմարացած կիներ են, որոնք կորցրել են ուտելու ընդունակութիւնը: Երբ հաց են երկարում նրանց, անտարբերութեամբ դէն են շալըրտում: Նրանք հեծեծում են սպասելով մահւան...»

Աշխարհում չկայ այնպիսի լեզու, որ այնքան ճոխ, այնքան գունագեղ լինի, որ կարողանայ նկարագրել նմանօրինակ սարսափները, պատկերացնելու համար այս անմեղ մարտիրոսների կրած ֆիզիքական ու բարոյական տանջանքները, քանի երկինքը չի ուղարկւած յաւիտենական քունը: Սոսկալի կոտորածներից յուսահատ ու անտէրունջ մնացած, բոլոր իւրայինները, սիրելիների մահւան ականատես, նրանք այդ գաղթային հաւաքատեղիներում են թարկւում են ամեն տեսակ ամօթանքի, ուժասպառման, «թիւրք բարձրատիճան պաշտօնեաներին», գերմանացի սպանների և զապթիէի աչքի առջև, որ յենւած իր հրացանին՝ ծիծաղում է քրիստոնեայ մահամերձի հոգեվարքի շղաճը գութիւնների, հոնդիւնի վրայ:

Այսօր արդէն միայն հայերը չեն, որ ենթարկւում են այդ անլուր տանջանքներին. այլ Թիւրքիայի բոլոր ոչ-մահմեդականները—յոյները, սիւրբացիները, հրէաներն որս են դարձել թաթար դահիճներին: Ամենուրեք տեղահանում են, սպանում, ամեն տեղ ամօթանքի և սովի հաւաքավայրեր են կազմւում:

Ոչ մի բնականաւորութիւն չի կարող աւելացնել յիշ-

ւած էջերի արհաւիրքը, և այդ էջերը միայն մի թոյլ պատկերացումն են՝ այժմ արդէն պաշտօնական վաւերացութեամբ ծանօթացւած խժդժութիւնների:

Թիւրքերը հայկական նահանգներում, Կիլիկիայում, Բոյոթ քաղաքներում, ուր ապրում էին քրիստոնեայ գաղութներ, ամեն տեղ գործեցին միևնոյն սխտեմատիկ անգթութեամբ, ամեն տեղ Ստամբուլից եկած կարգախօսը առաջացրեց ամենասոսկալի հեկատոմբեր:

* *

Հայկական աշխարհում իսկ շատ դոյզն չափով իրազեկ են այդ սոսկալի հալածանքի պատճառած աղէտների ծաւալին: Ինչ ոչ մի լուրջ քննադատութիւն կարելի չէ եղած անել ընկած դժբախտների, փախուստով ազատաձնների թւի մասին, նոյնպէս և այն թրջւառների, որոնք բռնի ուժով և մահմեդականների վայրագութիւնից զերծ մնալու համար ժամանակաւորապէս ընդունել են մահմեդական կրօնը:

1882 թւականին, հայոց պատրիարքարանի վիճակագրութեան համաձայն, Թիւրքիայում ապրող հայերի թիւն էր 2,660,000. որոնցից 1,630,000 հայկական վեց նահանգներում, և 1,030,000 Թիւրքիայի զանազան քաղաքներում (Պոլիս, Իզմիր, Տրապիզոն, Երուսաղէմ, Կայն): 1912 թւականին, այսինքն 1894—1896 թւականների համեմատան կոտորածներից յետոյ, պատրիարքարանի նոր վիճակագրութիւնից երևում է, որ միայն 1,018,000 հայեր կան վեց նահանգներում: Ուրեմն այս երեսուն տարւայ ընթացքում 612,000 կորուստ է եղել՝ մահից, գաղթականութիւնից և կը-

րօնափոխութիւնից: Գալով ցիր ու ցած վիճակում ապրող 1,036,000 հազար հայերին, նրանք կորցրել են միևնոյն պատճառով առաւանելն միայն 50,000 մարդ: Ուստի 1914 թւականին Թիւրքիայում մնում էին մօտ երկու միլիոն հայեր:

Բայց այդ 6—700,000 հայերը կորած չեն եղել սպիտակ համար, որովհետև արտասահմանի գաղութները մեծապէս աճել են այնպիսի ընտանիքներով, որոնք միայն յարմար բռնի, այսինքն բարենորոգումների իրականացման էին սպասում հայրենիք վերադառնալու համար:

Այս երկու միլիոն տաճկահայերի վրայ պէտք է աւելացնել և ուսասիական 1,750,000 հայերին, որոնք ապրում են Կովկասում, Պարսկաստանում ապրող 100—150,000 և աշխարհի զանազան երկրների գաղութներում գտնուող աւելի քան 300,000 հայերին, որով հայ ազգի ամբողջութիւնը կը հասնի չորս միլիոնի՝ երիտասարդ-Թիւրքերի հրամայած կոտորածների նախօրեակին:

Արդ, այս չորս միլիոն հայերի կէսից աւելին (2,250,900) հալածանքներից զերծ են մնացել. 300,000 հոգի ապաստանած են ուսական և պարսկական հողերը, շատ հազարաւորներ կարողացան անցնել Եգիպտոս ու Եւրոպա, ուրիշներ (400 հոգի) աղատեցին Ֆրանսիացի նաւաստիների ձեռքով, այնպէս որ մահմեդականների վայրագութիւնը գործադրեց ապահովաբար թւով 1,500,000-ից ոչ աւելի ազգաբնակչութեան վրայ:

Այսօր ինչ է մնում այդ 1,500,000 տաճկահայերից: Մի քանիսը մեռածների թիւը հասցնում են

մի միլիոնի, ուրիշները՝ երկու միլիոնի: Այս վերջին գնահատումն ամենամանրիմն է, մինչ առաջինը չափազանցած է միայն. որովհետեւ կոտորածներն ու տեղահանումները գլխավորապէս կատարել են այն վիւլ-յէթներում, ուր հայերը մեծամասնութիւն էին կազմում, այսինքն Մեծ Հայքում: Պոլսում, Իզմիրում, ուր ապրում են 180,000 հայեր, տեղահանւեց միայն փոքրամասնութիւնը: Նոյն բանը պատահեց նաև Թիւրքիայի ոչ-հայկական շատ քաղաքներում:

Սակայն Տրապիզոնում՝ Թիւրքերը, հաւանաբար մղւելով այն մտքից, որ քաղաքն ընկնելու է ռուսների տիրապետութեան տակ, սոսկալի կատաղութիւն են ցոյց տւել:

Պատերազմից առաջ, Կոնստնտնիքի երբեմնի այս մայրաքաղաքում ու շրջականերում հաշւում էր 18,343 հայ բնակչութիւն, որ բաժանւած էր քաղաքում և նրա 45 գիւղերում: Ռուս զօրամասերը Տրապիզոն մտնելով գտան միայն 459 հոգի, որոնցից 92 քաղաքում և 367 շրջականերում: Եթէ հաշւենք, որ 5000 հայեր կոտորւած են տեղն ու տեղը, և մօտաւոր գնահատութեամբ տեղահանւածներից 60 % մեռած լինի, կը տեսնենք, որ պակասող 17,884 բնակիչներից մօտ 12,500-ը կոտորւած կամ ճանապարհին հիւանդութիւնից և ուժասպառումից մեռած են, և որ միայն 5000 հոգի կարող էր հասնել Միջագետքի տարագիրների հաւաքատեղիները: Բայց 17,884 անհետացածների մէջ պիտի մտնեն և փախածներին և իսլամի կրօնն ընդունածներին, այնպէս որ այս գաւառի ամբողջ ազգաբնակչութեան 50 տոկոսը մեռած համարելը չափազանցութիւն չի լինիլ:

Պէտք է նկատել, որ բոլոր երեսփոխանացիքան խիստ միջոցների դիմած չեն լինիլ Թիւրքերը կայսրութեան բոլոր վայրերում, քանի որ Հալէպի ամերիկեան հիւպատոսը 1916 թւականի մարտին հեռագրում էր իր կառավարութեան հետեւալը.

«Այժմ Դամասկոսի, Դէր-էլ-Զօրի և Հալէպի հաւանգներում կան մօտ 500,000 տեղահանւած հայեր, 300,000 հայեր էլ ուրիշ գաւառներում: Ողջ մնացածները մեծ մասամբ աշխատանքի անընդունակ կիներ և երեխաներ են, և Թիւրք իշխանութիւններն արգելում են աշխատել ուղողներին: Միևնոյն ժամանակ նրանց չի արտօնւում հաստատւել այն վայրերում, ուր բերւած են նրանք, հետևաբար ապրում են, աւելի ճիշտ իրենց գոյութիւնը քարշ են տալիս ողորմութեամբ:»

Ուստի պակասողների (մեռածներ, պահւածներ ու կրօնափոխ եղածներ) թիւը հասնում է մօտ 600,000 — 700,000-ի:

Ակներև է, որ Թիւրքիայի հայ ազգաբնակչութիւնը, չնայած իր կրած անլուր տառապանքներին, չնայած ահաւոր կոտորածներին, որոնց նա զոհ դարձաւ, բնաջնջւած չէ, և բնաջնջելուց շատ հեռու է: Այն օրը, երբ դաշնակիցներն իրենց կամքը թելադրեն բարբարոսներին, հայերն ամեն կողմից կը վազեն մի օջախ*) փնտնելու իրենց մերձաւորներին, բարեկամ-

*) Ամեն օր Թիւրքահայաստանի գրաււած գաւառներից ստացւած տեղեկութիւնների համաձայն, կոտորածներից ազատւածների թիւը աւելի շատ է, քան կարծւում է: Ամեն կողմից գաւառն զալիս՝ անտառներում և լեռներում, կամ բարեկամ քրդերի մօտ պահւած փախստականներ (կան հայերէն բարեկամ քրդից եղբիւր ևս): Փախչում են և մահմեդականների մօտ իրր բարեկամ-

ներին, և հաշտութեան պայմանագիրն ստորագրելուց մի քանի ամիս յետոյ վերականգնած հայ ազգը կող-բայ իր մեռելներին և կսկսի աշխատել՝ վերաշինելու համար իր ազէտները: Չէ որ մենք՝ ֆրանսիացիներս, անգլիացիները, բելգիացիները, ռուսները, իտալացի-ները, սերբերը նոյնպէս նորոգելու ենք պատերազմի առաջացրած աւերումները, ծաղկեցնելու ենք մեր միլ-իոնաւոր շիրիմները:

Կարելի է վստահաբար հաշուել, թէ հայ ազ-գը դեռ ունի երեք միլիոնից աւելի մարդ: Սպանւած-ները մեծ մասամբ տղամարդիկ ու մանչ երեխաներ են, որովհետեւ թիւրքերը մասնաւորապէս հետամուտ են եղել ոչնչացնելու արական սեռը՝ յուսալով այդ ներ պահածները, և այդ ազատւածների թիւը օրից օր շատա-նում է, նրանք մեծ մասամբ կիներ, երեխաներ, տարիքոտ մար-դիկ և փոքր թւով երիտասարդներ են: Էրզրումում երկու հազար հայեր այս կերպով արդէն դուրս են եկել իրենց թաքստոցներից Մշոյ մէջ՝ 4000, և Մշոյ դաշտում 6—7000, և դաշտն արդէն ցանաւած է առաջիկայ հունձքի համար: Վանում և հարեան գիւղե-րում հաշուում են 30,000 հայեր, մինչ Բաղէշում կոտորածն եղել է զարհուրելի: Վանի կուսակալը յետ մղւելով հայերի կողմից՝ վրէժ է լուծել բնաջնջել տալով Բաղէշի ամբողջ քրիստոնեայ ազգաբնակութիւնը, առանց ոչ ոքի տեղահանելու: Ասում են, որ հայերի բարեկամ Դերսիմի քիւրդերը յարձակել են Էրզրու-մից տեղահանւածներին ընկերացող թիւրքերի վրայ և ազատել են 10000 հոգի, որոնք դեռ գտնւում են Դերսիմի քիւրդերի մօտ: Էրզրումի առաջնորդ Մմբատ եպիսկոպոս այդ կարաւանի մէջն է եղել: Բայց նոյնիսկ ռուսների գրաւած երկրամասերում քիւր-դերն ու թիւրքերը դեռ իբր ստրուկ պահում են բազմաթիւ կիներ ու երեխաներ, որոնք հետզհետեւ կը գտնեն իրենց ազա-տութիւնը, երբ ռուսական իշխանութիւնը այդ մասին անհրա-ժեշտ որոնումներն ու հարցութեանն անէ—ինչ որ չի կարելի ուշացնել:

Կերպով անձեռնել ցեղը, բայց կոտորածները վրիպեցին իրենց նպատակից, որովհետեւ նրանց ճիգերը կարող էին փորձել միայն ազգի մօտ միտերորդի վրայ:

Ռուսաստանի, Պարսկաստանի, Եւրոպայի և Ա-մերիկայի երիտասարդները կըզան լրացնելու թիւը-քահայաստանի հայ ազգաբնակչութեան մէջ առաջա-ցած բացը, և մի քանի տարի դանդաղելուց յետոյ՝ սերնդաբերութիւնը կըսկսի նոյնպիսի թափով, ինչ-պէս անցեալներում, բայց միանգամայն ազատւած այն բազմաթիւ արգելքներից, որոնք խանգարում էին նրանց բարգաւաճման: Հայ ընտանիքները միշտ էլ նշանակալի են եղել երեխաների մեծ թւով, և եթէ այդ ժողովուրդն ազատօրէն զարգանար, այսօր չորս միլիոն չէր լինիլ նրա թիւը, այլ 12 կամ 15 միլիոն, շատ աւելի, քան ամբողջ Օսմ. կայսրութեան մէջ ապ-րող թիւրքերի թիւը:

Ինչպէս բոլոր ճնշւած ժողովուրդների, նոյնպէս և հայերի իղէալն է իրենց հայրենիքի վերականգ-նումը. ինչպէս հարաւային սլաւոնները, նրանք էլ ամբողջ սրտով կը ցանկային միացած տեսնել այն ամբողջ հողամասը, ուր խօսւում է իրենց լեզուն. ուստի տեսականապէս տրամաբանական կը լինէր, որ արևելքի այս քրիստոնեաները տենչային կազմել մի ինքնավար (աւտոնոմ) պետութիւն, որի սահմանների մէջ մտնէր այն ամբողջ երկիրը, ուր դարերից ի վեր բնակւել է իրենց ազգը: Նրանք երբէք յաւակնութիւն չունեն ցանկանալու, որ իրենց սահմանները լինեն Տիգրան Մեծի թագաւորութեան սահմանները: Հայաս-

տանն այն ժամանակ ունէր 25 միլիոն բնակիչ, մինչ այսօր, այնքան կոտորածների ենթարկւելուց յետոյ նա առաւուսին 4 միլիոն է կազմում, որից մօտաւորապէս կէսը բնակւում է քաղաքականապէս Ռուսաստանի մասը կազմող հողամասերում:

Անտարակոյս՝ տեսական իդէալը այն կը լինէր, որ միացւէին և մի պետութիւն կազմէին Ռուսաստանի հայաբնակ գաւառներն ու Էրզրումի, Վանի, Բաղէշի Տիգրանակերտի, Խարբերդի, Սեբաստիայի նահանգներն ու Կիլիկիան, և հայ ազգի հողամասը տարածւէր Փոքր-Կովկասից մինչև Ալեքսանդրետի ծովածոցը, հայկական Տաւրոսից մինչև Ճորոխի գետահովիտը, հիւսիսային Քիւրդիստանի լեռներից մինչև Եփրատի օձիւները: Բայց ոչ մի հայ չէ երազում այդպիսի իդէալի մասին, որովհետև հիւսիսի հզօր հարեանը չէ կարող հրաժարւել Անդրկովկասում իր զինուորական ու տնտեսական շահերից: Ուստի մերժելով մի մեծ միութիւն կազմելու ցնորքը՝ հայերն իրենց յոյսերը կապում են 1913 թւականին նոյնինքն Ռուսաստանի կողմից պետութիւնների շարքում վեհանձն առաջարկներին:

Հայկական հարցն այս վերջին տարիներում ամբողջ Եւրոպայի աչքում բովանդակում էր միայն Թըրքահայաստանի վեց վիլայէթներն ու Կիլիկիան, Ռուբինեանների և Լուսինեանների նախկին թագաւորութիւնը, որ բարենորոգման բոլոր ծրագիրներում շարունակ յիշւած է մի յատուկ յօդածով: Այդ վեց նահանգներում և Կիլիկիայում է, որ քսան տարուց ի վեր տեղի է ունեցել այն ահաւոր ողբերգութիւնը, որի սարսափը ստեղծւում է պատճառի ամբողջ քաղա-

քակիրթ աշխարհին. այդ երկիրն է, որ սոսկւած է հայկական արիւնով. դա է, որ պահանջում է հայ ազգն իբր իր սեփականութիւնը, հազարաւոր տարիներից ի վեր իբր իր նախնիքների հայրենիքը, որի համար նա շատ թանգ է վճարել:

Ռուսաստանի առաջարկները, որոնք համակրութեամբ ընդունւեցին Ֆրանսիայի և Անգլիայի կողմից, և որոնց Բ. Դոուըր այլանդակելուց յետոյ վերջիվերջոյ ընդունեց, հակառակ Գերմանիայի ցոյց տւած ընդդիմութեան, արդէն բովանդակում էր վարչական իսկական ինքնավարութեան (աւտոնոմիայի) ուրւագիծը, թէպէտ «վարչական» բառը չարտասանւեց: Առաջարկների մէջ յիշւած էր, որ հայկական վեց նահանգները միանալով կը կազմեն մի մեծ շրջան, օժտւած աւանձին բեժիմով, և կը կառավարւեն մի հւրոպացի ընդհանուր-նահանգապետով, որ կունենայ կատարեալ լիազօրութիւններ՝ Սուլթանի գերակայութեան և պետութիւնների կոնսորցիի տակ *): Միայն Թիւրքիայի չարակամութիւնն ու անվստահութիւնն էին պատճառը, որ այդ բարենորոգումները չիրականացան: Բայց այդ ժամանակից ի վեր դէպքերն ընթացան խոշոր քայլերով. այլևս հարց չէ կարող լինել հայերին թիւրքերի լուծի տակ թողնելու մասին. Եւրոպան երէ՛ք չէ կարող հաւանութիւն յայտնել այդ բանին: Հայ ժողովուրդը ինքն էլ յոյս ունի, որ իրեն կը տրւի ազատութեան աւելի մեծ մի բաժին, որ հայ-

*) Այս մասին տեսել ամենակրթւած ու զարգացած հայերից մէկի՝ Ս. Զօպանեանի տւած լուսաբանութիւնները 1915 թւականի մայիսի 25-ին կարդացած «Հայերը թրքական լուծի տակ» բանախօսութեան մէջ: Ծ. Հ.

Հստակացրին, որոնք վարպետ էին մարդկանց կառավարելու գիտութեան մէջ, լայն ազատութիւն էին տալիս այն ժողովուրդներին, որոնց ապստամբութեան մասին չէին կասկածում. ասիական Յունաստանի «հստակացկան գաղութները» դրամ էին կտրում իրենց տեղական աստեածների խորհրդանշանով և կառավարում էին իրենք իրենց: Իսկ իր վեհանձնութեամբը ճարպիկ դարձած իմպերիալիզմի մի ձևն էր:

Ամբողջ պատմութիւնը ցոյց է տալիս, որ եւրոպայի քաղաքական ապագան դաշնակցելու, ազգային տենչանքները յարգելու մէջն է, և ոչ թէ միջազգայնութեան (ինտերնացիոնալիզմ) մէջ, որի միակ արդիւնքը կը լինէր ընդհանուր մակարդակի ցածրանալը: Միայն փոքր ժողովուրդների վերականգնումի առաջացրած մրցակցութիւնը կարող է նպաստաւոր լինել ընդհանուրի զարգացման:

Ինչպիսի՞ն յառաջդիմութիւններ են եղել հարաւային Ամերիկայում այն օրից սկսած, երբ այդ ցամաքամասը բաժանուեց անկախ նահանգների. դաշնակցական Գերմանիայում հարստութեան խնչպիսի աճում տեղի ունեցաւ 45 տարուց ի վեր: Բայց և խնչ գեթախտութիւն, որ այդ կայսրութիւնը կազմուեց և զարգացաւ այն ժիակ նպատակով, որ ամբողջ աշխարհին հարկադրէ իր կողմից տիրապետութիւնը:

Արդ՝ արդեօք Ռուսաստանն իրեն կը միացնէ ամբողջ Հայաստանը, թէ՛ իր սահմանը կը գծէ Առաջաւոր Ասիայի երկրների միջով: Այս վերջին պարագայում՝ Հայաստանի ամբողջ արեւմտեան մասը նրա սահմաններից դուս կը մնայ:

Ես աւելի բան չեմ ասիլ Մեծ Հայքի վերականգ-

նման մասին. Ռուսաստանի խոհականութիւնն ու հաւասարակշռութիւնն երաշխաւոր են՝ նրանում ապրող ժողովուրդների համար: Ես աւելի կանգ կառնեմ Կիլիկիայի, «Սիսուանի» վրայ, որովհետեւ այդ երկրի ճակատագիրը գտնուում է բոլոր դաշնակիցների ձեռքում և միայն նրանցից է, որ կախում ունի հատուցանել այս աշխարհում երբեք տեսնուած ամենամեծ անարդարութիւններից մէկը:

Կիլիկիացիները կամ Նոր-Հայաստանցիները (իբր հակադրութիւն Հին-Հայաստանցիներին, այսինքն՝ Մեծ Հայքի բնակիչներին), եւրոպացիների բարեկամն ու դաշնակիցներն են եղել խաչակրութիւնների դժնդակ ժամերում. նրանք մեղ դարբնով հաւատարիմ են մընացել և իրենց արիւնքով են վճարել դէպի քաղաքակրթութիւնն իրենց ունեցած անձնւիրութեան համար: Ամբողջ եւրոպան, և մանաւանդ Ֆրանսիան, պարտական է վերականգնել նրանց հայրենիքը: Զէ՛ որ մօտ հարիւր տարի առաջ ստրկութիւնից ազատեցինք յոյներին, որոնք ոչինչ չէին արել մեր համակրանքին արժանանալու համար. չէ՛ որ մենք հազար զոհողութիւն ենք արել ուրիշ ազգերին, որոնք իրենց արիւնը չեն թափել մեզ համար: Կիլիկիայի հայերին մենք պարտական ենք մօտ վեց դարուց ի վեր, ուստի և այդ պարտքը աւելի նւիրական է:

Կարող են աւարկել, որ մի քանի ժողովուրդներ, ինչպէս Բուլղարիան ու Յունաստանը, որոնք ազատւած են մեր արեան գնով, վտանգի օրում լքեցին իրենց ազատարարների դատը, ուրեմն չպէտք է վստահել ազգերի երախտագիտութեանը. բայց այդ օրինակին ես կը պատասխանեմ հակադրելով Բելգիայի

հետևած գեղեցիկ ընթացքը, Սերբիայի ու Չերնոգորիայի արևելքից, Ռումանիայի վճռական ու քաջաբի ընթացքը, չնայած, որ նրա վեհապետը Հոհենցոլեբն ընտանիքից է։ Շահերի կապակցութեամբ է, որ ժողովուրդներին հնարաւորութիւն կը տրւի ազատ ընթացք տալ իրենց զգացումներին։ Նոր ազգերի նկատմամբ մենք պէտք է ասենք, մենք պէտք է միացնենք նրանց տենչանքները մերինների հետ։

Հայերն իբր իրենց ներկայացուցիչը, իրենց յոյսերն իրականացնելու համար ընտրել են ազգի ամենամեծ մարդկանցից մէկին, Պօղոս փաշա Նուպարին, եգիպտոսի մեծ վէզիր Նուպար փաշայի որդուն։ Պօղոս փաշայի վրայ է, որ կաթողիկոսը, հայերի ընտրած գերագոյն պետը, կենտրոնացրել է իր ամբողջ վստահութիւնն ու նրա շուրջն է, որ համախմբւած են ազգի բոլոր կենսունակ ոյժերը՝ բոլորանէլը օժանդակելով նրա ճայրենասիրական գործին։ Եւրոպական դիւանագիտական աշխարհում նրա վայելած արդարացի յարգանքը, նրան շրջապատող անկեղծ բարեկամութիւնները հնարաւորութիւն են տալիս յուսալու, որ նրա կոչերը լսելի կը դառնան հաշտութեան վեհաժողովի անդամների կողմից, և որ մարտիրոս ժողովրդի համար կը ծագի նոր արշալոյս։ Հայերի յայտնաբերած միութեան, համերաշխութեան, դիպչիլիների պատկերը, ամբողջ աշխարհում սփռւած նրանց ազգակիցների տենչանքների համամանութիւնը, նրանց պաղարիւնութիւնը, տանջանքների և ամենադաժան անձկութիւնների մէջ նրանց ցոյց տւած հպարտութիւնը ապացոյցն են մեծ խոհականութեան, համաշխարհային բաղաբականութեան խնդիրներում նրանց կատարեալ

ուղիմութեան և լաւ գրաւական են նրանց ազգի ապագայի համար։

Սովորաբար Փոքր-Հայք են անւանում Ռուբինեանների և Լուսինեան իշխանների նախկին թագաւորութիւնը։ Արդ, այդ յորջորջումը չէ կարող գործածել, որովհետև հին ժամանակներում կար մի Armenia minor (Փոքր-Հայք), եփրատի աջ ափում։ Նոյնպէս չի կարող պահպանւել Կիլիկիա անունը, որովհետև նա օտար է հայ ցեղին և շատ աւելի հին է, քան Ռուբինեան թագաւորութիւնը։ Arméno-Cilicie (Հայաստան-Կիլիկա) մի անորոշ յորջորջում է, որ թւում է թէ մի մերձաւորութիւն է հաստատում հնադարեան կիլիկեցիների և միջնադարեան հայերի միջև. վերջապէս Սիսուան անունն ուրիշ արժանիք չունի՝ բացի այն, որ մատնանշում է մի երկիր, որի մայրաքաղաքն է Սիսը։ Ուստի ես կառաջարկեմ բոլոր այդ յորջորջումները փոխարինել մի ուրիշ աւելի կատարեալ յորջորջումով և ասել՝ «Նոր Հայաստան»։

Այն երկիրը, ուր երբեմն իշխում էին Ռուբինեան և Լուսինեան իշխանները, տարածւում էր Փոքր Ասիայի հարաւային կողմը՝ այն գաւառներում, որին հնեւրդ տւել են Կիլիկիա անունը։

Նա բռնում էր Միջերկրականի ծովափը՝ Տէգէրէ-Հայից սկսած մինչև Ալեքսանդրիոսի շրջականները։ Երկրի խորքում նրա սահմանագիծը հետևում էր Տաւրոսին (Բուլղար դաղը, Ալա դաղը) մինչև Անտիտաւրոս (Բիմբոզա դաղը), յետոյ Ամանոսի վրայով դարձեալ իջնում էր գէպի ծովը։ Արևելքից նա հզերւած

էր եղեւիայի և հարաւից Անտիոքի իշխանութիւններով, երա զլիւսւոր քաքաքներն էին էրմէնէք՝ Ալիթար չալի (Galucadnus) վրայ, Սելեկիա Trachée-ի նախկին Sélevcie քաղաքը, Տարսուսը, Ալանան՝ Սիհունի վրայ, Սիւը՝ Ջիհունի վրայ, Ձէլթուն և Մարաշ՝ լեռներում. նաւահանգիստն էր Փայաս (Եւսմուրթալու) Ալեքսանդրեաի ծոցում:

Այդ երկրի մակերևոյթն է մօտ 35,000 քւ. լւմ. ունի մեծ լեռներ՝ Տաւրոսը, Անտիտաւրոսն ու Ամանոսը, ուր պատահում էք և 3000 մետրից աւելի բարձունքների: Ջրի երկու մեծ հոսանքներ, Սիհունն ու Ջիհունը ոռոգում են այդ երկրի մեծագոյն մասը և կազմում են երկու շատ պտղաբեր հովիտներ: Լեռներից իջնող ուրիշ գետակներ խիստ բազմաթիւ են:

Այս հողամասի երկրաբանական ուսումնասիրութիւնը դեռ կատարւած չլինելով՝ անկարելի է ասել, թէ լեռները կարեւոր հանքեր պարունակում են թէ ոչ: Բայց և այնպէս, բազմաթիւ նշաններից երեւում է, որ շատ հաւանականաբար հանքեր կան՝ առանց հանքային վառելանիւթ մատակարարելու:

Հուսինեանների երկրի տարածութիւնը կարող էր համեմատուել Եւրոպայի փոքր պետութիւնների հետ (Շվէյցարիայի, 41,000 քւ. լւմ. Բելգիայի՝ 29,400. Հոլանդիայի՝ 33000.): Երկիրն ունի հողագործական բոլոր աղբիւրները, խաղողն ու ձիթապտուղն այնտեղ առատօրէն են աճում: Հովիտներն հրաշալի վարելա հող են հանդիսանում, և Տաւրոսի անտառապատ շղթաները տալիս են և փարթամ խոտ խաշնարածութեան համար: Կիլիկիան շատ հրաշալի կլիմայ ունի. բնութիւնից նոյնքան նպաստաւորւած է, որքան Սիւրիան.

տրեի ճառագայթներն ընդունելու տեսակէտով աւելի լաւ գիրք ունի, քան փրենկեան երկրները և տարւայ բոլոր եղանակներին առատօրէն է ոռոգւում: Բայց այդ հարստութիւնները միայն սուերն են այն բանի, որ նրանք պէտք է լինէին, որովհետեւ մահմեդական ուժ- ժիմը դարերից ի վեր ճնշել է բնութեան այդ բարիքների վրայ, որովհետեւ թիւրքն ու իր այծերը եկել են աւերածութիւն սերմանելու այդ բարեբեր գաւառներում: Հայերի եռանդը, համբերութիւնը, աշխատասիրութիւնը կը կարողանան յուղթաշարել ժամանակների և բարբարոսների հասցրած քլաւտերը, և դաշտերից կը վանեն ճահճատենդը (մալարիան) և Կիլիկիային կը վերադարձնեն նրա նախկին փայլը:

Գալով Կիլիկիայի պատմութեանը՝ ես աւելի յարմար եմ նկատում վերաբողոքել G. Schlumberger-ի գեղեցիկ յօդւածը՝ «Հայերը միջին դարում», որ վերջերս լոյս տեսաւ Journal des Débats-ում: Մեծ շահեկանութեամբ է կարգացւում աւատեմեկոս-գիտնականի շատ հեղինակաւոր կարծիքը հայ ազգի մասին.

«Ձկայ մի ցեղ, որ աւելի վատ ճանաչւած լինի արեւմուտքում: Համարեա ամեն մի Ֆրանսիացու, նոյնիսկ զարգացած Ֆրանսիացու համար, խնդիրը պարզ է—հայերը դժբաղդ արեւելքիներ են, իրէաների նման առեւտրով են պարապւում արեւելքում, և թիւրքերը պարբերաբար ջարդում են նրանց:

Սրանով է սահմանափակւում հայերի մասին ասեն ծանօթութիւն: Պարիզում գուցէ յիսուն մարդ չկայ, բացի հայկական գաղութից, որ մի հատիկ բառ իմանայ այս ուշիմ, ճոխ բարեմասնութիւններով օժտւած ցեղի քաղաքացիական ու զինուորական փառու-

ւոր պատմութեան մասին: Հային միշտ տեսել են դուրերով թիւրքի և նրա արքանեակ վայրագ թիւրքի դաւադանի տակ կըած վիճակում: Ոչ որ չի անցկացնի մտքիցը, թէ դարեր շարունակ ամբողջ հայ ազգը զինւելով կրօնն ու հայրենիքը պաշտպանելու համար, իր ազգային թագաւորների, նախ Բագրատունիների և ապա Ռուբինեանների օրով անուագն երկու անգամ ամենաաքանչելի եռանդով կուել, հաղարաւոր ընդհարումներ է ունեցել քրիստոնէութեան անհղ թշնամիների—պարսիկների, մոնղոլների, թաթարների, սարակինոսների, թիւրքմէնների, արաբների և թիւրքերի դէմ: Մանաւանդ Ռուբինեանների օրով, խաչակիրների ժամանակ, Փոքր-Հայաստանի թագաւորութիւնն արեւելքի Ֆրանկ իշխանութիւններին, Անտիոքի իշխանին, Երուսաղէմի և Կիպրոսի թագաւորներին վիթխարի նեցուկ է հանդիսացել՝ Հալէպի, Դամասկոսի և Կահիրէի մահմեդական իշխանների դէմ նրանց մղած անվերջ կռիւներում: Ուրիշներին թողնելով պատմել զրպարտած հայ ազգի հոյակապ գործերի մասին՝ քաղաքակրթութեան, արեւստների և գրականութեան զանազան ասպարէզներում, ես կուզէի մի քանի խօսք տեսլ, թէ ինչ էին հայերը զինւորական տեսակէտով միջին դարերում: Նրանք, որ այսօր հռչակւած են իբր խաղաղ ու համակերպւող զոհերն ամենավայրագ բռնապետութեան:

«Հայաստանում առաջին քրիստոնէայ արքայական տունն էր Բագրատունեաց, այսինքն Բագրատի որդիների տունը: Սրանք իշխում էին Մեծ Հայքում, որ է իսկական Հայաստանում, որ տարածւում է Փոքր-Կովկասի և Տաւրոսի լեռնաշղթայի արեւելեան

մասի միջև: Բագրատունեաց հզօր թագաւորները մի քանի պատերազմներ ունեցան բիւզանդական կայսրերի, բայց աւելի յաճախ մահմեդական կամ մոնղոլ վեհապետների դէմ: Եղաւ մի ժամանակ, երբ նրանք իրենց հրամանատարութեան տակ ունէին առաջնակարգ զինւորական ոյժ: Այդ շրջանում նրանք մահմեդական կամ բարբարոս ազգերի յարձակումների դէմ պաշտպանում էին Ասիայում Բիւզանդական կայսրութեան արեւելեան սահմանները: Նրանց հոյակապ մայրաքաղաք Մանին, որի աւերակներն ես տեսել եմ քսան տարի առաջ, շրջապատւած յաղթաբերձ պարիսպներով, ունէր բազմաթիւ շքեղ շինութիւններ՝ վիմագիր արձանագրութիւններով, որոնք փորագրւած էին ամենագեղեցիկ կարմիր քարի վրայ: Դրանցից շատերն այսօր էլ կան այդ ողբերգական քաղաքում, Ախուրեան գետի խիստ ժայռոտ ափերին: Արքայական տունն ու մայրաքաղաքն ընկան XI դարում՝ ամենաքաջ դիմադրութիւն ցոյց տալուց յետոյ, սելջուկեան թիւրքերի ներխուժումների կրկնակի հարւածների տակ:

«Յետոյ, XII դարու մօտերը, հայ ազգի մի մասը փախչելով յաղթողի անհանդուրժելի տիրապետութիւնից, գաղթեց Տաւրոսի միւս կողմը՝ հին Կիլիկիա: Այս մեծ հաւաքածն էր, որ միջին դարում հիմնեց Փոքր-Հայաստանի քրիստոնէայ նշանաւոր թագաւորութիւնը, որի պատմութիւնն այդ ժամանակից սկսած սիրտօրէն կապւեց խաչակիրների պատմութեան հետ, քանի որ նա միաժամանակ հարեան էր Սիւրիայի բարիստոնէայ իշխանութիւններին, որոնք հաստատուել էին զինւորական այդ մեծ ներխուժումների առաջինից և Պոլսի ու Փոքր-Ասիայի վրայով Սիւրիա ուղղւող մեծ

արշաւանքների վերջին էտապից յետոյ:

«Այս փոքրիկ թագաւորութեան արեւելեան սահմանը խառնուում էր Ֆրանկ հողերի սահմանի հետ և տարածւում էր մինչև մի փոքր հեռու Օրոնտէի հովտից, այն ժամանակ արգասաբեր ու մարդաշատ, ուր գտնւում էր համանուն իշխանութեան մեծ քաղաքը՝ Անտիոքը, շրջապատւած բարձր ու շքեղ աշտարակների գօտիներով ու պարիսպներով: Շատ հետաքրքրական է պատմութիւնը հայկական այս թագաւորութեան, միջնադարեան այս փոքրիկ քրիստոնեայ երկրի, որ նախ սեղմւած էր Տաւրոսի անառիկ լեռնաշղթայի խոր ձորերում, յետոյ հետզհետէ տարածւեց մինչև Կիլիկիայի ծովածոցի ափը: Հայերն այս երկրում հաստատւեցին, ինչպէս ասացի, XI դարու վերջում և իբր տոկուն և ուժեղ ցեղ, անդադար կրօնեցին բոլոր աշխարհակալների—Սիւրիայի, Հալէպի և Եգիպտոսի սարակինոսների, ինչպէս և թաթարների դէմ, որոնք նրանց շրջապատում էին երկաթէ օղակով: Տեսանք, որ նրանց պետերն էին ազգային իշխաններ Ռուբինեանները, Ռուբէնի յաջորդները, որոնք նախ պարզ իշխաններ կամ քարոններ էին, ինչպէս անւանում են նրանց խաչակրութիւնների Ֆրանկ պատմագիրները. յետոյ իսկական թագաւորներ դարձան՝ օժտւած հոովմէական եկեղեցուց: Նրանց հպատակները, որոնք նախապէս բաղկացած էին լեռների մէջ պատասպարւած դղեակների շուրջը բոլորւած մի քանի գիւղերի բնակիչներից, շուտով ձեռք բերին այնպիսի հզօրութիւն, որ Սիւրիայում հաստատւած Ֆրանկ իշխանների համար օգտակար և հզօր օժանդակներ եղան:

«Իրենց հերթին մեծանալով ու զօրանալով բազմաթիւ խաչակիրների անակնկալ գալուստով՝ հայերը շատ անգամ նրանց վրայ յենեցին մահմեդական բանակներին ցոյց տւած իրենց յուսահատ դիմադրութեան ժամանակ: Յետոյ, երբ մեծ աղէտներ վրայ հասան սրբազան երկրին, և խաչակրութեան նախկին իշխանութիւնների անուններն իսկ անհետացան Պաղեստինից ու Սիւրիայից, Կիլիկիայի հայերն էլ մահացու հարւած կրելով այնքան աղէտներից, յաջորդաբար հարկատու եղան Կոնիայի սելջուկ սուլթաններին, թաթար խաներին և Կահիրէի մամլուք սուլթաններին: Նրանք մի տեսակ պաշտպանեալներն էին Կիպրոսի միւս լատին փառապանծ թագաւորութեան, որ արեւելքում այնպիսի արիութեամբ բարձրացրել էր Սալադինի և նրա յաջորդների յաղթանակներով Սիւրիայից վտարւած խաչի դրօշը: Լուսինեան տան իշխանները նոյնիսկ փոխարինեցին Ռուբինեաններին հայկական գահի վրայ: Վերջապէս ամեն ինչ կորուսեց Կիպրոսի Լուսինեանների, ինչպէս և Հայաստանի համար: Եգիպտական ներխուժումը, երբ Կահիրէ գերի տարւեց վերջին հայ թագաւորը, ձխացող մեհութեան փոխակերպեց Տաւրոսի կուսական սարալանջերն ու Ստորին-Կիլիկիայի դաշտերը:

«Հայ ազգի ամենամեծ մասը, բացի այն հայերից, որոնք մեծ զանգւածներ են կազմում Պոլսում և արեւելքի մի քանի խոշոր քաղաքներում, մինչև այժմ էլ գրաււում է արեւելեան Տաւրոսից հիւսիս գտնւող թիւրքական վիլայէթները, որոնք յայտնի են Մեծ-Հայք անունով: Բայց բազմաթիւ հայեր բնակւում են նաև Կիլիկիայի քաղաքներում, միևնոյն լեռնաշղթայից

հարաւ, որ կենդանի վկան է հրաշալիօրէն օժտւած այս ազգի արեւելքում ձեռք բերած կարեւոր դիրքի: Ամենքը յոյս ունեն, որ աղէտների և կոտորածների դարաշրջանը վերջապէս փակւած է նրա համար:

«Եւ չեմ կարող լռութեամբ անցնել, որ Բիւզանդիոնի ամենամեծ զինւորական կայսրերից շատերը հայկական ծագում են ունեցել: Բիւզանդական բանակի պատմութիւնը լի է հայազգի նշանաւոր զօրավարների անուններով: Կրկնում եմ, որ ես ուզում էի միայն մի քանի խօսք ասել հայ ազգի պատերազմական հնաւանդ արժանիքի մասին; և թէ ուրիշներին եմ թողնում ասել, որ այնքան փայլուն յատկութիւններով օժտւած այս ժողովուրդն ինչեք է արել ժամանակին՝ արեւստների և գրականութեան աշխարհում:

Փոքր-հայաստանի մայրաքաղաքը, Թագաւորանիստ Սիս քաղաքը, զետեղւած էր համանուն բարձրադիր հովտում. յաճախ Ռուբինեան իշխաններն այնտեղ քաշուցին, մինչ դաշտերի միջով անցնում էր մոնղոլական, արաբական կամ եգիպտական ներխուժման ալիքը, որ հոսում էր գալիս աւերիչ Միջին-Ասիայի բարձրաւանդակից և կամ Եփրատի ու Նեղոսի ամբերով: Հայաստանի այդ Թագաւորական դղեակներից մի ուրիշի մէջ է, ուր կատարւեց, 1374 թւակաւ, գերագոյն ակտն այն ողբերգութեան, որ վերջ տւեց այս քրիստոնեայ հերոսական Թագաւորութեան հոգեւորքին: Նրա բարձր պարիսպների յետև Հայաստանի վերջին Թագաւոր Լևոն VI պաշտպանւեց ինն ամիս՝ Կահիրէի սուլթան Մելիք-Աշրաֆ-Շաբանի եգիպտական ու եթովպական անհամար զօրքի դէմ: Ստիպւելով ծածկւած մնալ և սովի մահանելով՝ նա

տեսաւ, որ իր Թագաւորութիւնն ոչնչացւել է ամենաբոսկալի աւերածութեամբ: Նա երկար ժամանակ շղթայակապ մնաց Եգիպտոսում, Կահիրէի դղեակում և վերջապէս, Արագոնի և Կաստիլի վեհապետների միջնորդութեամբ, վերստացաւ իր ազատութիւնը: 8 տարւայ գերութիւնից յետոյ նա մեկնեց արեւմուտք, որպէս զի ինքն էլ աղերսէ կարեկցութիւնն Եկեղեցիի և Եւրոպայի Թագաւորների, որոնք ամենուրեք ընդունեցին նրան իր մեծ դժբախտութեան վայել յարգանքով: Նրա համար սկսւեց մէկն այն ողիսականներից, մէկն այն թափառաշրջիկ ու տարօրինակ կեանքերից, որոնց մասին միջին դարերի պատմութիւնն այնքան շատ ու հետաքրքրական օրինակներ է տալիս մեզ: Մերթ յուսալից, փայփայելով վերածնութեան ամենայնորական ծրագիրները, յետոյ ընկճւելով յուսահատութեան և գրեթէ կարիքի մէջ, ապրելով արեւմուտքի իշխանների նպաստներով, Լևոն VI յաջորդաբար բնակւեց Հռոմում, Մադրիդում, Լոնդոնում և Պարիզում, ուր և մեռաւ 1293 թւականի նոյեմ. 29-ին (16) Տուրնիի պալատում, Սէն-Պօլի ապարանքի դիմաց, որ Ֆրանսիայի Թագաւորների սովորական բնակավայրն էր: Նա Թաղւեց Կղեստինեան մատուռում, ուր և մնաց իր մարմինը մինչև յեղափոխութիւնը: Նրա աճիւնն այն ժամանակ ցրիւ տրւեց, ինչպէս շատ ուրիշներին: Նրա շիրիմը նախ փոխադրւեց Պոի-Օգիլստինների Ֆրանսիական յիշատակարանների թանգարանը. Restauration-ի ժամանակ դրւեց Սեն-Իրնիի արքայական դամբարանների մառաններում, ուր և պահւում է մինչև այժմ: Նրա վրայ կայ հետեւալ արձանագրութիւնը. Cy gist très noble et ex-

cellent prince Léon de Linsignan (փոխանակ Lusignan-ի) quint *) roy latin du royaume d'Arménie, qui rendit l'âme à Dieu à Paris le vingt-neuvième jour de novembre, l'an de grâce mil troys cent quatrevingt et treize **).

*
**

Հայերի արդարացի պահանջներին բաւարարելու համար առաջադրուող լուծումները միջև կան այնպիսիները, որոնք անշուշտ դժարութիւններ կը յարուցանեն հաշտութեան վեհաժողովի գումարման ժամանակ, եթէ հայերը ներկայացնեն այդ պահանջները: Բայց և կան այնպիսիները, որոնք ոչ մի փնտռանքով համաձայնութեան պետութիւններին և նոյնիսկ ծառայելով նրանց շահերին, անտարակոյս նպաստաւոր ընդունելութիւն կը գտնեն դիւանագիտութեան կողմից: Եւ կը բաւականանամ յիշել այդ կոմբինացիաներից դիւաւորները:

Տեսանք, որ հայերի ամենից աւելի փայփայած երազն է կազմել մի պետութիւն, որ պէտք է պարունակէ Թիւրքիայի վեց վիլայէթներն ու Կիլիկիան, որոնք իբր մի ամբողջութիւն, կունենան կատարեալ ինքնավարութիւն (աւտոնոմիա)՝ դաշնակիցների հաւաքական հովանաւորութեան տակ: Շատ հայեր իրականանալի են կարծում այս իդէալը՝ նկատի ունենա-

*) Մի քանի արքայական ցուցակներ Լեոն VI-ին տալիս են V Թաւադանը, որովհետեւ Լեոն II, որին հայերն անւանում են Լեոն Մեծ, փոքր Հայաստանի առաջին վեհապետն է, որ ստացաւ Թագաւորական տիտղոս:

**) G. Schlumberger, membre de l'Institut, «Les Arméniens au Moyen Age» (Journal des Débats, 10 mars 1916).

լով միայն իրենց ծայրայեղ տառապանքը, որ նրանք կրել են այդ արդար դատի համար, միայն այն անձնւորութիւնը, որով նրանք բոլոր բանակներում ծառայել են համաձայնութեան պետութիւնների յաջողութեանը: Դժբաղդաբար այդ տենչերը կատարելապէս յարգելի լինելով հանդերձ, իրագործելի չեն թւում մանաւանդ ներկայ հանգամանքներում: Եւ սակայն ինչ որ շատ անվիճելիօրէն յարգելի է այդ պահանջների մէջ, դա այն ցանկութիւնն է, որ պետութիւնները մի օջախ տան հայ ցեղին, մի դրօշ՝ նրանց ազգին—սա այնքան արդարացի է, որ իրօք դաժանութիւն կը լինէր շատ լուրջ ուշադրութեան չառնել այդ զգացումները:

Հնարաւորութիւնների սահմանում, հայերի ապագան պատկերանում է երկու կերպ—կամ ռուսախալկան մի գաւառ կազմել, լայն ազատութիւններով, մի յարաբերական աւտոնոմիա, և կամ կազմել անկախ պետութիւն, համաձայնութեան բոլոր պետութիւնների կամ մէկի հովանաւորութեան տակ, բայց կատարելապէս ազատ իր ներքին գործերում՝ ապաստանած իր սեփական դրօշի ծալքերի տակ: Մնում է որոշել այս պետութեան սահմանները, ինչպէս և Ռուսաստանի հովանաւորութեան տակ մտնող գաւառի սահմանները. բայց ոչինչ չէ կարելի ասել, թէ ինչ են լինելու ռուս պետութեան նոր սահմանները պատերազմից յետոյ, և թէ ինչ հատուցում են ստանալու Ասիական Թիւրքիայում Անգլիան, Ֆրանսիան և Իտալիան: Բայց և այնպէս հարաւային և արեւմտեան Հայաստանի հողերի զբաղումը ըստ երևոյթի համաձայնութեան ժողովուրդների բուռն ցանկութիւ-

նը չի կազմում: Ինչ էլ որ լինի, Փոքր Ասիայի ներք-
նամասում, Միջերկրական ծովի վրայ ելք ունեցող մի
հայկական պետութեան գոյութիւնը մեծ նեցուկ կը
հանդիսանար Ասիայի տակաւին խիստ բարբարոս
մնացած այս երկրում հերոսական ժողովուրդների
քաղաքակրթիչ ձիւղերի համար: Դա հնարաւորութիւն
կը ստեղծէր սանձահարելու ներսի թիւրք ժողովուր-
դը, որ բաժանելով զանազան ժողովուրդներին միջև,
հետզհետէ կը ստիպէր թողնել իր ռազմասէր հա-
կուսները: Օսմանցիները շատ աւելի սակաւաթիւ են,
քան հարաւային Ռուսաստանի թաթարները: Դժւար
չէր լինի նրանց զսպել և դարձնել խաղաղ հողա-
գործներ ու հովիւներ: Մի հայկական պետութեան
գոյութիւնը շատ մեծ չափով կը նպաստէր այս յեղա-
շրջման՝ անշատելով պարտած ցեղը և հետևաբար
նրան գրկելով վերստին կենտրոնանալու հնարաւորու-
թիւնից: Այս նոր պետութիւնը, որ պէտք է պարու-
նակէ Կիլիկիան, կը տարածէր դէպի հիւսիս-արևելք և
դէպի հիւսիս՝ մինչև Ռուսաստանի նոր սահմանները:
Անհրաժեշտօրէն նա պէտք է մտնէ համաձայնութեան
գոնէ մի մեծ պետութեան ազդեցութեան շրջանի մէջ,
և յանձնառութիւններով կապւած լինի իր հովանա-
ւորների հետ. բայց պայմանագրերը կարող են փոխա-
նակել առանց ֆիաս հասցնելու Նոր Հայաստանի ազ-
գային ազատութիւններին՝ հաշի առնելով ազգային
անկախութեան պահանջած նկատումները: Բիւզիան
հովանաւորւած է պետութիւններից, բայց զրանով ո-
չինչ չի կորցնում իր առանձնաշնորհումներից:

Եգիպտոսում, Տունիզում, Տրիպոլիում, Մարո-
կոում, Կամբոջում և շատ ուրիշ երկրներում, ուր բը-
նակում են այնպիսի ժողովուրդներ, որոնց զարգա-
ցումը բաւարար չէ, որ կարելի լինի նրանց բացար-
ձակ ազատութիւններ տալ, հերոսական հովանաւո-
րութիւնը անխուսափելիօրէն կը ստանայ կառավա-
րական ձև. այդ բանը չպէտք է լինի հայ ժողովուր-

դի նկատմամբ, որովհետև նա շատ զարգացած է ա-
մեն տեսակէտով էլ: Նրան պէտք է նոյնացնել եւրո-
պական փոքրիկ պետութիւնների հետ և վարել նոյն-
պիսի յարգանքով, Ինչպէս Բելգիայի, Սերբիայի և
Չերնոգորիայի հետ: Պարզ է, որ Հայաստանը պե-
տութեան վերածելը մի նոր ազգի արշալոյսը չէ, այլ
վերականգնումը նրա նախկին իրաւունքների, որոն-
ցից նա անարդարացիօրէն զրկւած էր բարբարոս
վայրագութեամբ: Երբեմնի հօր այս ժողովուրդը հը-
ռովմայեցիների, բիւզանդացիների և պարսիկների
հետ վարւում էր այնպէս, ինչպէս հաւասարը հաւա-
սարի հետ. ազատութիւն ստանալու համար նրա տը-
եալները համեմատելի են Լեհաստանի և Բոհեմիայի
տեալներին: Նրան չի կարելի նոյնացնել պատմու-
թիւն չունեցող այն համայնքների հետ, որոնք ապրում
են ցիրուցան վիճակում՝ թէ Եւրոպայում և թէ Ասիա-
յում,— դա կըլինէր նրան նսեմացնել քաքաքակիրթ
աշխարհի աչքում, իր խսկ աչքում:

Ինչ էլ լինի հաշտութեան վեհաժողովի ընդունե-
լիք ձևը թիւրքական հողերի բաժանման հարցում, հա-
ժողովուրդի աշխարհագրական ու քաղաքական վերա-
կանգնումը կը մնայ վերին աստիճանի արդար մի
գործ, որ պէտք է կատարեն հայերի պաշտպանները—
դա հատուցումն է, հնարաւոր սահմաններում, այն
նիւթական հսկայական ֆլասի, որ այդ ցեղին պատ-
հառել են իր հալածիչների հարստահարութիւնները:

Բոլոր շարժական կայքերը կողոպտւած, ցրիւ են
տըւած մարտիրոս ժողովուրդին քաղաքներից և գիւ-
ղերից տեղահանելուց յետոյ, և թիւրք, բիւրդ ու լազ
մահմեդականներն են տիրացել նրանց: Դա հասարա-
կական իրաւունքի դէմ մի այնպիսի յանցանք է, որ
պատժելի է լոյրը երկրների օրէնքներով: Բայց այդ
յանցանքներն այնքան բազմաթիւ են, որ համարեա
անկարելի կը լինի հետապնդել նրանց, բոլոր հեղի-
նակներին և հատուցում ստանալ: Այսու ամենայնիւ

պետութեանները պարտականութիւն պէտք է համարեն իրենց՝ գտնել յանցաւորներին և պատժել:

Ինչ վերաբերում է անշարժ կայքերին, հարցն աւելի հեշտ կը լուծւի: Ի՞նչ ևս կանգուն տներն ու հողերը պէտք է վերադարձին իրենց տէրերին և կ'սմ կոտորածներ ժամանակ մեռածների ժառանգորդներին:

Բանն այն է, որ այդպիսի հեկատոմբից յետոյ շատ ընտանիքներ բոլորովին անհետացել են, ուստի ոչ մի ազգական, նոյն իսկ հեռաւոր, չէ ներկայանալու ժառանգութիւնը պահանջելու համար: Այդ չպահանջւած ինչքերը, համաձայն օրէնքի, պէտք է դառնան այդ հողերին տիրող պետութեան սեփականութիւնը: Արդ, այդպիսի մի կարգադրութիւն աղաղակող անարդարութիւն կը լինէր հայ ազգի դէմ, որ իր անդամների աշխատանքովն ու խնայողութեամբը ձեռք է բերել այդ ինչքերը: Օրինաւոր է թուում այդ կայքերը թողնել հայերին, և կառավարել տալ հայերից կազմւած տեղական խորհուրդներով, հովանաւոր պետութիւնների հսկողութեան տակ, և այդ կայքերի հասոյթները յատկացնել թեթեւացնելու այն թշուառութիւնը, որի մէջ, գտնուում է ընտանիքների մեծագոյն մասը:

Պատեւադմբից յետոյ երկար տարիներ կարելի է մտածել այդ առկախ մնացած հարստութիւններ յարգարման մասին: Այդ յարգարումը տեղի կունենար շահագրգռւածների համար աղէտալի պայմաններում. այդ հողերը կարելի է վարձու տալ և հասոյթներով խնամել թշուառներին:

Այդ վերին աստիճանի արդար կարգադրութիւնները հնարաւորութիւն կը տային օգնութեան հասնել կոտորածներից վերապրողներին, որոնք մեծ մասամբ կիներ և երեխաներ են, և որոնք, եթէ նոյն իսկ ունեւոր լինեն, անկարող կը լինեն կառավարել իրենց ինչքերը: Կարեւոր կը լինի նրանց վրայ նշանակել ընդունակ վարիչներ, որպէսզի հոգ տանեն այդ կիների և փոքրահասակների գործերին՝ շատ լուրջ հսկողու-

թիւն կատարելով այդ պաշտօնեաների վրայ:

Մահից խուսափելու համար բազմաթիւ հայեր ժամանակաւորապէս իսլամացած են. բայց հէնց որ ապահովութիւնը վերահաստատւի, նրանք կը վերադառնան հայ ազգի ծոցը. այդ մասին տարակոյս չկայ: Սակայն, կիների ու երեխաների միջև կան շատերը, որոնք գնւած կամ բռնի ոյժով խլւած լինելով մահմեդականների կողմից, հակառակ իրենց կամքի ծածկւած են պահուում: Պէտք է ազատել դրանց և շատ խիստ պատիժների ենթարկել այն մահմեդականներին, որոնք կը մերժեն նրանց ազատ արձակել: Այդ կիներն ու երեխաները շատ հեշտութեամբ կը ձանաչեն, որովհետեւ հայերէն են խօսում, իսկ թուրքերը, քիւրդերն ու լազերը հայերէն չգիտեն:

Բազմաթիւ կիներ ու աղջիկներ իբր հարձ առնւած են բարբարոսների կողմից և աղատելի մայրացած վիճակում կը գտնւեն: Դա արգելք չպէտք է լինի ազատագրելու նրանց և նրանց երեխաներին: Այն ժամանակ անտէր մնացած կայքերում կը հաստատուեն անհրաժեշտ ապաստարաններ՝ այդ փոքրիկ էակների գոյութիւնն ապահովելու. նրանց համար կը ստեղծւի մի բարոյական դրութիւն, որպէս զի այն բռնաբարութիւնները, որոնց ծնունդն են նրանք, արատ չլինեն նրանց, ինչպէս և նրանց մայրերի համար:

Դիտելով յանցաւորների պատժելուն, արեւօք երբեք կը կատարւի այդ: Պէտք է կարծել, որ ոչ, որովհետեւ շատ բազմաթիւ են նրանք: Թիւրքիայի ոչ արար մահմեդականներին է, որ պէտք է պատժել իրենց ամբողջութեամբ մէջ վերցրած, ոչ թէ անհատական դատապարտութիւններով, այլ այդ մարդկանց դնելով աւելի ստորին մի վիճակի մէջ՝ բաղդատմամբ այն ժողովուրդներին, որոնց նրանք դարբերից ի վեր մարտիրոսագրել են: Թիւրքերի և քիւրդերի զինաթափումն այդ ցեղերի մէջ կը ցամաքեցնէ բռնութեան բնագոյնը և մի քանի սերունդներ կը բաւեն, որ Թիւրքիայի մահմեդականները, անհրաժեշտութիւնից

ստիպւած, դառնան այնպիսի խաղաղ մարդիկ, ինչպէս են հարաւային Ռուսաստանում, Եգիպտոսում և Հնդկաստանում ապրող մահմեդականները:

Այս ուսումնասիրութեան այն գլուխներում, ուր հարց է յարուցւում Ասիական-Թիւրքիայի անդամահատութեան շուրջը, ես խօսել եմ միայն հայ ազգի մասին, և միայն անցողակի յիշեցի օսմանեան հողի վրայ ապրող միւս ազգութիւնները—գիւրգիւնները, սիւրիացիները, քաղդէացիները, բապտիստները, հրէաները: Մոռացմամբ չէ, որ ես հրաժարւել եմ ի լոյս հանել այդ համայնքների արդար պահանջները, այլ նրա համար, որ այս ուսումնասիրութիւնը չէր կարող ընդգրկել Թիւրքիայի բոլոր ազգերին: Նրանցից մի քանիսը (հրէաները, բապտիստները, քաղդէացիները) չեն պահանջում ազգ կազմել. իսկ միւսների (գիւրգիւններ, սիւրիացիներ), որոնք երբէք քաղաքական միաւորներ չեն կազմած, ցանկութիւններն անշուշտ նկատի կառնեն պետութիւնների կողմից: Բայց դժուար է թւում տալ նրանց բացարձակ ինքնավարութիւն: Ես յաճախ Ֆրանսիան եմ վերցրել իբր բազմազանութեան օրինակ այն ժողովուրդների, որոնց միութիւնը կազմում է մեծ պետութիւնների մեծագոյն մասը: Մեր երկրների այդ այլացեղերի միջև կան շատերը, որոնց ազատութեան համար տւեալները աւելի շատ են, քան սիւրիացիներին ու գիւրգիւններին, և սակայն ընդհանուրի շահը պահանջում է, որ ազատութիւն տրւի նրանց միայն նահանգականութեան ձևով:

Թւում է, թէ մեծ հաշւեյարդարի օրը Սիւրիան, Քէօլէ-Սիւրիան և ուրիշ հողամասեր էլ կը դրւեն Ֆրանսիայի հովանաւորութեան տակ: Այս երկրամասում տարբեր ցեղերի պատկանող շատ ժողովուրդներ են ապրում. ամենքն էլ դեռ պահում են իրենց նախնիքների աւանդութիւնները. նրանց ոգևորում է ազատութեան մի վսեմ տենչ. խաչակրութիւնների շփոթ յիշողութիւնը նրանց մէջ մնում է այն ժամանակնե-

րից ի վեր, երբ քրիստոնեաները—կարող էին բարձր պահել իրենց գլուխը: Անտարակոյս Ֆրանսիան, հաւատարիմ իր վեհանձութեան դարաւոր սկզբունքներին, սիւրիացիների հետ չի վարւել իբր հպատակների հետ, այլ նրանց կը տայ այն ազատութիւնները որոնց նրանք կատարեալ արդարացիօրէն իրաւունք ունին—մի մեծ անկախութիւն: Սիւրիացիները սիրում են մեր երկիրը. դէպի մեզ է, որ դարերից ի վեր երկարում են իրենց աղերսող ձեռքերը և մեր եռագոյն դրօշը նրանց երևում է որպէս վերածնունդի խորհրդանշան: Մեր կառավարութեան մի ժեստը բաւական է, որ այդ ճնշւածների ողբերը, տրտունջները փոխակերպւեն երախտազիտութեան: Պիտի անենք այդ ժեստը, որովհետև Ֆրանսիան երբէք չի դադարիլ Ֆրանսիա լինելուց:

ԵԶՐԱՓԱԿՈՒՄՆԵՐ

Նախորդ էջերից պարզ երևում է ազգութեան բնոյթագիծը ճշդելու դժւարութիւնը: Գիտական բոլոր սահմանաւորումները, որ կարելի է տալ այդ մասին, թերի են, ինչ էլ որ ընդունենք իբր հիմք,—լեզուաբանութիւնը, ազգագրութիւնը, պատմական աւանդութիւնները, եթէ հաշւի առնենք նոյն իսկ տնտեսական և զինւորական շահերը: Ռժնանն այսպէս է բնոյթագրւածել ազգութիւնը. «Մարդկանց մի խումբ, որ ուզում է ազգ դառնալ»—շատ հանճարեղ բացատրութիւն, որ մատնանշում է նպատակը, բայց լռում է պատճառները, ծագման և իրաւունքների մասին: Ուստի պէտք է առանձնապէս ուսումնասիրել ազգ դառնալու պահանջ դնող ժողովուրդներից իւրաքանչիւրը, քննել ոչ միայն նրա տւեալները, այլ և կենսունակութեան այն պայմանները, որոնք կը յայտնաբերւէին նրա պետութիւն դառնալովը, որպէս զի ապագայում նա մտատանջութեան աղբիւր չը լինի իր հովանաւորողների համար:

Մի քանի ժողովուրդներ, ինչպէս չեխերը, ունեն պահանջւած բոլոր յատկութիւնները, և հողամասերը

նպաստաւոր են նրանց ինքնավարութեան վերականգ-
նման համար. ուրիշներ, ինչպէս հայերը, թոււմ է, որ
երկու մասի պէտք է բաժանուեն, մէկը Ռուսաստանի
տիրապետութեան տակ, միւսը կատարելապէս ազատ,
կամ մի քանի պետութիւնների հովանաւորութեամբ:
Վերջապէս մի շարք պետութիւններ դեռ անկատար են,
ինչպէս Ռումանիան, Բուլղարիան, Սերբիան, Դանիան և
սպասում են միացնել մինչև այժմ օտար տիրապետու-
թեան տակ պահւած իրենց եղբայրներին:

Փալով այն ժողովուրդներին, որոնք վերջին հա-
մաշխարհային պատերազմն արժարժեցու մեծ ոճիրը
գործեցին. նրանք արժանի չեն ոչ մի կարեկցութեան.
նրանք, ինչպէս հիւսիսի և հարաւի գերմանացիները
որոնք միևնոյն ազգութեանն են պատկանում, պէտք
է հաւասարապէս պատժեն, և յետագայում վնասելու
անկարող մի վիճակի վերածեն: Աւստրո-Հունգարիան
իր կազմութեամբն իսկ կոչւած է անհետանալու աշ-
խարհագրական քարտէզից՝ տեղի տալու համար իրենց
ազգային ձգտումների համաձայն ինքնորոշող ժողո-
վուրդներին: Ինչ վերաբերում է Թիւրքիային, նրա
ոճիրները դատապարտում են նրան քաղաքական անկ-
ման: Լեզաւրանական այս խմբակի շատ ներկայացու-
ցիչներ արդէն հպատակ են Ռուսաստանին կամ Պարս-
կաստանին: Այդ ցեղի վերջին միջուկը, որ անկախ է
մնացել, անարժան հանդիսացաւ ազատութեան, և այդ
ազատութիւնը պէտք է խլել նրա ձեռքից:

Ուրեմն մօտ է այն օրը, երբ արշալոյսը կը ծա-
գի նոր ազգերի, բարբարոսների լուծից ազատագրւած
նոր ժողովուրդների վրայ. դա եւրոպայի համար կը
լինի արդարութեան տիրապետութիւնը, և արդա-
րութեան հետ կը գայ նաև ամենքի ապահովութիւնը:
Եթէ գժւարութիւններ ծագեն, կը յարդարւեն Լանէյի
(Հաագի) միջազգային դատարանով: Ողորդաւորները
կը հապնեն իրենց խղճալին, որ ձեռք բերւած կը լինի
արդարաւոր տիրապետութիւնների մէջ ամենասոսկալին
եղող ներկայ պատերազմով:

ՀՀ Ազգային գրադարան



NL0200801

